




ԶՄԻԱԾԻՆ





ኮፔ

ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱՕՆԻ

ሆኖ ገረጸ-ጸጸ ገረጸ ገረጸ

1988





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին	8
Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետերի ժողով Ռոստովում	10
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ցավակցական հետագիրը Եթովպիայի Եկեղեցու Սուրբ Սիմոնի	18
Մայր Աթոռի Դիվանի Ծանուցումներ	17
ՄԱՅՐ ԱԹՈՒՌԻՄ—Եկեղեցական բեմ. լուրեր	18
Սովետական Միության խաղաղության կողմնակիցների հերթական հավաք Մոսկվայում	20
ՎԻԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԶԱԶՅԱՆ—Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Առաքելություն և ավետարանչությունը աշխարհում» համեմատողական հերթական մատուցումը	21
Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի համաժողովը	23
ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ	
ԱՄՆ-ի արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումարը և ՑՑ-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը	24
Սարկավազական ձեռնադրություն	26
Հոգևորականաց պատրաստություն իրաքահայ թեման ներս	27
Իրաքահայության առաջնորդի ընտրություն	28
Եգիպտոսի հայոց թեմում	29
Պ. ՀԱԿՈԲՅԱՆ—Կորած ու վերագտնված մի գլուխգործոց	30
ԱԲՐԱՀԱՄ ԱԲՂ. ՄԿՐՏՅԱՆ—Սյունյաց մետրոպոլիտական Աթոռը Օրենքադրության իշխանության ժամանակ	35
Լ. Հ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ—Ազաթանգեղոսի ասորական խմբագրությունը	44
ԱՐՄԻՆԵ ՔՑՈՐՆԵՐՅԱՆ—Գրիգոր Տաթևացու «Աաղմոսաց մեկնության» նորահայտ տարբերակը	55
ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ—Գրախոսություն	65
Ցուցակ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի	72
«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата	
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	78
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	79

ԽՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ


«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Redaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 7.04.1988 թ.: Ստորագրված է տպագրության 7.07.1988 թ.:

Տպագրական 5 մամուլ, թուղթ 60×84¹/₂, պատվեր 597


Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1988 թ.



ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱԾԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ Մ Ա Ս Ի Ն

Սույն թվականի փետրվարից մինչև հունիսի առաջին կեսը հայ ժողովուրդը Հայաստանում և այլուր ապրեց քաղաքական անճախադեպ կյանքով: Այդ քաղաքական կյանքի առաջըը Լեոնային Ղարաքաղն էր՝ պատմական Արցախ գավառը: Այսօր ավելի քան բացահայտ է, որ 1929—ից Ստալինի կամայականությամբ հայկական պապեմական այդ տարածքը դրվեց Ադրբեջանի իրավասության տակ: Պատմական այդ կոպիտ սխալը ուղղելու հույսով և վճռականությամբ էր, որ 1988 թ. փետրվարի 20-ին Լեոնային Ղարաքաղի դեպուտատների մարզային սովետը որոշում ընդունեց միանալու Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությանը, այսինքն մայր երկրի հետ՝ հայրենի ժողովրդին:

Ի հետևանս այդ որոշման, Հայաստանի բնակչությունը իր կողմնակցությունը հայտնեց՝ համերաշխական խաղաղ և կարգապահ ցույցերով: Ոչ մեկ հակասովետական արտահայտություն, ոչ մեկ հակասահմանադրական արարք, քոլոր կոչերը պահանջում էին Ղարաքաղի հայ բնակչության ինքնորոշման իրավունքի հաստատում՝ արդարամտության, մարդասիրության և սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրության մթնոլորտում:

Փետրվարի 25-ին Նորին Արքություն վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը հետևյալ հեռագիրը հղեց ՍՄԿՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովին՝ ի պաշտպանություն Ղարաքաղի դեպուտատների սովետի ընդունած որոշման.

ՍՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԻՆԱՅԻԼ ԳՈՐԲԱԶՈՎԻՆ

Մոսկվա

Վերջին օրերին Սովետական Հայաստանի քաղաքացիները, ի գլուխ ունենալով գիտնականներ, ակադեմիկոսներ, գրողներ, արվեստագետներ, ինստիտուտների ուսանողներ, բանվորներ և ծառայողներ, ավելի քան երկու հարյուր հազար քաղաքացիներ, ծանրորեն վրդովված, խաղաղ ցույց են կատարում Երևանում պահանջելով, որ Լեոնային Ղարաբաղի հարցը Հայաստանին միանալու, արդար և օրինավոր լուծում ստանա համաձայն Սովետական Միության Սահմանադրության մախառեսությունների ազգային ինքնորոշման իրավունքի վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, Ղարաբաղի մարզի ժողովրդական դեպուտատների սովետը 1888 թ. փետրվարի 20-ի նիստում, իր միաձայն որոշումով, իր կամքը արտահայտել է այդ իմաստով:

Այս օրերս Մենք բազմաթիվ մամուլներ, հեռագրեր ու հեռախոսներ ենք ստանում Հայաստանից, մանավանդ արտասահմանի մեր եպիսկոպոսներից և եկեղեցական ու մշակութային կազմակերպություններից, որոնք Սփյուռքի ավելի քան երկու միլիոն հայության անունով խնդրում են Մեր միջնորդությունը Սովետական Միության քարծր ղեկավարության առաջ, որպեսզի արդարացի լուծում ստանա Հայկական Ղարաբաղի հարցը համաձայն Սահմանադրության և համաձայն Ղարաբաղի ժողովրդական դեպուտատների սովետի որոշման ու դեմոկրատիայի սկզբունքների:

Ծանրորեն մտահոգված ենք ստեղծված տագնապալի կացության առաջ, մանավանդ որ լուրեր ենք ստացել, թե Ղարաբաղում եղել են մարդկային զոհեր և վնասվել են հայկական պատմական եկեղեցական հուշարձաններ:

Մեր ժողովուրդը և մենք բոլորս միշտ հավատարիմ Սովետական Միության ազդությունների եղբայրության և ողու ժողովրդի հանդեպ պատմականորեն նվիրագործված անխախտ բարեկամության հիմքերի վրա, խընդրում ենք Ձեր վճռական նպաստը բերել արդարացի որոշում տալուն ի խնդիր:

Այս առթիվ թույլ տվեք Մեր անձնական բարի գազցումները ներկայացնել Ձեզ և Ձեր գործակիցներին հաջողություն մաղթելով մեր մեծ երկրի վերակառուցման ու դեմոկրատացման մեծ ճիգերի նկատմամբ, որոնք կոչված են պատմական բարեշրջում իրագործել՝ ապահովելով առավել հզոր ու պայծառ ապագա Սովետական մեր մեծ Հայրենիքին:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

25 փետրվարի 1888 թ.

Նույն օրը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը համայն հայությանը ուղղված կոչով հանդես եկավ Երևանի հեռուստատեսությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՅՈՒՅՑԻՑ (25 փետրվարի 1988 թ.)

Հանուն Հայաստանյայց եկեղեցու ողջունում եմ ձեզ և բոլորիդ բերում իմ օրհնությունը Սուրբ Էջմիածնից:

Ծանրորեն մտահոգված եմ նաև ես և բաժանում եմ մեր ժողովրդի հուզումը Լեռնային Ղարաբաղի մարզը Սովետական Հայաստանին միացվելու հարցի կապակցությամբ:

Ես գտնում եմ այդ առաջադրանքը բնական և օրինական ու սահմանադրական, որով հավատում եմ, թե մեր օրերի վերականգնման և դեմոկրատիայի ոգով, Սովետական Միության բարձր իշխանությունները ամենայն կարեորությամբ կհանգեն մի արդար ու անկողմնակալ որոշման:

Այս օրերս ես բազմաթիվ հեռագրեր ու հեռախոսներ եմ ստանում նաև արտասահմանի մեր եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, որոնք Սփյուռքի ավելի քան երկու միլիոն հայության անունից խրհրում եմ իմ միջնորդությունը Սովետական Միության բարձր ղեկավարության առաջ, որպեսզի արդարացի լուծում ստանա Հայկական Ղարաբաղի հարցը, համաձայն Սովետական Միության Սահմանադրության, համաձայն Ղարաբաղի ժողովրդական ղեկավարների սովետի որոշման և համաձայն դեմոկրատիայի սկզբունքների:

Ընթացք տալով այս դիմումներին, ես արդեն իսկ մի բովանդակալից հեռագիր եմ ուղարկել մեր երկրի առաջին ղեկավար մեծահարգ տիար Միխայիլ Գորբաչովին, խնդրելով նրա վճռական նպաստը հօգուտ Ղարաբաղի հայ ազգաբնակչության նպաստման:

Հայ ժողովուրդը ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում, միշտ հավատարմորեն կանգնած է Սովետական Միության ազգությունների եղբայրության և ռուս ժողովրդի հանդեպ պատմականորեն նվիրագործված անխախտ բարեկամության հիմքերի վրա, իր հոգու հայացքը ուղղելով դեպի մեր երկրի բարձր իշխանությունները լավատես ապրումներով, մանավանդ որ հայտնի է ձեզ բոլորիդ մեր վերին իշխանության հավաստիացումը, թե շատ վոտ ապագայում, Մոսկվայում, բարձր մակարդակի վրա պետք է գումարվի հատուկ նիստ՝ քննարկելու և օրինավոր լուծում տալու Հայկական Ղարաբաղի հարցին Սովետական Միության մեջ ազգությունների ինքնորոշման իրավունքների հիման վրա:

Հարազատներ Մեր, ես այս օրերին գնահատել եմ ձեր հուզումը և համաժողովրդական արտահայտությունները: Արդեն ամեն ինչ ասված է և այժմ անհրաժեշտ է, որ լավատեսությամբ և հարգանքով մեր հայրենի պետական բարձր իշխանությանց հանդեպ, մնաք խաղաղ ու կարգապահ, լծված ձեր ամենօրյա աշխատանքներին և սպասեք առաջադրված հարցերի լուծման, պահպանելով մեր հավասարակշռությունը ու ողջմտությունը, նույն ինքը հօգուտ հարցերի բարվոք լուծման: Նման տագնապալի պահերին անհրաժեշտ է ցուցաբերել արտակարգ լրջություն և հեռատեսություն, աչքի յույսի պես պահպանելով հայ-ադրբեջանական ժողովուրդ-

մերի եղբայրության հրամայականը, որպեսզի կանխվեն ազգամիջյան ցավալի անախորժությունները Հայաստանում և թե Ադրբեջանում: Վստահ եղեք, այս է պատգամը մահ Սփյուռքի ձեր հայ եղբայրների ու քույրերի՝ ուղղված ձեզ:

Այսպես արդար գործի հաջող ընթացքը կարող է խանգարվել և չմախատեալան բարդությունների առաջ կանգնեցնել մեզ: Մեր բոլորիս նպատակը պետք է լինի ոչ թե ձախդեցնել, այլ հաջողությամբ պսակել արդարությունը:

Ուշադրություն, ուշադրություն. զգուշ եղեք:

Լսեցեք իմ ձայնը. լսեցեք իմ հայրական հորդորը:

Մեր հայրենիքի ու ազգի առաջ պատասխանատվության խոր գզացումով, իբրև Հայրապետ Ամենայն Հայոց, ես կոչ եմ անում ձեզ բոլորիդ Մտքը Ավետարանի պատգամով՝ «Խաղաղութիւն հեռաւորաց, խաղաղութիւն մերձաւորաց, խաղաղութիւն ամենեցուն»:

Փետրվարի 28-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում ընդունեց ՍՄԿԿ Կենտկոմի քաղաքականության թեկնածու Վ. Դուդինիև և Կենտկոմի քարտուղար Ա. Լուկինովին, որոնք այդ բոլոր օրերին գտնվում էին Երևանում: Տեսակցության ընթացքում ուշադրության առնվեցին Ղարաբաղում ստեղծված կացության պատճառները՝ ազգային, տնտեսական և մշակութային: Հայոց Հայրապետը նշեց, որ Ղարաբաղի հարցը անհրաժեշտ է, որ արդար լուծում գտնի խաղաղ ճանապարհով, հայ և ադրբեջանցի ժողովուրդների փոխադարձ համակացողությամբ, օրինակացության և սահմանադրական հիմքի վրա:

Տեսակցությանը ներկա էին նաև ՀՍՍՀ Միջխտրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ՀՍՍՀ Միջխտրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանն ու տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը:

Ստացվեց Սումգայիթի ողբերգության գույժը: Հայ ժողովուրդը շատ ծանր տարավ այդ կոտորածը, բայց չկորցրեց իր ոգու արիությունը, չգործեց «ատամն ընդ ատաման» սկզբունքով, չնույնացրեց ջարդարար ամբոխն ու ադրբեջանցի ժողովուրդը:

Կիրակի, մարտի 13-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Մայր տաճարում տեղի ունեցավ հոգեհամգիստ՝ Սումգայիթի անմեղ գոհների հիշատակին, որ Հայոց Հայրապետը հանդես եկավ հետևյալ սրտահույզ քարոզով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա-Ի
ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ
ՏԱԺԱՐՈՒՄ, ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԶՈՂԵՐԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՌԹԻՎ
(Կիրակի, 13 մարտ 1988 թ.)

Տեր Աստված մեր «Հոգւոց հանգուցելոց արա հանգիստ և ողորմութիւն»:

Սիրելի սգակիր ժողովուրդ,

Այսօր հավաքվել ենք ամենայն հայոց այս սուրբ տաճարի կամարների ներքև, աղոթելու մեր ժողովրդի գավակների հոգիների համար, որոնք վերջերս զոհվել են Ադրբեջանի Հանրապետության Սումգայիթ քաղաքում, ողբերգական պայմաններում:

Մեր հոգևոր պարտականությունն ենք նկատում ոգեկոչել նրանց բոլորի հիշատակը և աղոթել, որ Տերը քաղցրությամբ ընդունի նրանց արդար հոգիները և արժանի անի հավերժական խաղաղության կյանքին:

Մենք ողբում ենք մահը բոլոր զոհյալների, անպաշտպան խաղաղ բնակիչներ, աշխատավոր մարդիկ, նաև կանայք և երեխաներ, անսպասելի կերպով մութ գիշերին ենթարկված հարձակումների ու խոշտանգումների:

Ինչքան տխուր է հաստատել, թե մեր օրերում, մեր հասարակարգում հնարավոր են դարձել նման ողբալի երևույթներ, ազգամիջյան այս աստիճան թշնամանքներ և հավաքական սպառնություններ: Մեր ժողովրդի տառապանքի երգիչ-բանաստեղծը պետք է ասեր՝ «Վերստին կանգնած ենք մեր ժանիքավոր ճակատագրի առաջ՝ ճակատ առ ճակատ»:

Մենք վստահ ենք, թե պատկան պետական իշխանությունները Ադրբեջանում, օրինական միջոցների դիմելով, առաջքը կառնեն նման դժբախտությունների և հետ այսու կապահովեն խաղաղ համակեցությունը երկրի բոլոր քաղաքացիների, բոլոր ազգությունների հավասարապես:

Նաև մեր Եկեղեցու պարտքն ենք նկատում կոչ ուղղել բոլորին՝ թե՛ հայերին, թե՛ ադրբեջանցի մեր եղբայրներին, որ ինչպես Մենք արտահայտվեցինք փետրվարի 25-ին հեռուստացույցից Մեր ելույթում, աչքի լույսի պես պահպանեն եղբայրությունը Անդրկովկասի բոլոր ազգությունների, ի մասնավորի ադրբեջանցիների և հայերի միջև:

Մաղթենք, որ տարբեր հարցերը, որոնք դրվում են մեր ժողովուրդների առջև, լուծվեն բարեկամական մթնոլորտում, եղբայրական փոխըմբռնման ոգով, օրինականության ու արդարության լույսի ներքո:

Սովետական բազմազգ մեծ հայրենիքը, հիմնված իսկ է ազգությունների միության դաշինքի և համերաշխ եղբայրության ու գործակցության վրա:

Հայ ժողովուրդը վստահ ենք, թե խորապես գիտակցում է այդ ճշմարտությունը և մնում է հավատարիմ սովետական ժողովուրդների եղբայրության հրամայականին, սպասումով, որ այն յինի ոչ թե լոկ վերացական սկզբունք, աղ իրապես, արդարորեն կյանքի կոչվի ամենուրեք: Մանավանդ Անդրկովկասում վրացիները, ադրբեջանցիները և հայերը դարերից ի վեր ապրում են կողք-կողքի, գրեթե գրկախառնված: Այսպես, պատմության և ճակատագրի բերումով Հայաստանում ապրում են շուրջ երկու հարյուր

հազար աղքեղանցիներ, իսկ Ադրբեջանի Հանրապետություն՝ գրեթե եռապատիկ թվով հայեր՝ հաքվում, կիրովարաղում, Ղարաբաղում և այլ շրջաններում:

Այս իրողությունը թելադրում է մեզ բոլորիս, ուղիղ ու արդար հասկանալ ազգամիջյան բարեկամության կամ ինչպես ընդունված է այստեղ ասել՝ ինտերմացիոնալ ոգին, ու այն վերածել կենդանի ապրումի բոլոր սրտերում և կենդանի իրականության մեր երկրներում, մեր ազգերի հարաբերությունների մեջ:

Կանգնած Սումգայիթի ամենի զոհերի հիշատակի առաջ, մի անգամ ևս հաստատենք այս ճշմարտությունները և ուխտենք հավատարիմ մնալ մեր ժողովուրդների եղբայրության ու խաղաղ գործակցության սկզբունքներին, Մովսեսիան Միության բոլոր եղբայր ազգությունների մեծ ու անբաժան ընտանիքում:

Մենք Անդրկովկասի երեք ազգություններս, երբեք չպիտի բաժանվենք իրարից, երբեք չպիտի բաժանվենք երեքս՝ ոռոս ժողովուրդից:

Իսկ այժմ, սիրելի սգակիր քույրեր և եղբայրներ, թող մեր աղոթքները որպես խունկ ուղիղ բարձրանան դեպի երկինք, ու Սումգայիթի զոհյալների հոգիները գտնեն հանգիստ ու խաղաղություն լուսո աշխարհի հեռուներում:

Թող բարաց Գարգևատուն միշտ պահապան մնա մեր Եկեղեցուն և մեր հավատավոր ժողովուրդին ու միշտ ամփոռձ և անվտանգ պահպանի նրանց երեւի և աներույթ չարիքներից:

Մեր ցավակցություններն ենք բերում բոլոր սգակիր հարազատներին, Մեր վշտակցությունը համայն մեր հավատացյալ ժողովուրդին, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Այո, Մենք մեր վշտակցությունն ենք հայտնում նաև արսասահմանում ապրող երկու միլիոն Մեր հոգևոր զավակներին, որովհետև, այս տխուր օրերին, Մեզ համար անհուն մխիթարանք եղավ ստանալ բազում ցավակցական նամակներ, հեռագրեր և հեռախոսներ, ոյրով Սփյուռքում ապրող ձեր քույրերն ու եղբայրները բաժանում էին Հայաստանի վիշտն ու հոգեկան ծանր տագնապը, որով մի անգամ ևս Մենք զգացինք ջերմապես, թե մեկ ու անբաժան է Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը՝ իր հոգով, իր ցավերով, իր ճակատագրով, իր վերածնված հարազատ Մայր Հայրենիքով:

Օրհնություն Սումգայիթի զոհյալների հիշատակին:

Օրհնություն համայն հայ ժողովուրդին:

«Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաղիսենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս բարութեան» (Բ Թեաղ. Բ 15—16): Ամեն:

Մարտի 12-ին Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռում ընդունեց այցելությունը Բաքվի Ծելիս-Ուլ-Իսլամ խաջի Ալլահշուքուր Փաշա-Ջադեի երկու ներկայացուցիչների, որոնք Ս. Էջմիածին էին եկել Ամենայն Հայոց Հայրապետին հանձնելու իրենց կրոնապետի ուղերձը:

Զրույցին ներկա էին Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ստեփան Վարդանյանն ու տեղակալ Ռաֆիկ Զարգարյանը:

Մարտի 14-ին Նորին Արքությունը պատասխան նամակ ուղարկեց Բաքվի Ծելիս-Ուլ-Իսլամի ուղերձին՝ վստահություն հայտնելով, որ Հայոց Հայրապետը կշարունակի ի գործ դնել իր ճիգերը՝ ի խաղաղեցումն ստեղծված տագնապալի կացության և ի ամրապնդումն հայ և ադրբեջանցի ժողովուրդների բարեկամության ու համերաշխ գոյակցության:

Վեհափառ Հայրապետը այս դեպքերի առիթով բազմաթիվ հեռագրեր է ստացել քրիստոնեական եկեղեցական կենտրոններից և անվանի անհատներից, որոնք իրենց ցավակցությունն են հայտնում մանավանդ Սումգայիթի տխուր դեպքերի կապակցությամբ:





ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿՐՈՆԱՊԵՏԵՐԻ ԺՈՂՈՎ ՌՈՍՏՈՎՈՒՄ

Մայիսի 2-ին Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետերի ժողովին մասնակցելու համար Ռոստով-Դոն քաղաք ժամանեց Ամենայն Հայոց Հայրապետը իր ջրախմբի անդամներ՝ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Ծաքարյանի և Ս. Հոփիսիմե վանքի վաճառայր Տ. Պարզև վրդ. Մարտիրոսյանի հետ: Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետերի հավաքը հրավիրված էր Ռուս Եկեղեցու կողմից: Ռուս Ուղղափառ Եկեղեցին ներկայացնում էր Ռոստովի և Նովոչերկասկի միտրոպոլիտ Վլադիմիրը:

Մայիսի 3-ին, առավոտյան, Վեհափառ Հայրապետը այցելեց Ռոստովի և Չուդրի հայոց եկեղեցիներ, որտեղ հանդիպում ունեցավ հայ վատաքյալների հետ՝ տալով նրանց իր հայրապետական օրհնությունը:

Նույն օրը, ժամը 14-ին, Վեհափառին այցելեց միտրոպոլիտ Վլադիմիրը՝ հրավիրելով Նորին Սուրբ Օծույթյանը այցելելու Ռոստովի և Նովոչերկասկի Մայր տաճարները: Նովոչերկասկում Վեհափառ Հայրապետին հրավիրեցին այցելելու նաև քաղաքի Պատմական թանգարան:

Երեկոյան միտրոպոլիտ Վլադիմիրը, ի պատիվ այդ ժողովին ժամանած կրոնապետերի, ընթրիք տվեց առաջնորդարանում, որին ներկա էին Վեհափառ Հայրապետը՝ իր ջրախմբի անդամներով, Վրաց Իլիա Բ կաթողիկոսը, Բաքվից ժամանած Ծեյխ-Ուլ-Իսլամ Փաշա-Ջադեմ, Հյուսիսային Կովկասի սյունների կրոնապետ Մուֆթի Գեկկիևը, Համամիութենական ավետարանական քաբտիստների խորհրդի նախագահ Լոգվինենկոն, միտրոպոլիտ Վլադիմիրը, ՍԱՀՄ Միցիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ պարոն Խարչևը, իր հետ ժամանած կրոնական գործերի խորհրդի պաշտոնյաներ՝ Ս. Ս. Կուզնեցովը և Ա. Բ.

կազակոյվը: Ներկա էին նաև Ռոստովի մարզկոմի երկրորդ քարտուղար պարոն Բոկուլը, Ռոստով քաղաքի կրոնական գործերի լիազոր կալգանովը:

Մայիսի 4-ին «Ինտուրիստ» հյուրանոցի կոնֆերենս-դահլիճում տեղի ունեցավ կրոնապետների ժողովը, որը բացեց պարոն Խարչևը: Ապա հետևյալ ճառով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Սիրեցյալ հոգևոր եղբայրներ,

Ես շատ գոհ եմ, որ գտնվում եմ վերստին ձեր մեջ, բերելու Հայ Առաքելական Եկեղեցու ողջույնը ձեզ բոլորիդ, որ ներկայացնում եք եկեղեցական և կրոնական կազմակերպությունները Սովետական Միության մեջ:

Ինչպես միշտ մեզ առիթներով, մենք հավաքվել ենք մի անգամ ևս խոստովանելու մեր հավատամքը, ի խնդիր խաղաղության և ժողովուրդների բարեկամության մեծ գաղափարների կենսագործման, համաշխարհային աշխարհում:

Կարծում եմ, բոլորիս համար կրոնական սրբազան պարսպանություն է՝ մեր խաղաղարար աղոթքը, խոսքը բերելու մեր օրերի մարդկության, այսօր, երբ աշխարհի վրա տալիքներ շրջաններում շարունակում են մնալ այնքան տագնապալի կացություններ, այնքան ամարդարություններ, այնքան տառապանքներ, այնքան ազգամիջյան թշնամանքներ ու տեղ-տեղ պատերազմական արյունալի գործողություններ:

Մխիթարություն է մեզ բոլորիս համար, որ մեր սովետական երկրում ապրում և աշխատում են մեր ժողովուրդները, մեր հավատացյալները, խաղաղ ու հաշտարխ գործակցության պայմաններում, մեր պետության խաղաղասեր միջազգային քաղաքականության մթնոլորտում, քաղաքականություն, որ մեզ հոգևորականներիս համար քաջալերանք է և ներշնչանքի աղբյուր:

Մենք պիտի շարունակենք նաև հետ այսու նույն հավատքով և նույն ապագայի սպասումներով, մեր պարտքը կատարել, միջազգային կյանքի հորիզոնի վրա մեր խոսքը բարձր հնչեցնելու ի նպաստ մի աշխարհի կառուցման՝ առանց սրի և առանց հրի, առանց ատոմական սպառնալիքների, առանց պատերազմական սպառնալիքների:

Եթե հեռավոր անցյալում, կրոնական հավատալիքների տարբերությունները դարձել են պատճառներ՝ ժողովուրդների փոխադարձ անհամդուր ժողովուրդների և թշնամանքների, դա իմ կարծիքով շեղում է եղել իսկական կրոնական ոգուց և հետևանք ոչ կրոնական ազդակների, որոնց մասին խոսելը այստեղ իմաստ չունի:

Այսօր մենք բոլորս հեռու ենք կանգնած մեզան իրավիճակներից, մեզան ոգուց:

Մենք, սովետական իրավակարգի տակ գործող եկեղեցիներիս և կրոնական կազմակերպություններիս համար, մեր կրոնական հավատալիքների և ուսմունքների միջև գոյություն ունեցող տարբերությունները չենք նկատում մեզ բաժանող, մեզ հակադրող ազդակներ: Մեզանից ամեն մեկը, պահպանելով հանդերձ իր կրոնական հավատամքը և իր հոգևոր

ազանդությունները, հարգում և զնահատում է իր քույր Եկեղեցու և կրոնական կազմակերպությունների հոգևոր բարոյական արժեքները:

Մեր ըմբռնողով պատմականորեն ծնունդ առած ու զարգացած կրոնները, իրենց միջև եղած տարբերություններով իրար հարստացնում են, պայմանավ անշուշտ, որ նրանք հեռու մնան մոլեռանդություններից և այլաբնույթներից: Չիմենք որայն սեկ գրքի մարդիկ: Ես քրիստոնյա եմ և իմ Սուրբ Գիրքը Քրիստոսի Ավետարանն է, սակայն ես շահեկանությամբ եմ կարդում նաև Թալմուդից և Դորաւից ու գտնում եմ այստեղ զնահատանքի արժանի գաղափարներ:

Նույն խոհերը ես կուզեի այստեղ բերել նաև մշակութային կյանքի վերաբերյալ: Մենք տարբեր Եկեղեցիներու և կրոնական կազմակերպություններս, զանազանվում ենք մեկս մյուսից ոչ միայն մեր կրոնական ուսմունքներով, այլ նաև ազգային-մշակութային արժեքներով: Մենք տարբերվում ենք իրարից մեր պատմական ժառանգություններով և ազգային լեզուներով, մեր ազգային մշակույթներով, մեր ազգային հոգեբանությամբ:

Ազգերի մշակույթները, մեկը մյուսին անհաղորդ նկատել կամ մեկը մյուսին հակադրել, կամ ժխտել իրավունքը ամեն մի ազգի մշակույթի գոյության ու զարգացման, դա պիտի լիներ պարզապես տգիտություն և հետադիմություն: Ինչքան անհրապույր պիտի լիներ այս ուշխարհը, եթե բոլոր մարդիկ նույն լեզվով խոսեին, նույն ծայնով աղոթեին, նույն երգերը երգեին, եթե մեկ ու միօրինակ մշակույթ ունենային, եթե մեկ հոտ և մեկ հովիվ լինեին:

Իրականությունը այն է, որ ազգային լեզուներն ու մշակույթները իրար հարստացնում են, իրար ամբողջացնում են, իրար իմաստավորում են:

Ահավասիկ իմ կարծիքով կրոնական և մշակութային հիմքերը այն հասկացության, որ մեր երկրում կոչվում է Ինտերնացիոնալիզմ, կամ ինտերնացիոնալ ոգի, որ ամուր հիմքերից մեկն է մեր սովետական մեծ երկրի, իր կազմավորման իսկ օրերից սկսյալ իբրև ազատագրված ազգությունների եղբայրության մի ամրակուտ դաշինք: Կկանենայի այստեղ նաև հաստատել, թե ինտերնացիոնալ ոգին շատ հալազատ է մեզ քրիստոնյաներիս: Փուցե ուղիղ կշիռներ հիշել, որ պատմության բեմի վրա առաջին ինտերնացիոնալ զաղափարի փառաբանողը դա Քրիստոսի Ավետարանն է եղել և Ս. Պողոս առաքյալի ուսմունքը:

Ինտերնացիոնալ ոգի նշանակում է Սովետական Միության ազգային Հանրապետությունների և ամեն մի Հանրապետության տարածքի վրա բնակվող ազգությունների միջև խաղաղ գոյակցություն և գործակցություն, նշանակում է, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային ինքնությունը և արժանապատվությունը, որ ամեն ազգություն հարգի մյուսի ազգային լեզուն ու մշակույթը, որ ամեն ազգություն հարգի մյուսի կրոնական հավատը:

Ինտերնացիոնալիզմը չոկ վերացական գաղափար չէ, այլ անկեղծ ապրում ամեն մի սովետական քաղաքացու սրտում և կենդանի հավաքական գիտակցություն, արտահայտված հասարակական կյանքում, իրավապես և գործնապես, համաձայն մեր երկրի օրենսդրական նախատեսությունների: Այլապես ինտերնացիոնալիզմի մարդասիրական մեծ գաղափարը կարող է վերածվել պատրանքի և խաբկանքի: Ես համոզված եմ, որ եթե վերջին երեսուն տարիներին իրապես պահպանվեր լեմինյան ին-

տերնացիոնալ ոգին հայերի հանդեպ, մեզ կխնայվեին Լեոնային Ղարաբաղի տազնապը և Սուվգայիթի ողբերգությունը:

Մենք սովետական ժողովուրդներս, մանավանդ մենք դրացի ժողովուրդներս, պետք է ավելի սովորենք միատեղ ապրել, միատեղ քաջել, միատեղ աշխատել, միատեղ տխրել և միատեղ ուրախանալ:

Կրոնական և ազգայնական մոլեռանդություններն ու հակակրոնությունները, մեկը մյուսի ազգային-մշակութային ինքնությունը ժխտելու ձգտումները, դեպի ֆաշիզմ տանող ճանապարհն է, մի սև ճանապարհ, որից հենուկ ենք անշուշտ բոլորս:

Իմ խոսքը մասնավորելով անդրկովկասյան ժողովուրդներին, կուզենայի այստեղ սրտանց հաստատել, թե հատկապես հայ և ադրբեջանցի ու վրացի դրացի ազգություններն կոչված ենք միատեղ ապրելու խաղաղ ու համերաշխ, փոխադարձ հարգանքով, միշտ կողք-կողքի երբեք իրարից անբաժան և երեքս երբեք անբաժան ռուս մեծ եղբայր ժողովրդից: Դա հրամայականն է մեր պատմության և մեր նույնատարի:

Սովետական Միությունը իր սահմանադրական կառուցվածքով, բազմաթիվ ազգությունների, բազմաթիվ մշակույթների, բազմաթիվ կրոնական հավատալիքների մի եղբայրություն է, մի սիմֆոնիա է: Եկեք ձեռք-ձեռքի տված մենք հոգևորական գործիչներս ևս նպաստենք, որ այդ սիմֆոնիան, սովետական հոսանքից մի սիմֆոնիա: աշխարհով մեկ հնչի ավելի ներդաշնակ, ավելի բազմերանգ, ավելի հզոր:

Այս թող լինի նաև մեր բոլորիս նպատակը, կյանքի կոչելու համար հեղափոխիչ այն մեծ գործը, որ մեր օրերին կոչվում է վերակառուցման և դեմոկրատիայի գործ:

Իմ խոսքը վերջացնում եմ Սուրբ Գրիգոր Նազիազանցու (հեղինակ 4-րդ դարի) «Փախուստ ի Պոնտոս» նշանավոր գրությունից, որ կարող է ծառայել իբրև հարազատ արտահայտությունը մարդասիրական բարոյական ոգու՝

«Մեր նմաններին, ոմանց նկատում ենք բարի, ոմանց չար, ոչ համաձայն նրանց կյանքի գործերի, այլ մայած թե նրանք մեզ բարեկամ են, թե հակառակորդ: Եվ ինչ որ դատապարտելի ենք գտնում ուրիշների համար, հիանալի ենք գտնում մեզ համար» (Փախուստ 80):

Աստված խաղաղության և սիրո եղիցի ընդ ձեզ. ամեն:

Այնուհետև խոսեցին բոլոր կրոնապետերը:

Ժողովի վերջում որոշվեց բոլորի համաձայնությամբ մի կոչ ուղղել Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի հավատացյալներին:

ՈՒՂԵՐԶ

ԱՆԳՐԿՈՎԿԱՍԻ ԵՎ ՀՅՈՒՄԻՅԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ

Միտեցյալ եղբայրներ և քույրեր,

Աստուծո ողորմությամբ մենք՝ ներքո ստորագրյալ հոգևորականներս, որ ներկայացնում ենք Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի քրիստոնեական Եկեղեցիները և մահմեդական կրոնական կազմակերպությունները, հավաքվել ենք մի այնպիսի ժամանակ, երբ մեր հայրենիքը ապ-

րում է բարեստեղծ փոփոխությունների ու հասարակության բարոյական նորոգման շրջան: Ղա խորհրդանշան է հանդիսանում վերջերս տեղի ունեցած հանդիպումը ՍՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի և Մոսկվայի ու համայն Ռուսիայի Պիմեն Պատրիարքի և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Սինոդի անդամների միջև: Մենք ամբողջությամբ մեր հավանությունն ենք տալիս այդ հանդիպման ընթացքում արտահայտված գաղափարներին և դրույթներին:

Հանդիպման ընթացքում ընդգծվել է, որ վերակառուցումը, դեմոկրատացումը, հրապարակայնությունը, առանց որևէ սահմանափակումների, վերաբերվում են ման հավատացյալ քաղաքացիներին: Հասկապես վերաբերվում է բարոյական ոլորտին, որտեղ համամարդկային նորմաներն ու սովորությունները կարող են նպաստել մեր ընդհանուր գործին: Աղոթքով և գործով մենք պետք է օգնենք վերակառուցմանը:

Պատգամներից մեկը, որոնք կտակել է մեզ Ամենաբարձրայլը, և որոնք մենք կրում ենք մեր սրտերում, ժողովուրդների անքակտելի եղբայրությունն է: Մարդու կոչումն իսկ է ապրել խաղաղությամբ և հաշտությամբ, եղբայրաբար կիսելով ամեն ուրախություն և վիշտ: Ահա թե ինչու մեր մտքերն ու սրտերը չէին կարող չմթազմվել ծանոթ տխուր դեպքերի պատճառով, որոնք տեղի ունեցան վերջերս մեր ռեզիդենտ: Դրանք խիստ փորձության ենթարկվեցին հայերի ու ադրբեջանցիների պատմական բարեկամության ամրությունը: Այն օրերին մենք առանձնահատուկ սրությամբ ու գթասրտությամբ գիտակցեցինք այդ բարեկամության կենսական կարևոր նշանակությունը, աչքի լույսի պես այն պահպանելու անհրաժեշտությունը:

Մենք բարոյական պարտականություն ենք ընդունում մեզ վրա՝ միասնաբար աշխատել հանուն եղբայրության ամրապնդման և փոխըմբռնման, համաձայն Մ. Ս. Գորբաչովի ուղերձի ոգու՝ հասցեագրված Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդներին: Ուղերձի առկա կոչերը՝ պաշտպանել սովետական ժողովուրդների եղբայրությունը, ամսասան հավատքը, որ միայն միասնությամբ կարելի է ապահովել մեր հասարակության զարգացումը և հասնել նորոգման մեծ խնդիրների հաջող իրականացմանը, խորապես ներդաշնակ են հավատացյալների սպասումներին, ուղջ սովետական ժողովրդին, որն ունի մի ընդհանուր պատմություն, մի հայրենիք, և մի ապագա:

Դրա գիտակցումը վառ կերպով դրսևորվեց մեր այս եղբայրական հանդիպման ընթացքում: Մենք միասնական ենք այն բանում, որ բարեկամության ձգտումը, սերը մերձավորի հանդեպ ամեն մեկի սրտի և խղճի անբաժանելի մասն է: Մենք խորապես համոզված ենք, որ մեր ժողովուրդների ճանապարհը մեկ է: Դա միասնաբար ապրելու ճանապարհն է սովետական միասնական ընտանիքի մեջ, փոխվստահության և եղբայրության պայմաններում:

Միրեցյալ եղբայրներ և քույրեր,

Հանուն մեր սրբազան իդեալների, հանուն սիրո՝ մեր հայրենիքի նկատմամբ, եղբայրական սիրո ու փոխադարձ ըմբռնման կոչ ենք անում ձեզ և բոլոր նրանց, ովքեր թանկ են զմահատում իրենց երեխաների երջանկությունը, հաղազատ օջախի բարօրությունը:

Թող այն մտքերը, զգացումներն ու սպասումները, որ մենք արտահայտեցինք այս հանդիպման ժամանակ, իրականացան մեր կրոնական և



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻՆ

ԵԹՈՎՊԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԲ ՍԻՆՈԴԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ
ԱՐԲԱ ԷԼԻՍԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ադիս Աբեբա

Խոր վշտով տեղեկացանք Ձեր հեռագրից Եթովպական Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Աբունա Թեքլե Հայմանոթ Պատրիարքի անժամանակ մահվան լուրը: Այս տխուր առիթով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և անձամբ Մեր անունից հղում ենք Մեր խորագգաց ցավակցությունը Եթովպական Եկեղեցու Սուրբ Սինդոդին, հոգևոր սպասավորներին, ինչպես նաև Եթովպացի ողջ հավատացյալ ժողովրդին:

Սուրբ Էջմիածնի Իջման Սեղանի առաջ աղոթում ենք հանգուցյալ Պատրիարքի արդար հոգու փրկության և խաղաղության համար: Թող բարին Աստված քաղցրությամբ ընդունի նրա հոգին արդարների դասում, և Սուրբ Հոգին մխիթարություն պարգևի Եթովպական Եկեղեցու հոգևոր դասին և հավատացյալ ժողովրդին:

Կիրակի, 12 հունիսին, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում կատարվելու է մասնավոր հոգեհանգստյան պաշտոն Մեր հանգուցյալ եղբոր՝ Աբունա Թեքլե Հայմանոթի հոգու խաղաղության համար:

ՎԱԶԳԵՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
7 հունիս 1888 թ.





Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից և թեմերին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ են արված՝

1. Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԸ—Երևանի Ա. Հովհաննես եկեղեցու ծխականտար, և

2. Տ. ՍՏԵՓԱՆ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆԸ—Երևանի Ա. Սարգիս եկեղեցու ծխականտար:

Վերոհիշյալ երկու քահանաները, դրժելով իրենց ծառայության ուխտը և լքելով իրենց վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանության արտոնության, մեկնել են ընդմիջտ արտասահման:

Սույն երկու կարգալույծ քահանաները դասվում են աշխարհականների շարքը իրենց նախկին՝ Հարություն Մարկոսյան և Արիս Տեր-Գևորգյան անուններով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ա. Էջմիածին,
2 հունիս 1988 թ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանը այսու լիազորված է ծանուցելու ի գիտություն Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից և թեմերին, որ Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգալույծ է արված Թբիլիսիի Ա. Էջմիածին եկեղեցու ծխականտար Տ. Միքայել քահանա Կյուրեղյանը, որը, դրժելով իր ծառայության ուխտը և լքելով իրեն վստահված հոտը, առանց հարգելի պատճառի և առանց եկեղեցական իշխանության արտոնության, մեկնել է ընդմիջտ արտասահման:

Վերոհիշյալ կարգալույծ քահանան դասվում է աշխարհականների շարքը իր նախկին՝ Սահակ Կյուրեղյան անունով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

Ա. Էջմիածին,
14 հունիս 1988 թ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին, կիրակի.—Տօն Երեման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Ս. Մակար քահ. Տերտերյանը:

..

Մայիսի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Ս. Կոմիտաս քահ. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն և որք տեսանեն՝ կուրացին» (Հովհ. Թ 38) բնաբանով:

Ս. պատարագին մերկա էր վեհափառ Հայրապետը:

..

Մայիսի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր վեհարանում, վեհափառ Հայրապետի մախազահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական ժողով:

Մայիսի 15-ին, կիրակի.—Երկրորդ Մաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Ս. Նավասարդ աթղ. Կճոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ովսաննա Բարձրելոյն, օրհնեալ որ գասդ յամուն Տեառն» (Մարկ. ԺԱ 9) բնաբանով:

Ս. պատարագին մերկա էր վեհափառ Հայրապետը:

..

Մայիսի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Իրաքի Բայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Ավագ եպս. Ասատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Ս. Հուսիկ արքեպս. Մանթուրյանը ընթերցեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետերի ժողովի ուղերձը (տես էջ 13):

Ս. պատարագին մերկա էր վեհափառ Հայրապետը:

Հունիսի 4-ին, շաբաթ.—Սրբուն Գրիգորի Լուսաուորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե աւագ քահ. Բաղրամյանը:

Հունիսի 5-ին, կիրակի.—Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանատեղ գերաշնորհ Տ. Ներսէս արքեպս. Պողոսպալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եկաք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» քնարանով:

Հունիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քահ. Ֆրանկյանը:

Հունիսի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական ժողով:

Հունիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արքաճամ արդ. Մկրտչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Հրեշտակ երկրաւոր, սուրբ հայր մեր և լուսաւորիչ, գորդիս եկեղեցւոյ Հայաստանեայց, որք պատուեմք զիշատակս քո՝ յիշեա առաջի Քրիստոսի, զի կեցուցէ զմեզ» (Յայսմատուրք) քնարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հունիսի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քահ. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Տէր, ոչ սերմն քարի սերմանեցէր յագարակին քում, արդ ուստի՝ ունիցի գորումն» (Մատթ. ԺԳ 27) քնարանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:





ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՎԱՔ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Սույն թվականի մարտի 4 և 5 օրերին Մոսկվայում «Վերակառուցման գործընթացում սովետական «Վասն խաղաղության շարժման» տեղի և պարտականությունների մասին» կարգախոսով, տեղի ունեցավ Սովետական Միության խաղաղության կոմիտեի և Սովետական Միության խաղաղության ֆոնդի համատեղ հավաքը:

Երկու օր տևած համաժողովին մասնակցում էին երկրի բոլոր հանրապետությունների և բոլոր խավերի խաղաղության պայքարի ներկայացուցիչները, ինչպես և պատգամավորներ քրիստոնեական եկեղեցիներից և այլ կրոնական հաղորդակցություններից:

Հանուց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խաղաղության կողմնակիցների հավաքին մասնակցում էր Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպ. Ծաքարյանը:

Հավաքի բացման և փակման նիստերը համատեղ էին, ուր ելույթներով հանդես եկան վերոհիշյալ շարժումների ղեկավարները:

Բացման համատեղ նիստից հետո համաժողովականները քաժամկեցին թեմատիկ չորս խմբերի՝ առաջադրված նոր ենթա-

կարգախոսներով շարունակելու մտքերի փոխանակությունը: Մերօրյա դեմոկրատացման ոգով և հրապարակայնությամբ նրանք «Քաղաքական լուսավորության տան» չորս տարբեր դահլիճներում, քննարկեցին հակապատերազմյան մեր դիրքի հարցերը, ուր ի մասնավորի ընդգծվեցին ինֆորմացիոն հաղորդումների կարևորությունը խաղաղության սպառնալուծության արդար դատին ի նպաստ: Լրջորեն խուսվեց սովետական ժողովուրդների հնտեր-նացիոնալ և հայրենասիրական դաստիարակության հարցի մասին, միջազգային տարբեր մակարդակների հետ սովետական խաղաղության շարժման կապի էլ ավելի մեծացման մասին, ճշվեց, որ վերակառուցման պայմաններում պետք է ուժեղացնել Սովետական Միության տարբեր հաստատությունների և մեծ հեղինակություն վայելող ահմատների համագործակցությունը:

Հավաքը ընդունեց համապատասխան փաստաթուղթ՝ համաշխարհային խաղաղության համար անընկրկելի պայքարի կոչով:

ԹՂԹԱԿԻՑ





ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
«ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՎԵՑԱՐԱՆՉՈՒԹՅՈՒՆ»
ԱՇԽԱՐՀՈՒՄ» ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԵՐԹԱԿԱՆ
ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի ապրիլի 16—24 օրերին Հունաստանի Թեսաղոնիկե քաղաքի Նեապոլիս արվարձանում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Առաքելություն և ավետարանչություն» հանձնաժողովի հերթական նշուտաշրջանը, որին հրավիրվել էին ուղղափառ և արևելյան ուղղափառ քույր Եկեղեցիների ներկայացուցիչները, քննարկելու համար «Եղիցին կամք քո» Քրիստոսավանդ Տերունական աղոթքի իմաստը ներկայիս «ուղղափառ Եկեղեցիների առաքելության» աշխատանքի ոլորտում:

Կիրակի օրը, առավոտյան, նախքան նշուտաշրջանի բացումը, Նեապոլիսի Ս. Ավետման Եկեղեցում տեղի ունեցավ սուրբ պատարագի արարողություն: Սուրբ պատարագին ներկա էին, քացի ժողովականներից, նաև Ռոմ թվով հավատացյալներ:

Նույն օրը, երեկոյան, Ս. Ավետման Եկեղեցում կից սրահում հանդիսավորապես տեղի ունեցավ ժողովի բացումը՝ քոյոր մասնակիցների և բազմաթիվ պետական պաշտոնատարների ներկայությամբ:

Այս առթիվ ընթերցվեցին ուղղափառ և արևելյան ուղղափառ Եկեղեցիների պետերի կողմից ուղարկված ողջույնի խոսքերը: Ողջույնի խոսքով հանդես եկան Նեապոլիսի միտրոպոլիտ Տ. Դիոնիսիոս սրբազանը, հյուանիսային Հունաստանի միցիստր Սթիվանոս Փափաթեմեյիսը, ԵՀԽ-ի գլխավոր

քարտուղարի տեղակալ պրոֆ. դր. Թոդոր Բաբևը, Ս. Անաստասիոս եպիսկոպոսը՝ հանուն «Առաքելություն և ավետարանչություն» աշխարհում՝ հանձնաժողովի, և Յորգո Լեսոպուլոնը՝ որպես հանձնախմբի քարտուղար:

Նույն օրը, երեկոյան, հանուն Նեապոլիսի թեմի, կազմակերպվեց հատուկ հյուրասիրություն՝ ի պատիվ ժողովի քոյոր մասնակիցների:

Երկուշաբթի, ապրիլի 18-ին, առավոտյան, ժողովն ակսեց իր աշխատանքները: Ժողովի ընթացքում առանձին զեկուցումներով հանդես եկան դոկտ. Էոմեն Ը. Սթոքվելը, դոկտ. Հ. Գեմադիոս Լիմուրիսը, Հայր Զոզեֆ Զահլևին, Ս. Ստեփան եպիսկոպոսը, պրոֆ. Օլիվիե Կլեմենտը, Ս. Խաժակ վարդապետ Պարսամյանը, Ս. Անաստասիոս եպիսկոպոսը, պրոֆ. Քրիստոս Վանաստսը և ավագ սարկավագ Նազարգիներ: Ժողովի երկրորդ օրվա նիստի ատենապետությունը վարեց Ս. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ժողովի հիմնական թեմային զուգահեռ, քննարկվեցին նաև «Երիտասարդները իբրև քարոզիչներ» և «Կանանց առաքելությունը աշխարհում» թեմաները: «Կանանց առաքելությունը» թեմայի քննարկման ընթացքում նիստի ատենապետությունը վարեց տիկ. Թեմի Փիրի-Սիմոնյանը, իսկ «Երիտասարդները իբրև քարոզիչներ» թե-

ման քննարկելիս ճիստի ատենապետն էր հայր Ն. Հուրդոնեն:

Այնուհետև ժողովականները բաժանվեցին չորս խմբերի: Առաջին խումբը քննարկեց «Էկոմենիզմը այսօր» թեման՝ ատենապետությամբ պրոֆ. Սիգիսի, երկրորդ խումբը՝ «Առաքելություն և միություն» թեման՝ ատենապետությամբ հայր Գուշելի, երրորդ խումբը՝ «Ընկերային ծախքեր քրիստոնեական կյանքում» թեման՝ ատենապետությամբ Ս. Ներսես արքեպիսկոպոսի, չորրորդ խումբը՝ «Համայնքային եկեղեցու դերը ավետարանչության գործում» թեման՝ ատենապետությամբ Ս. Մարկոս Անտոնիոս եպիսկոպոսի:

Վերոհիշյալ չորս խմբերը, իրենց աշխատանքն ավարտելուց հետո, իրենց աշխատանքային փաստաթղթերը ներկայացրին ժողովի ատյանին՝ վերաքննարկման և վավերացման համար:

Ապրիլի 28-ին, շաբաթ օրը, երեկոյան, ժողովն իր աշխատանքները վերջացրեց՝

իր առաջարկությունները ներկայացնելով 1989 թ. Տեխասում (ԱՄՆ) տեղի ունենալիք համագումարի կազմակերպիչների ուշադրությանը:

Ժողովի ութ օրերի ընթացքում քվոր մասնակիցները վայելեցին Նեապոլսի ժողովրդի և հատկապես թեմի առաջնորդ միտրոպոլիտի՝ Տ. Դիոնիսիոս սրբազանի ջերմ հյուրընկալությունը: Ժողովի մասնակիցները ատիթ ունեցան նաև այցելելու հյուսիսային Հունաստանի միմիատր Սթրիանոս Փափաթեմելիսի պալատը, ուր, ի պատիվ նրանց, տեղի ունեցավ ճոխ հյուրասիրություն՝ սիրալիկ մթնոլորտում:

Հայց. Եկեղեցու աճուցից սույն ժողովին մասնակցում էին Ս. Ներսես արքեպիսկոպոս Պոզապոլյանը, Տ. Վիգեն վարդապետ Ալքազյանը և Տ. Խաժակ վարդապետ Պարսամյանը:

ՎԻԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅԲԱԶՅԱՆ





ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՐ

Սույն թվականի ապրիլի 19—24 օրերին Իսպանիայի Բարուելոնա քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի մախազահության և խորհրդակցական կոմիտեի համաժողովը:


Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու կողմից սույն ժողովին մասնակցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական տեղապահ Ս. Տիրան վրդ. Կյուրեղյանը, որը խորհրդակցական կոմիտեի անդամ է:

Ժողովի ընթացքում քննարկվեցին առաջիկա տարվա ծրագիրը, կոմիտեների ու եմթակոմիտեների գործունեությունը: Ժողովին իրենց զեկուցումներով հանդես

եկան ՍՍՀՄ Եկեղեցիների ներկայացուցիչները: Հայ Եկեղեցու մասին հետաքրքիր զեկուցումով հանդես եկավ Ս. Տիրան վարդապետը: Զեկուցումից հետո հայր սուրբը պատասխանեց հանդիսականների բազմաթիվ հարցերին՝ Սումգայիթի, Լեռնային Ղարաբաղի ու Երևանյան ցույցերի մասին: Ժողովի մասնակիցները միահամուռ իրենց համերաշխությունը հայտնեցին հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն:

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի գլխավոր քարտուղար Ժան Ֆիշերը համաժողովի անունից համապատասխան հեռագիր հղեց Ամենայն Հայոց Հայրապետին:





ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԱՄՆ-Ի ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ 88-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ
ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հայաստանյայց Եկեղեցւո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի հոգևորականաց տարեկան համագումարն ու 88-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը տեղի ունեցան Գեյմպրիճ Մասսաչուսեցի Ա. Երրորդություն Հայց. Եկեղեցւո հյուրընկալությամբ: Այս առթիվ նշվեցաւ նաև թեմի հաստատման 90-ամյակը:

Հոգևորականաց տարեկան համագումարը տեղի ունեցաւ մայիս 8—12, Հսփաուզըլ Սենթրի մեջ: Քսանդինը եկեղեցական հայրեր մասնակցեցան համագումարին՝ նախագահությամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի: Երեք օրերու ընթացքին տեղի ունեցան տասներկու նիստեր:

Ժողովը գոհունակությամբ ունկնդրեց Նորին Ա. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի պատգամը՝ ուղղյալ ամերիկահայ հոգևորականության: Վեհափառ Հայրապետը կհայտնէր իր հայրական սերը եկեղեցւո պաշտոնյաներուն և կհորդորէր, որ անոնք շարունակեն իրենց առաքելությունը:

Վեհափառ Հայրապետին պատգամը անձամբ Ա. Էջմիածինէն ընթան էին երկու հյուր հոգևորականներ՝ հոգշ. Տ. Ասողիկ

վրդ. Արիստակեսյան և արծ. Տ. Ավետիս քհն. Դանիելյան, որոնք մասնակցեցան համագումարի նիստերուն երկու դասախոսությամբ: Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյան դասախոսեց «Մեղքի ժամանակակից ընկալումը» նյութին մասին՝ անդրադառնալով մարդու ստեղծումին, «Մարդը՝ հող լերկր» և «Մարդը՝ ի նմանութիւն Աստուծոյ» գաղափարներուն, և Տ. Ավետիս քհն. Դանիելյան կարդաց դասախոսություն մը «1914—1915 թվականներու դեպքերու արձագանքը ԱՐԱՐԱՏ ամսագրին մեջ»:

Պատասխանելով Նորին Արքայան հայրական պատգամին՝ եկեղեցական հայրերը որոշեցին հեռագիրով մը արտահայտել իրենց որդիական սերն ու հավատարմությունը Ամենայն Հայոց կաթողիկոսին և Մայր Աթոռին հանդէպ:

Հայաստանյայց Եկեղեցւո Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի 88-րդ տարեկան թեմական պատգամավորական ժողովը գումարվեցաւ մայիս 12—14 օրերուն, Գեյմպրիճի Ա. Երրորդություն եկեղեցւո մեջ՝ նախագահությամբ թեմակալ առաջնորդ գերշ. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի:

Եօթորա պատգամավորական ժողովին

մասնակցեցան 138 հոգորականներ, թեմական պատգամավորներ և ծխական խորհուրդներու ատենապետներ:

Ժողովը հոտնկայս յսեց Ամենայն Հայոց Արքագնացույց կաթողիկոս Նորին Ա. Օնոթյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի հետևյալ պատգամը.

Սիրելի Արքագան Եղբայր և հարգարժան պատգամավորներ,

Ուրախ սրտով կողջունենք զձեզ և բոլորիդ կրեներն աստվածառաք օրհնություն՝ հարուցյալ Փրկչի Իջման Սուրբ Սեղանեն:

Վստահ ենք, թե դուք բոլորդ՝ նվիրյալ հոգևոր սպասավորներ և քարեպաշտ ներկայացուցիչներ ժողովրդյան, նույն եկեղեցասեր զգացումներով տոգորված, համախմբված եք այսօր, քննարկելու և զննահատելու անցնող տարեշրջանի ձեր գործունեության արդյունքները և նախագծելու ձեր հառաջիկա աշխատանքներու ծրագրերը, հառապել շինություն ձեր ընդարձակ թեմի հավատացյալ ժողովրդյան հոգևոր կյանքի և հառապել պայծառացում ձեր եկեղեցյաց:

Մենք համոզված ենք, թե ինչպես նախորդ տարիներուն, նաև հառաջիկա տարեշրջանի ձեր ձեռնարկները հաջողությամբ պիտի պսակվին թե՛ կրոնական, թե՛ կրթական ու մշակութային մակարդակներու վրա, մանավանդ որ անցյալ աշման ձեր թեմին Մեր այցելության առթիվ անձամբ հաստատեցինք ձեր կարելիություններն ու կարիքները, ձեր թեմական-եկեղեցական կյանքի կազմակերպության ամրությունն ու կենսունակությունը, ձեր բոլորիդ նվիրյալ ու միասնական կարգապահ աշխատանքը, որոնք զրավականները կհանդիսանան ձեր նորանոր իրազործումներուն:

Մեր մշտական աղոթքն է, որ ձեր բոլոր աղոթքի Տունները, ձեր վարժարաններն ու մշակութային հավաքատեղիները շեն ու լուսառատ մնան Սուրբ Հոգվո շնորհներու ներքև և դուք լմշտապես առաջնորդվիք

մեր նախնիներու հոգիով ու ամենց թողած սրբազան ժառանգությանց լույսերով:

Եռանդալի սրտով, արթուն հոգիով ու նպատակասլաց համերաշխ գործակցությամբ, շարունակեք անձանձրույթ սշխատիլ, պահելու-պահպանելու համար ձեր թեմական-եկեղեցական տիրախնամ կառույցը՝ ամբողջ ու անխտով, խաղաղ ու կենսունակ:

«Եւ արդ՝ զհանդէս սիրոյ ձերոյ և զմերոյ պարծանացն վասն ձեր, ի դոսա ցուցիք յանդիման ամենայն եկեղեցեաց» (Ա. Կորնթ. Ը 14):

Առաջնորդ սրբազան հայրը, հանուն թեմական պատգամավորական ժողովին, Նորին Արքության հղեց հետևյալ հեռագիրը.

«Վեհափառ Տեր,
Հայաստանյայց Եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի արևելյան վիճակի 86-րդ տարեկան թեմական-պատգամավորական ժողովը կգումարվի Գեյմպրին Մասսաչուսեցի Սուրբ Երրորդություն Հայց. Եկեղեցվո հյուրընկալությամբ՝ մայիս 12-եմ մինչև մայիս 14: Թեմական պատգամավորական ժողովին ուղղված Ձերդ Արքության օրհնության և ողջույնի պատգամի ընթերցումեն հետք՝ ներկա պատգամավորները վերահաստատեցին իրենց անկեղծ հավատարմությունն ու խոր հարգանքը Ձերդ Արքության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանդեպ: Պատգամավորական ժողովը սիրով ողջունեց նաև Մայր Աթոռի ներկայացուցիչներ Տեր Ասողիկ վարդապետ Արիստակեսյանն ու Տեր Ավետիս քահանա Դանիելյանը: Մեր աղոթքն է, որ մեր Տերն ու Փրկիչը միշտ պայծառ, քարգավաճ ու անստան պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և անոր իմաստուն Հովվապետին պարզև մշտատև քաջառողջություն, արևշատություն և արդյունավոր տարիներ»:

Քաղեց՝ ԹԴԹԱԿԻԾ

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1988 թվականի հունվարի 31-ին, կիրակի օրը, Թբիլիսիի հայոց Սուրբ Գևորգ

տաճկությունում Ս. Հովհաննես սուլայ ջառհան Դանիելյանի: «Ուրախ լնա սուրբ



Զեռնադրող սրբազան հայրը ձեռնադրյալ սարկավազի և հոգևոր հայրերի Ռետ

եկեղեցում կատարվեց սարկավազական ձեռնադրություն: Օրվա սուրբ և անմահ պատարագը մատուցեց և ձեռնադրության խորհուրդը կատարեց Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Գևորգ եպիսկոպոս Սերադադյանը: Խարտավիլակի պաշտոնը կատարեց արժանապատիվ Ս. Եղիշե ջառհան Հարությունյանը: Ընծայալով՝ Խաչատուր Գյուլանջյանը, կիսասարկավազության աստիճանը ստացել էր շաքաթ օրը, հունվարի 30-ին, երեկոյան ժամերգությունից անմիջապես հետո, խար-

եկեղեցի» շարականի հնչմամբ սկսվում է ձեռնադրության արարողությունը: Սրբազան հայրը ձեռնադրության աղոթքները կարդալուց հետո, նորոգման շնորհեց սարկավազության աստիճան և Սուրբ Սեդակին սպասարկելու իրավունք: Զեռնադրության ավարտին սրբազան հայրը շնորհավորեց նորոգմա Խաչատուր սարկավազին և հոգևոր-խորատական քարոզ խոսեց հավատացյալներով լեցուն Ս. Գևորգ եկեղեցու խորանից:

ՀՈՒՅՆՎՈՐԱԿԱՆԱՑ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

Քսանեյորդ դարու երկրորդ կիսուն ավանդական եկեղեցիները հուզող հրատապ հարցերեն մին է հոգևոր ասպարեզ ընդգրկվողներու նվազումը: Սույն վիճակեն տառապած է նաև իրաքսահայ թեմը անցյալ կես դարու ընթացքին:

Վերոհիշյալ վիճակը դարձանելու դիտավորությամբ թեմիս նախորդ առաջնորդներու և Կեդրոնական Վարչություններու գործունեությանը կարևոր մեկ աշխատանքը եղած է մայրաքաղաքիս եկեղեցիները և հայաշատ շրջանները հոգևոր սպասարկությունով օժտելը: Սակայն հաջողությունը լրիվ չէ եղած, քանի որ միշտ մեկ կամ մյուս շրջանը մնացած է առանց հոգևոր մխիթարանքի: Տոնական օրերու առթիվ արտասահմանեն հրավիրված հոգևորականներ պակասը կիրացնեն առժամաբար, սակայն լուծումը հիմնական չէր: Նույն այս կեդրոններու խորհրդակատարման պահանջներուն ցայսօր գոհացում կու տան Պաղտատի քահանա հայրերը իրենց հերթական այցելություններով:

Վերոգրյալ վիճակը մտահոգիչ երևույթ մըն էր թեմիս առաջնորդին և Կեդրոնական Վարչության համար: Հիմնական դարձանում մը ընելու մտադրությամբ քանի մը ժողովներ գումարվեցան 80-ական թվականներու սկիզբները, որոնց նյութը եղավ որոնումը տարբեր միջոցներու՝ ապահովելու համար քանիմաց և երիտասարդ հոգևորականներ թեմական կարիքներուն գոհացում տալու նպատակով:

Այսօր, և ժամանակե մը ի վեր իրաքսահայության երիտասարդ սերունդը, մեծավ մասամբ համալսարանավարտ, պիտի փափաքեր ունենալ իրեն մակարդակին հավասար հոգևոր հովիվներ, որոնց հետ կարենալ մտքերու փոխանակում ունենալ, մանավանդ այդ երիտասարդներուն հուզող կրոնական և քառոյական նյութերու շուրջ:

Հարցին լուծում մը գտնելու որպես մեկնակետ Առաջնորդարանս դիմեց հետևյալ քաղերուն—

1. Որոնել իրաքսահայ երիտասարդներ որոնք պիտի փափաքեն հոգևոր ասպարեզը ընդգրկել իրենց եկեղեցիին ու ազգին ծառայելու խոր գիտակցությամբ:

2. Սույն երիտասարդներեն ոմանց ուղարկել արտասահման մեր հոգևոր ճեմարանները որպես ուսանող: Այսօր իրաքսահայ թեմը ունի չորս երիտասարդներ որոնցմեն երեքը շրջանավարտ Մայր Աթոռի ճեմարանեն կժառայեն Մայր Աթոռին Վեհափառ Հայրապետի հայրական հոգածու-

թյան ներքո: Իսկ չորրորդ անձը կաշակերտի Նյու Յորքի Ա. Ներսես աստվածաբանական վարժարանին:

3. Երիտասարդներու երկրորդ խումբ մը աշակերտ ընդունվեցան քահանայից դասարանին, որ հաստատվեցավ Առաջնորդարանի կողմե և ուր կդասավանդվին հետևյալ նյութերը չորս տարիներու վրա քաժնված: Դասախոսական կազմը քաղկացած է երկու հոգևորականներ և երեք աշխարհականներ:

1. Տ. Ավագ եպս. Ասատուրյան
ա. Ներածություն Հին Կտակարանի
բ. Ներածություն Նոր Կտակարանի
գ. Պատմական աստվածաբանություն
դ. Հովվական աստվածաբանություն
ե. Քարոզախոսություն
զ. Ծիսական աստվածաբանություն
է. Ներածություն իմաստասիրության
2. Աթ. Տ. Օշական Ա. Քհն. Գլընյան
ա. Ծարակամագիտություն
բ. Ծիսագիտություն
3. Տոքթ. Պողոս Պողոսյան
ա. Հայոց պատմություն
բ. Ընդհանուր եկեղեցվո պատմություն
4. Պրն. Հակոբ Դեմաճյան
ա. Հայ եկեղեցվո պատմություն
բ. Գրաքար
5. Տիկ. Ծաքե Արծիվյան
ա. Հայոց լեզու
բ. Հայ գրականություն
6. Նուպար Փշտիկյան
Եկրոսական երաժշտություն

Սույն դասընթացներուն կհետևին նաև թեմիս երկու երիտասարդ քահանա հայրեր իրենց ընդհանուր զարգացումը կատարելագործելու համար:

Դասընթացները սկսելով հոկտեմբեր 1984 թվականին իրենց ընթացքը կավարտեն 1988 մայիսին: Ապա ընդհանուր քննությունը հաջողապես անցնելե վերջ թեմականները գրավոր կերպով կդիմեն առաջնորդ սրբազան հոր հայցելով իրենց ընդունումը քահանայագործելու նպատակով իրաքսահայ թեմեն ներս: Այսպես Իրաքի թեմը պիտի օժտվի չորս ուսյալ և երիտասարդ, քարձրագույն կրթություն ունեցող հոգևորականներով:

Աղոթենք առ Բարձրյալն Աստված, որ հաջողությամբ պսակե Առաջնորդարանին եկեղեցաշեն և ազգօգուտ գործունեությունը:

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ

ԻՐԱՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ըստ Իրաքահայ թեմի ներքին կանոնագրի, առաջնորդը կրճատվի չորս տարվա ժամանակամիջոցի համար Պաղտատի Ազգ. Կեդրոնական Վարչության և Իրաքի հայաշատ շրջաններու թաղականությանց կողմե:

Որովհետև մոտ էր թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ սրբազան եպս. Ասատուրյանի քառամյա առաջնորդական ժամանակաշրջանի ավարտը, 4 փետրվար 1988-ին Ազգ. Կեդրոնական Վարչության հրավերով Պաղտատ ժամանեցին Պասրաշի, Մուսուլի, Քերքուկի և Ջախոյի թաղականությանց անդամները՝ լրիվ կազմով: Ընտրական ժողովը տեղի ունեցավ նույն օրը երեկոյան, առաջնորդարանի դահլիճին մեջ:

Ազգ. Կեդրոնական Վարչության ատենապետ տոբթ. Պողոս Պողոսյան ժողովը բացված հայտարարել է ետք բացատրեց ժողովի նպատակը՝ հաջորդ չորս տարիներու համար Իրաքահայության առաջնորդ մը ընտրելու: Ան գնահատանքով արտահայտվեցավ Ավագ սրբազանի անցյալ չորս տարիներու զգալի գործունեության, Եկեղեցվո աշխատանքման և այլ հարցերու մեջ ցուցաբերած մեծ կարողության մասին: Անդրադառնալով առաջնորդական թեկնածության, հարգելի ատենապետը ներկայացրեց հարցուց, եթե ի մտի ունին այլ թեկնածու մը: Ուրիշ առաջարկ չըլլալու պատճառով, Տ. Ավագ սրբազանը իբրև միակ թեկնածուն, հառաչիկա չորս տարիներու համար միաձայնությամբ վերընտրվեցավ առաջնորդ Իրաքահայոց՝ երրորդ անգամ ըլլալով:

Հավարտ ընտրության, Տ. Ավագ եպս. Ասատուրյանը հաստատեց իր հավատարմությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, որպես միաբան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և խոստացավ հարազատ զավակը մնալ Իրաքի օրհնյալ հողին ու պետության:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառը, տեղեկանալով ընտրության արդյունքին, հեռագրով շնորհավորեց վերընտրված առաջնորդ սրբազան հայրը:

Հետևյալը հեռագրի հայերեն թարգմանությունն է.

ՏՈՔԹ. ՊՈՂՈՍ ՊՈՂՈՍՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Պաղտատ

Սրտի անհուն հրճվանքով կշնորհավորենք Ավագ սրբազանի միաձայնությամբ վերընտրությունը իբրև թեմի առաջնորդ, Մենք ևս կու գանք ողջունելու և հաստատելու թեմականներու խոհեմ որոշումը:

Սրտագին կգնահատենք Ավագ սրբազանի անձնվեր գործունեությունը, կշնորհավորենք զինքը և կհայցենք բարձրայն Աստուծմե, որ շնորհե իբեմ հովվական երկար տարիներ հոգևոր իրագործումներով առեցուն, ի մխիթարություն Իրաքահայ համայնքի հավատացյալ զավակներուն:

Մեր օրհնությունները և բարեմաղթությունները ման Ձեզի և պատկառելի թեմական մարմնի հարգարժան անդամներուն:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Գահիրեի մեջ Անկլիքան Եկեղեցին, քաղաքին կեդրոնը, Կալա պողոտայի վրա հիանալի Մայր տաճար մը ունեն։ Նոր ճանարհի և կամուրջներու շինության ատթիվ, Գահիրեի կառավարչությունը կարևոր տարածություն հը ապաստանականացնելով, Մայր տաճարը փվեցավ։ Սակայն հոր հուշատարածություն մը տրամադրվեցավ անկլիքան համայնքին և հոր Մայր տաճարի մը շինության ծախքերը հոգաց Եգիպտոսի պետությունը։

Երկուշաբթի 25 ապրիլ 1988-ի երեկոյան ժամը 16.30-ին, տեղի ունեցավ հորակառոյց անկլիքան Մայր տաճարի օծումը։

Սույն արարողության հերկա էին Մերձավոր Արևելքի Անկլիքան Եկեղեցւո հոգևոր պետ գերշ. Տ. Սամիր Քաֆիթի, Երուսաղեմի եպիսկոպոս իր հետևորդներով։

Ներկա էին նաև Քանթերպլիի Արքեպիսկոպոսի հերկաչացուցիչն ու Միացյալ Նահանգներեն, Իրլանդայեն այլ անկլիքան պատվիրակություններ իրենց առաջնորդներով։

Տեղական Եկեղեցիներեն հերկա էին Ղպտի Կաթոլիկ և Ապետարանական Եկեղեցիների հոգևոր պետեր, Հույն Ուղղափառ Եկեղեցւո և Ղպտի Եկեղեցւո արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, բազմաթիվ քարծրաստիճան հոգևորականներ, դեսպաններ, հավատացյալներ։ Օծումը կատարեց Եգիպտոսի և Հյուսիսային Աֆրիկեի անկլիքան եպիսկոպոս գերշ. Տ. Ղայես Ապտել Մալեք։

Արարողություններու ավարտին, գերշ. Տ. Ջավեն արքեպս. Չիմչինյան ջերմ շնորհավորություններ հերկաչացուց հանուն Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Տ. Վազգեն Ա Հայրապետին։

Մերձավոր Արևելքի եկեղեցյաց խորհուրդը, Գահիրեի մեջ իր հատուկ կեդրոնի ձեռքբերման և բացման ատթիվ, կազմակերպած էր բացման արարողության հանդես երեքշաբթի 26 ապրիլի առավոտյան ժամը 11-ին։

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու հերկա էր Եգիպտոսի հայոց առաջնորդ գերշ. Տ. Ջավեն արքեպս. Չիմչինյան։

Սույն խորհուրդի հերթական նախագահներեն անկլիքան եպիսկոպոսը խոսք առավ և ըսավ, թե Մերձավոր Արևելքի եկեղեցյաց խորհուրդը հիմնված է 1974-ին։ Թե այս կեդրոնին բացումը Քրիստոսի Ա. Հարության ուրախության մեջ կկատարվի, այսինքն այդ հարուցյալ կյանքին շարունակությունն է այս խորհուրդին կյանքն ու զործունեությունը։ Թվեց խորհուրդի գործունեության հեթաքածանումները, երիտասարդական, կանանց, ընտանիքի, դաստիարակչական, կիրակնօրա դասընթացներու, հրատարակչական և այլնի մասին։

Ապա խոսք առավ տղթ. Հապիպ Սամուել և շեշտեց կարևորությունը Մերձավոր Արևելքի մեջ այս խորհուրդին քերելիք կարևոր մասնակցության, այն մասին, որ խաղաղությունը վերահաստատվի աշխարհի կարևոր այս մասին մեջ, Պաղեստինի ժողովուրդին իրավունքները արդարությամբ հատուցելու, գաղթականաց օժանդակելու և արդի կյանքի հարուցած դժվարություններուն լուծումներ առաջարկելու։ Քրիստոսի սերը կմղե, որ բոլորս պատասխանատվություններ ստանձնենք, ուստի կարևոր հարցերու մեջ, մենք բոլորս մոտենք իրարու, այսինքն ծառայության և համագործակցության մեջ միացած ըլլանք, նայինք ապագային ավելի լավատեսությամբ։





ԿՈՐԱԾ ՈՒ ՎԵՐԱԳՏՆՎԱԾ ՄՈՒ ԳԼՈՒԽԳՈՐԾՈՑ (Ա. Տեր-Մարությանի «Հայ գեղջուկը»)

Քանդակագործ Անդրեաս Տեր-Մարությանը հայ կերպարվեստի ամենա վարպետներից է, մեր ազգային արձանագործության մեր շրջանի մեծագույն դեմքերից մեկը, որը գեղարվեստի դժվարին բնագավառներից մեկը անձուկ սրահներից դուրս քերելով հրապարակներ՝ խոսեցրեց լայն հասարակության հետ և շաղկապեց կենդանի առօրյային, կապի ու բրոնզի միջոցով հետևորդներին փոխանցելով կարոտներն ու նվիրական խոհերը հողի ու աշխատանքի մարդկանց և այն հայորդիների, որոնցից շատերը՝ Աբովյանը, Ալիշանը, Նալբանդյանը, Պատկանյանը, Խրիմյան Հայրիկը, Աղամյանը հայ մոր գրականության ու մշակույթի հսկաներն էին:

Ա. Տեր-Մարությանի (1871—1918) գեղարվեստական ժառանգության փոքր մասն է մեզ հասել, այն էլ, ավելի շատ՝ լուսանկարներով ու անուճներով, որովհետև դեռևս չի հավաքված, ավելի ճիշտ՝ ոչ մի անգամ հատուկ ցուցահանդեսով հանրությանը չի ներկայացված մեր պահպանված ողջ ժառանգությունը (բուն օրինակներով կամ լուսանկարներով), տակալին չի հրատարակված մեր ճիշտ թեկուզ անկատար որևէ ալբոմ: Մենագրական միակ աշխատությունը, որին այսօր կարող են դիմել արվեստասերները, 109 էջանոց, միջին չափսի (10×16 սմ) մի գիրք է (Մ. Սարգսյանի): Ժիշտ է, ժամանակի համար այն երևույթ էր ու չբերորեն ընդունվեց, բայց լույս տեսած լինելով 1980-ից (ըստ որում՝ գրվել է դրանից էլ առաջ, 1948 թվականին), կարիք ունի լրացման ու թարմացման: Հոգվածներ էլ համարյա չկան: Նշանակում է, անցել է ողիղ չորս տասնամյակ, և ոչինչ չի արվել Ա. Տեր-

Մարությանի կորած ժառանգության ցրված բեկորները հայտնաբերելու և Սովետական Հայաստանի թանգարաններում կենդանացնելու, մրա կյանքի ու արձանագործական ժառանգության բազում անձանք էջերը լրացնելու ուղղությամբ:

Այո՛, անցյալում կանգնեցվել են Ա. Տեր-Մարությանի կերտած հուշարձանները՝ Ի. Պատկանյանի կիսանդրին, 1901—1902 թթ., Նոր Նախիջևանում և Էջմիածնում, Մ. Նալբանդյանի կիսանդրին՝ Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի բակում (1902), վերջապես, ավելի քան երեք տասնամյակ անց՝ Խ. Աբովյանի արձանը Երևան քաղաքում (1933):

Բայց չմոռանա՞ք հիշել, որ տակալին 1913 թվականին Փարիզում կերտված այս հրաշք արձանը կանգնեցվելուց 15 տարի հետո (1928-ից), տղայամիտ պատճառաբանությամբ՝ քանդվեց և իր տեղը զիջեց մի գորշ հորինվածքի: Բրոնզաձուլ Աբովյանն այնուհետև մեկ-երկու տարի «արգելափակվեց» ինչ-որ միտում, հետո գետեղվեց Հրազդանի ձորի աջափնյա բարձունքներում, մացառների մեջ, 1955-ին տեղափոխվեց մանկական զբոսայգու մոտքի մոտ, իսկ 1984-ից փոխադրվեց Քանաքեռ: Գոհե հիմա պետք է ուղղել այդ անձների սխալը և Երևան քաղաքը չգրկել իր լավագույն հուշարձանից՝ կրկին կանգնեցնելով այն իր ճախկին տեղում: Չէ՛ որ արձանների հորինումն ու կանգնեցումն էլ պատմության փաստեր են, որոնք չի կարելի աղավաղել:

Նույնպիսի ճակատագիր վիճակվեց Ռ. Պատկանյանի կիսանդրու կրկնօրինակին, որը 1902-ին կանգնեցվել էր Էջմիածնում, մայիսից Գևորգյան ճեմարանի բակում:

Բայց 50-ական թթ. կեսերին այդ սխալն ուղղվեց: Ինչևէ, այս չորս հուշարձանները, չնայած իրենց անուրախ դեգերումներին, այսօր էլ շարունակում են իրենց բարոյա-

Մարտիրոսյանի կերտած քազմախորհուրդ ուրիշ ստեղծագործություններ էլ՝ Ղևոնդ Ալիշանի (1902/3), Խրիմյան Հապիկի (1904), Ներսես Թալիքյանի (1903), Բոգ-



կրթիչ դերը: Դրանք Անդրեաս Տեր-Մարտիրոսյանի՝ հանրությանն ամենից ավելի ծանոթ ստեղծագործություններն են:

Հայաստանի Պետական պատկերասրահում, Գրականության ու արվեստի և այլ թանգարաններում պահվում են Ա. Տեր-

դան Դուրխանյանի (1912) կիսանդրիները, Ռ. Պատկանյանի, Գ. Արծրունու, Ղ. Աղայանի, Պետրոս Ադամյանի և Խաչատուր Աբովյանի միաժամանակ բրոնզից, գիպսից և արծաթից պատրաստած փոքրադիր դիմաքանդակները (թե՛ հարթաքանդակներ-

րը), որոնք անցյալում ունեին իրենց կրթկ-
նորիմակները և վաճառվում էին Թիֆլի-
սում, մատչելի գնեցողով:

Որպեսզի լռիվ լինի Ա. Տեր-Մարությա-
նի պահպանված ստեղծագործությունների
ցանկը, հիշենք ման իս. Արուսյանի կիսան-
դրին (գիպս), մի քարձրաքանդակ՝ Աղջկա
գլուխ, որը վաղուց զարդարում է Երևանի
նախկին կուլտուրայի տան մուտքը, ինչպես
ման «1512. Հայ տպագրություն. 1912»
փոքրադիր խորհրդանշական պատկերը՝
փորագրված արձիճե սալիկի վրա:

Ընդհանուր հայտարարի քերելով այս ա-
մենը, ստանում ենք շատ անցյալ մի քա-
նակ, ընդամենը քանդակագործական
տաճարինգ աշխատանք, բայց մեծ մասը՝
արվեստի հասուն գործեր, որով ավելի է
խորանում արձանագործի մյուս ստեղծա-
գործություններից շատերի անդառնալի
կոդստյան ցավը: Գալիք որոնումներից
ուղղություն տալու համար կուգեինք հիշեց-
նել Ա. Տեր-Մարությանի միայն անունով
հայտնի արձանագործական աշխատանք-
ները մուցյան (մի մասի լուսանկարները
պահպանվել ու հասել են մեզ՝ տպագրված
լինելով ժամանակի պարբերականների է-
ջերում կամ բացիկների ձևով տարածվե-
լով ժողովրդի շրջանում): Պետրոս Ադամ-
յանի (1808), Փարիզյան բանկի կառավա-
րիչ Ժյուլ Բենարի, Հայ Գեղջուկի, Հայ
Գեղջուկուհու և երգչուհի Պալինա Վիար-
դոյի կիսանդրիները, «Հայ գրողների
դասիները ընծայող մուսան» արձանը՝
քարձրաքանդակներով զարդարված իր
պատվանդանով, «Հայաստան» հարթա-
քանդակը, «Ռուսական հզոր արծիվը» Հո-
վանի Մասիսի աղավաղում: խորհրդանշա-
կան կոթողը:

Ա. Տեր-Մարությանին նվիրված գրակա-
նության մեջ հիշատակվող այս ութ ստեղ-
ծագործություններից կալելացեինք ևս մի
քանի ստեղծագործությունների անուննե-
րը, որոնք ցարդ իրենց հայտնաբերողին
են սպասում: Դրանք են՝ գրող Ատրպետի
կիսանդրին, ֆրանսիացի հայտնի քիմիկ
Դեբյուի արձանը, Գրիգոր Արծրունու մեծա-
դիր դիմանկար-դիմաքանդակը, որից
պատրաստված են եղել ման փոքրադիր
օրինակներ՝ գիպսից կամ արծաթից: Դը-
րանք մուցյան վաճառվում էին Թիֆլիսում,
1912-ից պլասե, Արուսյանի և Պ. Արամյա-
նի դիմաքանդակների հետ միասին: Վեր-
ջապես՝ «Նիկողայ Երկրորդի մուտքը Թիֆ-
լիս» քանդակագործական կոմպոզիցիան,
որի նկարն է պահպանվել: Ուրեմն՝ անու-
նով, մասամբ և լուսանկարներով հայտնի,
բայց կորած 12 ստեղծագործություն:

Դեռ չենք հիշում Ա. Տեր-Մարությանի

այս ու մախորդ ստեղծագործությունների
մախանակ, կորած կամ ոչնչացված տալի-
քերակները (ինչպես՝ Արուսյանի հուշար-
ձանի չիրականացված պատվանդանի եր-
կու տարբերակների վրա եղած քանդակ-
ները՝ Ադամի և Թագուհի, «Վերք Հայաս-
տանին» ընթերցող սղան և Արուսյանի ան-
վան վրա իջած վոլշիմ սրբող աղջնակը),
զանազան կիսանդրիների մանրակերտերը
կամ աշխատանքային օրինակները, որոնք
քանդակագործը սովորություն ուներ Փա-
րիզից նվեր ուղարկելու իր բարեկամնե-
րին: Հնորյա մամուլից տեղեկանում ենք,
որ Ա. Տեր-Մարությանը ցանկություն ուներ
կերտելու հրապարակախոս Պետրոս Սի-
մոնյանի կիսանդրին (որ դրվելու էր վեր-
ջինս գերեզմանի վրա, Խոջեվանքում,
Թիֆլիս), Ասյաթ-Նուվայի մահարձանը,
Սուդուկյանի Պեպոյի հուշարձանը:

Առանձին լուսաբանման կարիք ունեց
այս տեղեկությունները, որոնք քաղել ենք
քանդակագործի հրապարակային ու մաս-
նավոր մամուլներից: Մանավանդ որ, երբ
Ա. Տեր-Մարությանը մտադրվում էր ար-
վեստի որևէ գործ ստեղծել, եթե պայման-
ները նպաստավոր էին լինում, կարճ ժա-
մանակում մա իր դիտավորությունն իրա-
կանություն էր դարձնում:

Բայց մի՞թե Ա. Տեր-Մարությանի ժա-
նանգության այս վերջին մասը՝ լռի անու-
նով կամ լուսանկարներով հայտնի գոր-
ծերը, անվերադարձ կորած պետք է կար-
ծել: Իհարկե, ո՛չ: Եվ ծրագրված որոնում-
ները չեն կարող ապարդյուն անցնել:

Ա. Տեր-Մարությանի կյանքի և ստեղ-
ծագործական ժառանգության հարցերը մեզ
հետաքրքրում են վաղուց, մանավանդ որ
դրա անձն ու գործը սերտ առնչություններ
ունեն մեր աշույանագիտական հետազո-
տությունների հետ: Արուսյանի լավագույն
դիմանկարի հեղինակը Տեր-Մարությանն
է: Այդ հուշարձանի ստեղծման պատմու-
թյան մասին վաղուց մյուսեր ենք հավա-
քում, որոնց ամփոփումը թողնում ենք մեկ
ալլ, հարմար առիթի: Իսկ հիմա կուգենա-
լինք բաժանել ընթերցողների հետ մեր ու-
րախությունը, որ ապրեցինք վերջերս,
հայտնաբերելով Ա. Տեր-Մարությանի կո-
րած ստեղծագործություններից մեկը, որը
կարող է դառնալ ուզածդ պատկերասրահի
լավագույն ցուցանմուշներից մեկը:

Խոսքը «Հայ գեղջուկի» կիսանդրու մա-
սին է, որ ստեղծված է Մեծ եղեռնի օրե-
րին և վաղուց համարվում էր կորած:

Էջմիածին կատարած իմ այցելություն-
ներից մեկի ժամանակ Մայր Աթոռի դի-
վանատան քարտուղարի առանձնասենյա-
կի պատուհանի գոգին կուտակված իրերի

ու գործերի մեջ ուշադրությունս գրավեց քրոնզաձուլյ մի կիսանդրի, որ, կարծես «Հայ գեղջուկի» նմանակը լիներ: Քանզա-կը գրգռեց հետաքրքրությունս, բայց ժա-մանակ չկար քննելու այն, սխալ հարմար չէր: Երևան վերադառնալով և հավաքելով համապատասխան նյութեր ու նկարներ՝ մի-երկու շաբաթից կրկին ուղևորվեցի Էջ-միածին՝ հանելուկը ստորգելու, ինձ խոր-հրդատու ընտրելով ժողովրդական նկա-րիչ Գրիգոր Խանջյանին:

Մեր տեսածը պատրանք չէր: Դիվանա-տան քարտուղարի աշխատասենյակի պա-տուհանին եղած կիսանդրին ճիշտ որ Ա. Տեր-Մարությանի կորած ստեղծագործու-թյունն էր:

Այդ, ժամանակակիցները խոսում էին գիպսից պատրաստած կիսանդրու մասին, իսկ այս վերջինը քրոնզից է, և կիսանդրու վարի աջ մասում էլ ուռուցիկ տառերով (ֆրանսերեն) ձուլված է նկարչի անուն-ազգանունը.

«A. Ter-Maronkian, 16».

Թեոդիկի «Ամենուց տարեցույցի» 15-րդ տարեգրքի (1921 թ.)՝ գեղարվեստին հատ-կացված բաժնի նկարներից ու նյութերից («Ռուսահայ արձանագործի մը մահը», տե՛ս էջ 240—243, անստորագիր), որոն-ցից առաջներում օգտվել է նաև Մ. Սար-գսյանը, հայտնի էր, որ ֆրանսիական «Foy el vie» («Հավատ և կյանք») պար-բերաթերթը 1916 թ. օգոստոսի 16-ին հա-տուկ հոդված է նվիրել Ա. Տեր-Մարու-յանի «Հայաստանցի գեղջուկ ամուլը» ստեղծագործությանը՝ բաղկացած երկու կիսարձաններից, որոնցից մեկը ուսումնա-սիրողները կոչել են «Հայ գեղջուկը», մյու-սը՝ «Հայ գեղջկուհին»: Հոդվածի հեղինա-կը (որը նաև Թեոդիկին այդ նյութերը տրամադրողն է)՝ ֆրանսիացի հայտնի հա-յագետ Ֆրեդերիկ Մակլերը, մասնավորա-պես ասում է.

«Սակայն արձանագործը ռուսահայ մը չէ սիայն. նախ և առաջ Հայաստանի գա-վակն է <ան>, ուստի չէր կրնար մոռնալ, որ երբ Հայաստանի (այսինքն՝ Արևելյան Հայաստանի—Պ. Հ.) մեջ ռուս կառավա-րության բարիքներեն կօգտվեր ինքը, ան-դին իր տանկահա ելրայրները կտառա-լեին ու կանհեանային թրքին վայրագ թա-թին տակ: Իր ըմբռնած կերպով կմեկնե կարեկցության այն զգացումները, որոնց-մով տոգորված է, «Ժեռն թյուրք» (այսին-քըն՝ երիտթուրք—Պ. Հ.) կոչելը սովորու-թյունն եղած կառավարության զոհերուն հանդեպ:

Արվեստագետի իր մասներեն ելած են երկու անդրիների՝ տպավորիչ իրապաշ-

տությամբ մը. մոտեն դիտված պահուն կզգացվի, թե ո՛րչափ ճարտարորեն ար-տահայտած է ան ժողովուրդի մը տառա-պանքները. ի՛նչ արվեստով քանդակած է գեղջուկ այդ հայուն. ճակատին և թշվառ այդ պատվին աչքերուն մեջ բոլոր այն բարդված ցավերը, գործված ոճիրներն ու արյունալից անցյալին արհավիրքը, զոռ վերջերս հայտնած են մեզ՝ թաղմ էջերը հայկական երկար ու դարավոր մարտիրո-սագրության» (անդ, էջ 243):

Ինչպես որ թոճի երկատված էր արվես-տագետի Հայրենիքը, այնպես էլ նրա ժո-ղովրդի ապրած մեծ ողբերգության արձա-զանքն հանդիսացող այս ստեղծագործու-թյունը, հեղինակի կյանքի վերջին տարի-ներից (թե՛ մահվանից հետո), անդամա-հատվեց ու հրաշարակից անհայտացավ՝ մեզ ցավալի հիշատակ թողնելով լույ աճ-յրիների լուսանկարները: Դրանք ծանոթ են ինչպես առանձին-առանձին, մամուլում տպագրված տարբերակներով, այնպես էլ կողք-կողքի, Ա. Տեր-Մարությանի սակա-վաթիվ լուսանկարներից մեկից, ուր ար-ձանագործը պատկերված է իր արվեստա-նոցում. ձախ կողմում գեղջուկն է, աջում՝ գեղջկուհին, թեքված միմյանց և վշտից կո-րացած...

Նույն Ֆ. Մակլերից առնելով Թեոդիկն ասում է նաև, որ այդ կիսարձաններից մե-կըն արդեն 1920-ին Պողոս Նուպարի սե-փականությունն էր, իսկ մյուսը՝ ինչ-որ Մ. Հ. Լաքոուայի: Թե այդ անձանցից ո՛րը ո-րոշակիորեն ի՛նչ է գնել, անդրիներից ո՛րն ո՛ւմ է անցել, անհայտ էր ու անհայտ էլ մնում է ցարդ:

Մ. Սարգսյանը հավաստում է, թե Պողոս Նուպարի հավաքածոյում եղածը «Հայ գեղջուկն» էր, իսկ Լաքոուայինը (և ո՛չ Լանֆրուայինը, ինչպես տպված է նրա գրքում)՝ «Հայ գեղջկուհին», որպես աղ-բյուր մատնանշելով Թեոդիկի «Ամենուց տարեցույցում» տպագրված հոդվածը, ուր սակայն այդ մասին որոշակի խոսք չկա:

Որտե՛ղ են գտնվում այժմ Ա. Տեր-Մա-րությանի այս վերջին ստեղծագործություն-ների գիպսե բնօրինակները, հին տերերի՝, թե՛ նորերի հավաքածոներում, պարզված չէ:

Պետք է անվիճելի համարել, որ «Հա-յաստանցի գեղջուկ ամուլը» գուրգ արձան-ների գիպսե օրինակներն ստեղծելուց և ցուցադրելուց հետո (1915—1916 թթ.) Ա. Տեր-Մարությանը դրանք վերակերտել է տվել քրոնզով (ո՛ր ձուլարանում և ո՛ւմ համար, դժվարանում ենք ասել), առժա-մանակ պահելով իր արվեստանոցում: Բայց հեղինակի հավաքածոն, նրա մահ-

վաճից հետո, որը պատահեց 1919 թ. մարտի սկզբներին (թե՛ փետրվարի վերջերին, որովհետև կոլկասահայ մամուլը այդ լուրը հաղորդել է 1919 թ. մարտի 22-ին, տե՛ս «Մշակ», № 63, իսկ պարզ ճամպն այն խառը օրերին հազիվ թե մեկ ամսից շուտ Փարիզից Թիֆլիս հասներ),—մասնատվեց ու անհայտացավ: Խնդրո առարկա զուգարձաններից մեկը միայն՝ «Հայ գեղջուկը», հայտնի չէ երբ, ընկնում է մասնավորների ձեռքը և երկար դեգերումներից հետո, ի վերջո, հասնում բաղձալի հանգրվան՝ Սովետական Հայաստան, և միլիարներվում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, ուր և, ինչպես սկզբում ասացինք, «հանդիպեց» մեզ:

Ինչպես լսել ենք, միլիարներով այն միամիտ պատրանքն է ունեցել ու համառորեն պնդել, թե քանդակի բնորդը ակամավոր հայագետ Փարեզին Հովսեփյանն է եղել, ավելի ճիշտ՝ այդ նրա դիմապատկերն է, որ ստեղծել է Ա. Տեր-Մարտիչյանը: Ահա այս էլ պատճառ է դարձել, որ այդ բացառիկ ստեղծագործությունը ցարդ դուրս է մնացել արվեստագետի կյանքի ու ստեղծագործության սակավաթիվ հետազոտողների տեսադաշտից, իսկ կիսանդրին էլ, առանց անհրաժեշտ քննության, դիտվել է որպես կեղծիք:

Անկախ այս ամենից՝ հայ արվեստի բոլոր բարեկամները խորապես շնորհակալ են անձանդո միլիարբերողից, որը կորստից փրկել և Մայր Հայրենիքին է վերադարձրել նրա հանձարեղ զավակի ավելի քան յոթանասուն տարի առաջ կերտած և անհայտության մեջ մնացած գլուխգործոցը:

Մեր այս տողերը գուցե առիթ ծառայեն «Հայ գեղջուկի» կիսանդրում ու նրա դեգերումներին առնչվող հարցերի պարզաբանմանը: Միյուրբահայ գիտակ անձանց կիսնդրենք՝ չզրանալ իրենց իմացածները հաղորդելու ամսագրիս խմբագրությանը:

Կրկին ու կրկին խորին ուշադրությամբ քննում ու զննում ենք Ա. Տեր-Մարտիչյանի այս բացառիկ արժեքի ստեղծագործությունը՝ «Հայ գեղջուկի» կիսանդրին, որը հավերժացրել է ո՛չ թե սովորական մեկ անհատի, հանրությանը իր կյանքով ու գործով և վավերական մկարներով ծանոթորկն գրողի կամ արվեստագետի դիմանկարը, ինչպիսիք են արվեստագետի արձանագործական հանրածանոթ աշխատանքներից շատերը, այլ աշխատավոր հայ

մարդու հավաքական կերպարը, որը թեպետև ընդդեմ թուրք ջարդարարների, համուն գոչատնման մղած դարավոր, անհավասար ու դաժան պայքարում շատ է տառալի, հարստահարվել ու համարյա ամեն ինչ կորցրել, անգամ՝ իր պատմական հայրենիքի մեծ մասը, բայց, թեկուզև դժոխքում, կարողացել է տոկալ ու վերապրել:

Հայ գեղջուկի խորհրդանշական կիսանդրին կարծես տապալված ու հոգեվարքի դուռը հասած դարավոր կաղնի լինի, որն անգամ կիսաչորացած՝ շարունակում է կանաչ շիվեր արձակել և երազել արդար ու խաղաղ գալիքի մասին, որոնց ցուքերը դժվար չէ նշմարել նրա ճակատի խորշումներում, անաքելված աչքերում և թեքված իրանի մեջ: Բնավ չսպառազնցրած չենք լինի, եթե այս կիսանդրին կոչենք մահվան երակից փրկվածների աղոթք և գոյատևման հիմն՝ քարացած արձանագործական զուսպ ձևերի մեջ:

Կորած կիսանդրու հայտնությունը առիթ ծառայեց, որ վերստին թերթեղիք մեր ուսումնասիրության հին տետրակները և կրտսեր որդու հավաքած քաղվածքները (հայ պարբերականներից), ուր քիչ չեն Ա. Տեր-Մարտիչյանին վերաբերող տվյալները և ցարդ չհավաքված ու չհրատարակված նամակները:

Այդ մյուսերն էլ հաղորդում են, որ Ա. Տեր-Մարտիչյանը արձանագործական տարբեր եղանակներով, 1900—1910-ական թթ. կերտել էր նաև Ատրպետի ու այլոց դիմաքանդակները, նաև մանրակերտը մի հաղթական կամարի, որ կառուցվելու էր Տիֆլիսում և մկիրվելու էր հայ-ռուս զինակցությանը՝ թուրք լծից Հայաստանը ազատագրելու համար մղված կռիվներում: Պետք է շարունակել որոնումները՝ Ա. Տեր-Մարտիչյանի կորած այդ ու մյուս ստեղծագործությունները գտնելու համար:

Միյուրբահայ կարող անձանց ու Հայրենի մշակույթի բարեկամներին կիսնդրենք իրենց մասնակցությունը բերել այս հայրենասիրական գործին:

Մենք էլ մեր հերթին հրատարակության ենք պատրաստում Ա. Տեր-Մարտիչյանի նամակները՝ ինչ-որ չափով դյուրացնելու համար այդ որոնումները:

Պ. ՀԱԿՈՅԱՆ



ԱՐԱՐԱՔԱՄ ԱՐԳ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՍՅՈՒՆՅԱՑ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱԿԱՆ ԱԹՈՐԸ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

ՍՅՈՒՆՅԱՑ ԱԹՈՐԸ ՄԻՆՉԵՎ
ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Բուն Հայաստանում վերջին անկախ հայկական թագավորության՝ Սյունյաց թագավորության անկումից հետո (1170 թ.)¹ Սյունիքը ևս գրավվում է սելջուկ-թուրքերի կողմից և անպատմելի ավերածությունների ենթարկվում։ Այրվում են Բաղաբերդում պահված շուրջ 10 000 ձեռագրերը, ավերվում են Կապան ու Գորիս քաղաքները, բազմաթիվ վանքեր, գյուղեր ու ամրոցներ։ Այս վիճակը տևում է մոտ քառասուն տարի։ Սակայն շուտով հզորացած Վրաստանի օժանդակությամբ Ջաքարյան իշխանները Հայաստանի բազմաթիվ շրջանների հետ ազատագրում են նաև Սյունիքը։ «...բազում ջանիս թափեցին զաշխարհս Հայոց ի պարսից (իմա՝ սելջուկ-թուրքերից)²», և առին լուսնայ մինչև ցներքին Բասեն և ի Բարկուշատայ մինչև ի Մծրնկերտ... առին ի 660 թուականին (1212) զՍիւնիս, զՈրոտն, զԲորոդան, զԲղեն, զԲարկուշատ»³, քիչ ավելի ուշ՝ նաև Վայոց ձոր և մյուս գավառները։ Ազատագրված

Սյունիքի մեծ մասը հանձնվում է Լիպարիտ Օրբելյանին, «զի նա եղև առաջնորդ առման Սիւնեաց և այլ քերդերոյն»⁴, որով և սկիզբ է դրվում Օրբելյանների Սյունյաց իշխանական ճյուղին։

Պատմության մեջ հիշատակվող Սյունյաց աթոռակալներից առաջինը Ստեփանոս Ֆախր էլ Մսեհն է, որ առնչվում է Օրբելյան իշխանական տան հետ Սյունիքում։

Ստեփանոս Ֆախր էլ Մսեհը Սյունյաց եպիսկոպոս Գրիգոր Մեղրեցու որդին էր։ Հայրը՝ Գրիգոր Մեղրեցին (1148—1168⁵), սկզբնապես ավագ քահանա էր Մեղրի ավանում։ Եղբոր՝ Սյունյաց աթոռակալ Տեր Բարսեղի մահից հետո (1148⁶) «...ամալացեալ էր աթոռն ի քնակչաց և ոչ գոյր տէր և կամ իշխեցող, զի հոգայր վասն եկեղեցոյս կամ վասն սուտ մնացորդաց հօտին և ի խնդիր լինել առաջնորդի»⁷։ Գրիգորի Ծամամ անուհով կինը հորդորում է ամուսնուն զնալ Կիլիկիա, կաթողիկոսի մոտ, և ձեռնադրվել եպիսկոպոս ու նշանակվել Սյունյաց մետրոպոլիտ, «զի և որդեակս մեր լիցի որդի քահանայապետի»⁸։ Կնոջ քրկար պնդումներից հետո Տեր Գրիգորը ուղևորվում է Կիլիկիա, Գրիգոր Գ Պահլավունու մոտ (1118—1166), և նրանից եպիսկոպոս ձեռնադրվելով, վերադառնում է Սյունիք ու նստում Սյունյաց Աթո-

¹ Տես Թ. Խ. Հակոբյան, «Սյունիքի թագավորությունը» Երևան, 1988 թ., էջ 68։

² Տես նաև Ստ. Օրբելյան, «Սյունիքի պատմություն», թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի, Երևան, 1988 թ., էջ 511։ Այսուհետև՝ Սյունիքի պատմություն։

³ «Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմաթիւն տանն Սիսական», Մոսկվա, 1881 թ., էջ 287։ Այսուհետև՝ Ստ. Օրբելյան։

⁴ Նույն տեղը, էջ 281։

⁵ Սյունիքի պատմություն, էջ 492։

⁶ Ղ. Ալիշան, «Այստեղ», էջ 20։

⁷ Ստ. Օրբելյան, էջ 250։

⁸ Նույն տեղը։

նին: Սրա գործունեության մասին որոշակի ոչինչ չի պահպանվել: Մահացել է 1188 թվականին և թաղվել Ամաղու Նորավանդանոց⁹, ուր և մինչև այժմ գտնվում է նրա տապանաքարը հետևյալ մակագրությամբ. «զՀայր Տեառն Ստեփանոսի տէր Գրիգոր յիշեցեք»¹⁰: Մակայն որոշակի չենք կարող ասել, թե Գրիգոր Մեղրեցին Աթոռը տեղափոխել է Նորավանդ, քանի որ Ստ. Օրբելյանի հիշած Նորավանդի եպիսկոպոսների շարքում (որոնք մինչև Ստ. Օրբելյան յոթն են) նրա անունը չի նշված¹¹:

Գրիգոր Մեղրեցուն հաջորդում է իր որդին՝ Ստեփանոսը: Աթոռակալման թվականը Օրբելյանը չի նշում, այլ պարզապես՝ «Եւ յաջորդէ զտեղին որդի նորին Ստեփանոս մանուկ տիօք, իի մանուկատիկ շնորհօք, սիրեցեալ և մեծարեալ յաչս տաճաք, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ Աթաբեկին և որդւոյ նորա Փալ-հաւանին և Խզիլ Ասլանին և Բուրաք Աթաբեկին, որք և զգուական անուամբ Ֆախր էլ Մանի կոչեին, որ թարգմանի «սիրող Բրիստոս» և պատուէին զնա տուրալի գրոյ և փարմանաւ և մանշուրաւ, զոր մեք սիգել»¹² կոչեմք»¹³: Հավանաբար նրա աթոռակալության անցման սկիզբը պետք է համարել 1170 թ.՝ հոր մահից երկու տարի հետո, ինչպես և ընդունել է Ալիշանը¹⁴, հաշվի առնելով նրա՝ մետրոպոլիտ նշանակվելու համար Կիրիկիա գնալու ժամանակահատվածը: Ելտկուզ աթաբեկի կողմից «սիրեցեալ և մեծարեալ» լինելը (իշխել է 1148/9—1172 թթ.)¹⁵, նույնպես ցույց է տալիս, որ նա աթոռակալել է 1172 թվականից առաջ: Եվ քանի որ Գրիգոր Գ Պահլավունին վախճանվել է 1188 թվականին, իսկ նրան հաջորդած Ներսես Ծնոր-հալին զանակալել է 1188—1173 թվականներին, ապա Ստեփանոս Գ-ը իր ձեռնա-

դրությունն ստացել է Ներսես Ծնորհալուց: Կիրիկիայում նա ակամատես է լինում հայ ճարտարապետության, գրականության և լեզվաբանության հայ մշակույթի բուռն վերելքին, որը և մեծ տպավորություն է գործում նրա վրա:

Ստեփանոս Գ-ը հաստատվում է ոչ թե Տաթևում, այլ աթոռանիստ է ընտրում Ամաղու Նորավանդը. ուր թաղված էր և իր հայրը՝ Գրիգոր Մեղրեցին, որովհետև «հին աթոռն անբեալ էր և ապականեալ»¹⁶: Աթոռի տեղափոխման մյուս և զխավոր պատճառն, անշուշտ, Սյունյաց թագավորության վերջնական կործանումն էր: 1170 թվականին ընկավ այս թագավորության անհաղթալի տարոցը՝ Բաղաբերդը, և բազմաթիվ ձեռագրերի հետ հափշտակվեցին նաև այստեղ պահված Տաթևի ու շրջակայքի վանքերի ողջ սպառքն ու հանդերձանքը, մինչդեռ Վայոց ձորը գերծ մընաց այդ ավերածություններից, ուր և ապաստան գտան Կապանի իշխանական տոհմերի մնացորդները¹⁷:

Աթոռանիստ տեղափոխվելուն օրինական ձև տալու համար Ստեփանոս Գ-ը դիմում է սելջուկ սուլթանին և կարողանում է նրանից հրամանագիր ու սիգել վերցնել, «որ ի մա ժառանգեսցեն ժառանգորդք սուրբ եկեղեցւոյն»¹⁸: Այնուհետև դիմում է ժամանակի կաթողիկոս Գրիգոր Դ Տղային (1173—1183) և նրանից շրջաբերական թուղթ է խնդրում՝ Սյունյաց մետրոպոլիտության նոր նստավայրի և Նորավանդի վիճակի վերաբերյալ: Ելտկուզ աթաբեկից (սա իշխում էր Գանձակում և կարճ ժամանակով իր իշխանությանն էր միացրել Հայաստանի հյուսիսային շրջանները, ընդ որում և Սյունիքը)¹⁹ հաստատուն մանշուր է վերցնում՝ Ամաղու Նորավանդի նախկին կալվածքների վերաբերյալ, դրանց ավելացնելով նաև Ագարակի ձոր գյուղն ու Անապատի բերդը: Ելտկուզ աթաբեկի այս «առատաձեռնությունը», մեր կարծիքով, պետք է բացատրել նրանով, որ Վրաստանի հետ գոտեմարտի պայտրաստովող Գանձակի ամիրայությանը սկզբնական շրջանում բոլորովին ձեռնտու չէր իր հանդեպ կրոնական թընամանքի հրահրել տեղի քրիստոնյա բնակչությանը: Ընդհակառակն, ինչպես քիչ հետո կտեսնենք, նրանք հանդուրժում են նույնիսկ Ելտկուզ Օրբելյանի կողմից

⁹ Նույն տեղը:

¹⁰ Ս. Բաղխոդարյան, «Դիւան հայ վիմագրութեան», հտ. Գ, Երևան, 1987 թ., էջ 284:

¹¹ Ստ. Օրբելյան, էջ 364:

¹² Ըստ Ա. Աթրահամյանի, Տաղրա գիւղը սուլթանական պաշտոնական գրություն է, խրախուսական բովանդակությամբ, ֆարմանը և մանշուրը հրովարտակն է, իսկ սիգելը նշանակում է կայսերական հրամանագիր: Տես «Սյունիքի պատմություն», էջ 489:

¹³ Ստ. Օրբելյան, էջ 251: (Հր. Անառյանը «Ֆախր էլ Մանի» թարգմանել է «պարծառ քրիստոնեից»: Տես Հր. Անառյան «Հայոց անձնանունների բառարան», հտ. Դ, էջ 818):

¹⁴ Ղ. Ալիշան, Նշվ. աշխատ., էջ 20:

¹⁵ Հ. Մանանդյան, Երկեր, հտ. Բ, Երևան, 1978 թ., էջ 110—111:

¹⁶ Ստ. Օրբելյան, էջ 257:

¹⁷ Գ. Մ. Գրիգորյան, «Սյունիքը Օրբելյանների օրոք», Երևան, 1981 թ., էջ 42:

¹⁸ Ստ. Օրբելյան, նույն տեղը:

¹⁹ Հ. Մանանդյան, Նշվ. աշխատ., էջ 140:

կրոնափոխության իրենց առաջարկի մերժումը և ամուսնությունը քրիստոնյա կնոջ հետ, թողնելով իր պաշտոնին, այսինքն՝ որպես Նախիջևանի որոշ շրջանների կուսակալ:

Պետք է նկատել, որ Ստեփանոս Ֆախր էլ Մսեհի կողմից պատահական չէր Աթոռի համար Ամաղու Նորավանքի ընտրությունը. դեռևս Կապանի ավերումից (1103)²⁰ հետո, 1105 թվականին, այստեղ էր հաստատվել Բաղքի Հասան իշխանի որդին՝ Հովհաննես Կապանեցի եպիսկոպոսը, որը տարբեր միջոցներով ավելացրել էր վանքապատկան գյուղերի ու հողատարածությունների թիվը, բարվոքել վանքի տրամադրված փիճակը, հավաքել «կրոնատուր ու ճգնակեաց» հոգևորականներ, մահմեդական տիրակալներից հատուկ հրամանագիր էր վերցրել այս նոր եպիսկոպոսական վիճակի վերաբերյալ և այլն: Ամաղու Նորավանքը հռչակված էր մահ որպես սրբավայր-ոփստանեղի. Նորավանքի մոտ էր կառուցված Ս. Փոկաս մատուռ-եկեղեցին, ուր թաղված էր Ս. Փոկաս Հայրապետի մասունքը: Միաժամանակ այստեղից կարելի էր անմիջական կապի մեջ լինել թե՛ սելջուկյան պետության իշխանության ներքո գտնվող Հայաստանի խոշոր կենտրոններից մեկի՝ Նախիջևան քաղաքի, և թե՛ ընդհուպ մինչև Անանի հյուսիսային տարածքներն ու Այարատյան դաշտավայրի մի զգալի մասը ազատագրած Ջալալյան իշխանների ու վրաց արքունիքի հետ: Մյուս կողմից Բաղաթափության կործանման ու ավերման ժամանակ Վայոց ձորը չէր մտնում այդ թագավորության կազմի մեջ: Այն դեռևս Գագիկ Ա. Բագրատունու (888—1020) ժամանակ անջատվել էր այդ թագավորությունից և կցվել Բագրատունյաց թագավորությանը²¹, և հետագայում գրավել սելջուկների կողմից, հավանաբար Նախիջևանի հետ միասին՝ 1170 թվականից առաջ: Ուստի Բաղաթափության անկման ժամանակ այդ թագավորությանը ենթակա շրջանների նման չէր ավերվել: Սա երևում է հատկապես այն փաստից, որ Սյունիքի թագավորական տան ժառանգներից ոմանք, Բաղաթափի անկումից հետո, ապաստան են գտնում Վայոց ձորում²²:

Վերադառնալով Սյունիք և հաստատվելով Ամաղու Նորավանքում, նորոգման մեծ

րոպոյիտը սերտ կապեր է հաստատում մի կողայից Ելսկուզ աթաբեկի, նրա որդիներ Փահլավանի ու Խզիկ Ասլանի, և մյուս կողմից՝ Թամար թագուհու (1184—1213), Գեորգի Լաշայի (1213—1223), Ջալալյան ապաստարի (ընդհանուր գորահրամանատար) և Իվանե աթաբեկի (խնամակալ, փոխարքա) հետ: Վերջիններս Կայեն գավառում նրան «հանգստյան տեղ են հատկացնում» Հաղարծինյան Արասածոր գյուղը: Հետագայում Սյունյաց Օրբելյանների տիրությունների մաս են կազմում ինչպես արա, այնպես էլ Կայեն գավառի այլ տարածքներ²³: Սակայն փաստեր չլինելու պատճառով չենք կարող ասել, թե արդյո՞ք Հաղարծինը այս ժամանակահատվածում կցվել էր Սյունյաց մետրոպոլիտությանը: Առավել ևս, որ Հաղարծինի արձանագրություններում որևէ հիշատակություն չկա Սյունյաց մետրոպոլիտների կամ Օրբելյան իշխանների մասին:

Ստեփանոս Գ-ի կարևոր ձեռնարկումներից մեկն է լինում Տաթևի ավերված եկեղեցիների վերանորոգումը: Տաթևն ավերվել էր 1138 թվականի Գանձակի երկրաշարժի ժամանակ. «...եղև շարժն Գանձակայ ի 587 թուականին և դողաց երկիր ի Բիմանց. և գմբեթն մեծ եկեղեցուն ի Տաթև քոյորապոյր շրջեկան թռեաւ և անկաւ ի վերայ սուրբ Գրիգորոյն և գաթին որ ի դրանն կսոյր և փոյց առ հասարակ»²⁴: Սակայն Ստեփանոսը կարողանում է վերականգնել միայն գլխավոր եկեղեցու գմբեթը, ինչպես նշում է Օրբելյանը. «Սա նորոգեաց գխախտեալ եկեղեցին ի Տաթև գսուրք Առաքեալքն (իմա՞ Պողոս Պետրոս եկեղեցին—Ճ.Ռ.), և ետ դնել գգմբեթ ի ձեռն հօրն Յակոբայ Ժահկեցոյ»²⁵: Ցավոք, որևէ արձանագրություն չի պահպանվել այս վերանորոգման վերաբերյալ: Ստեփանոս Գ-ին չի հաջողվում վերանորոգել Տաթևի համալիրի խարխված մյուս եկեղեցիները ևս: Պետք է ենթադրել, որ ինչպես քաղաքական փիճակը, այնպես էլ նյութական միջոցները թույլ չէին տալիս նրան միանգամից նման մեծածավալ աշխատանք սկսել: Հավանաբար Տաթևի վերանորոգման ծախսերը հոգալու համար է, որ ձեռներեց առաջնորդը ստիպված է եղել գրավ դնելու «...գտնէր Յովհաննիս գառազ խաչն և զթիթեղնակապն, որ ունէր թիթեղունս ոսկի ի վերայ երեսացն, և կամարակապն զկամար

²⁰ Նույն տեղը, էջ 83:

²¹ Թ. Խ. Հակոբյան, Նշվ. աշխատ., էջ 83:

²² Նույն տեղը:

²³ Գ. Մ. Գրիգորյան, Նշվ. աշխատ., էջ 51:

²⁴ Ստ. Օրբելյան, էջ 250:

²⁵ Նույն տեղը, էջ 251:

ակնածն թե՛ ի թե՛», որ հետագայում տարբեր վեճերի առիթ է տալիս: Ինչպես վերևում մշեցիքը, Ստեփանոս Գ-ն իր մեռաւեն քաղաքականության շնորհիվ, սերտ կապեր էր հաստատել Վրաց արքունիքի ու հատկապես Ջաքարյան իշխանների հետ: Դրա վաղ ապացույցն է ինչպես Հաղպատում Ջաքարեի ու Իվանեի քրոջ որդուն՝ Գրիգոր Տուտեորդուն, եպիսկոպոս ձեռնադրելը 1188 թվականի շուրջ²⁷ («...ձեռնադրեաց եպիսկոպոս ի Հաղպատ գտեր Գրիգորին՝ քեռորի Ջաքարեի և Իւանեի»)²⁸, այնպես էլ Ջաքարյան եղբայրների մկիրատվությունները: Մյուս կողմից, Ստեփանոսը աշխատում է չգծովել Ելտկուզ աթաբեկին հաջորդած նրա որդիների՝ Խզիլ Ասլանի ու Մուհամմեդ Փահլավանի հետ, որոնք երկու մասի էին բաժանել իրենց ժառանգած ընդարձակ երկիրը, և հյուսիսային մասը բաժին էր ընկել Փահլավանին: Ստեփանոսը երբեմն այցելում էր այս բռնակալներին, որի համար և ներքին սիրում և մեծարում էին. «...սիրեցեալ և մեծարեալ յաչս աւագաց, որք ի ժամանակին իշխեցողք՝ Ելտկուզ աթաբեկին և որդոց նորա Փաղաւանին և Խզիլ Ասլանին»²⁹: Սակայն այս «սիրեցեալ և մեծարեալ» լինելն հետևանք էր այն քանի, որ 18-րդ դարի վերջին քառորդին ներքին գծադրությունների պատճառով թուլացել էր սելջուկյան պետությունը, և ժամանակի սելջուկ իշխանապետերը, նկատի ունենալով օրավոր հզորացող հայ-վրացական ռազմական համագործակցությունը, չէին ցանկանում մոդ ընդհարումների դուռ բանալ: Այս է պատճառը, որ սելջուկները լռելյայն համաձայնվում են Ելիկումի ամուսնությանը Ստեփանոս Գ-ի քրոջ աղջկա՝ Խաթունի հետ: Օրբելյան պատմիչը պատմում է, որ վրաց արքունիքի դեմ Օրբելյանների գլխա-

վորւմ անհաջող ապստամբությունից հետո Գանձակում ապաստանած Լիպարիտ Օրբելյանի որդին՝ Ելիկումը, Նախիջևան գալով, իր մոտ է կանչում Ստեփանոս եպիսկոպոսին, ընկնում նրա առաջ, մեծ զրդեմանք խոստովանում իր մեղքերը և հաղորդություն խնդրում: Այնուհետև Ելիկումը հետամուտ է լինում ամուսնության հարցի լուծմանը, որպեսզի այս կերպ ձերբագաղթի սելջուկ իշխանների՝ մահմեդականություն ընդունելու և մահմեդական կնոջ հետ ամուսնանալու պնդումներից: «...և ոչ գտանէր ի քրիստոնէից զոք պատշաճ իւրոյ իւնամուշեւան, զի աշխարհս այս դեռ ևս ի ներքոյ իշխանութեան Պարսից էր: Վասն որոյ հաւանեալ իւնամութեան Սիւնեաց եպիսկոպոսի՝ տեառն Ստեփանոսի, զի հոգևոր աստիճանաւ քարծր էր քան զնա՝ խնդրէ ի նման զդուստր քեռ նորա»³⁰, գրում է Օրբելյանը: Անշուշտ, այս ամուսնության հարցում կարևոր դեր է խաղացել Ստեփանոս եպիսկոպոսը:

Ելիկումի և Խաթունի ամուսնությունից ծնվում է մի արու զավակ, որին կոչում են պապի անունով՝ Լիպարիտ: Սակայն շուտով, 1184 թվականի Գանձակի ճակատամարտի ժամանակ³¹, որ մղվում էր սելջուկների ու վրացիների միջև, յուրայինների կողմից սպանվում է Ելիկումը, որ հարկադրաբար հանդես էր գալիս սելջուկյան քանակի պաշտպան: Ճակատամարտի ժամանակ Խաթունն ու մանկահասակ Լիպարիտը սելջուկների կողմից խիստ հսկողության տակ պահվում էին Ճահուկ զավառում: Պատմաբան պարզ է. սելջուկները կասկածում էին Ելիկումի հավատարմությանը: Ելիկումի մահից և Խաթունի՝ փախուստի անհաջող փորձից հետո, Լիպարիտին ու իր մորը Ճահուկից տեղափոխում են Նախիջևան, որ և «տաճիկ մի բռնաբարեալ զԽաթունն»՝ ածել ի տունն իր և առնու զնա կին»³²: 1211 թվականին Ջաքարյանները գրավում են Սյունիքի մի զգալի մասը: Նրանց մոտ է շտապում Ստեփանոս Գ-ը և տեղեկացնում, որ Նախիջևանում է գտնվում Ելիկումի միակ որդին՝ Լիպարիտը, որն այդ ժամանակ առնվազն 28 տարեկան պիտի լիներ: Ջաքարյանները Ստեփանոսին առաջարկում են իրենց մոտ բերել նրան: Ստեփանոս Գ-ը բարեհաջող կերպով կատարում է այդ առաջադրանքը:

Լիպարիտը, միացած Ջաքարյան եղբայրների ջոկատներին, մեկը մյուսի ետե-

²⁷ Նույն տեղը, էջ 258: Մեծ կամ Ավագ Խաչի հետ գրավ դրված «թիթեղնակապ ու կամարակապը», ըստ Ղ. Ալիշանի, մույնպես խաչեր են. «...և առաքեաց զնա (Սարգիս եպիսկոպոսին—ձ.Ռ.) առ Աթաբեկն Իւանէ՝ խմորել զԱւագ ամուսնեալ Խաչն, որ ընդ երկուց այլոց խաչից՝ Կամարակապ և Թիթեղնակապ կոչեցելոց՝ եղեալ էր ի գրաւական» («Ախտական», էջ 185): Իսկ ըստ Ա. Աբրահամյանի. «Թիթեղնակապն ու կամարակապը ոսկե զարդեր են, որ կրում էին քաղաքատիրան կրոնավորները» («Սյունիքի պատմություն», էջ 248): Մենք հավանաբար ընդունելու Ղ. Ալիշանի բացատրությունը, քանի որ նման «զարդերի» համար դժվար թե այդպիսի մեծ վեճ ծագեր:

²⁸ Սյունիքի պատմություն, էջ 495:

²⁹ Ստ. Օրբելյան, էջ 251:

³⁰ Նույն տեղը:

³¹ Նույն տեղը, էջ 288—289:

³² Գ. Մ. Գրիգորյան, Նշվ. աշխատ., էջ 48:

³³ Ստ. Օրբելյան, էջ 280:

վից սկսում է ազատագրել Սյունյաց գավառները: «Եւ զի նա եղև առաջնորդ առմամբ Սիւնեաց և այլ քերդերոյն, տալ (Իվանէ Զաքարյանը—Ճ.Ռ.) և ի ձեռն նորա զՍիւնիս, զՍյուտն, զԲարկուշատ և գայլ քերդորեն»³³: Այսպիսով, արդեն մոր կողմից Սյունյաց քարձրաստիճան խալի հետ ազգակցական կապ ունեցող Օրբելյանների այս շառավիղը հաստատվում է Սյունիքում և սկիզբ դնում Սյունյաց Օրբելյանների ճյուղին, որը կարճ ժամանակիւս բնթացքում մեծապես հզորանալով, մեծ դեր է կատարում Սյունիքի տնտեսական, մշակութային ու ռազմական վերելքի գործում:

Սյունյաց եռանդաշատ ու ձեռներեց առաջնորդ՝ Ստեփանոս Ֆախր էլ Մսեհը, այդ ժամանակ արդեն ձերացել էր: Նրա վերջին ցանկությունն է լինում ետ վերադարձնել Սյունյաց Աթոռի սրբությունները՝ Տեր Հովհաննեսի Մեծ խաչը, Թիթեղնակայն ու Կամարակալը, որոնք, Տաթևի վերանորոգման ծախսերը հոգալու համար, գրավ էր դրել Ծառապոնքի (Մահուկ գավառում) Ածոպ վանքի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսի մոտ³⁴: Սակայն Վասակ խաղաղականը հափշտակվում է դրանք, խաչը մկիրում Իվանէ Զաքարյանին, իսկ «Թիթեղնակալն ու Կամարակալը» դնում իր իշխանության տարածքում գտնվող Կեչառիսի վանքում: Ստեփանոսին հաջողվում է բազում ջանքերի շնորհիվ ազատել խաչը, քայքայ մյուս երկուսը մնում են Կեչառիսում:

Տեր Սարգիսը, որ Ստեփանոս Գ-ի կողմից հաջորդ աթոռակալ էր նշանակվել և եպիսկոպոս ձեռնադրվել, գնում է խաչը Նորավանք քերելու. «Եւ նորա գնացեալ առնու զխաչն խնդութեամբ, և անցեալ փութանակի գալ հասանէ ի Նորավանս ուխտ և բնակեցուցանէ անդէմ գտորք նշան. որ և եգիտ վախճանեալ զքեռին իր տէր Ստեփաննոս»³⁵: Տեր Ստեփանոսը վախճանվել է 1216 թվականին, Արփա (այժմ՝ Արենի) գյուղում և թաղվել Ամաղու Նորավանքում՝ իր հոր՝ Տեր Գրիգորի գերեզմանի մոտ³⁶:

Այսպիսով, ուսումնասիրելով Ստեփանոս Գ Ֆախր էլ Մսեհի կյանքն ու գործունեությունը, պատմության խորքերից մեր առջև է հանում անձնվեր հոգևորականի, հեռատես քաղաքական գործչի ու մեծ հայրենասերի հերոսական մի կերպար:

Ավելացնենք նաև, որ Ստեփանոս Գ-ին է վերագրվում այժմ կորած մի պատմական աշխատություն՝ Բաղաց թագավորության մասին, որը նա գրել է Մխիթար Անեցու խնդրանքով: Այս կորած գործի հեղինակի մասին Հ. Մարգարյանը գրում է. «...հավանաբար, Ստեփանոս Գ Ֆախր էլ Մսեհն է (1168—1216): Ստեփանոս Գ-ի ժամանակ (1116—1148) Մխիթարը դժվար թե այնքան քարձր դիրքի հասած լիներ, որ այդպիսի պատվեր տար Սյունյաց եպիսկոպոսին և նրա մասին այդքան պատկանաքով գրեր Օրբելյանը... Ստեփանոս եպիսկոպոսի երկին, ինչպես երևում է, ծանոթ է եղել նաև Վաչուրան Արևելքին»³⁷, այս գործից մեծապես օգտվել է նաև Ստեփանոս Օրբելյանը՝ իր աշխատությունները գրելիս:

Ստեփանոս Գ-ի մահից հետո Սյունյաց Աթոռը բաժանվում է երկու առանձին Աթոռների: Դեռևս Ստեփանոս Գ-ի կենդանության օրոք եպիսկոպոս էր ձեռնադրվել իր քրոջ որդին՝ Տեր Սարգիսը, որը Ամաղու Նորավանքի Սարգիս անունով առաջին եպիսկոպոսն է³⁸. «Առ կենօք սորին (իմա՝ Ստեփանոս Գ-ի—Ճ.Ռ.) էր ձեռնադրեալ եպիսկոպոս տէր Սարգիս՝ քեռորդի սորին հրամանա քեռոյն իւրոյ յԱղուանից կաթողիկոսին»³⁹: Ինչպես վերևում նկատեցինք, Ստեփանոս Գ-ը իր ձեռնադրությունն ստացել էր Ներսես Շնորհալուց, և նրա գործունեության ժամանակ որևէ վկայություն չկա Սյունյաց և Աղվանից Աթոռների հարաբերության մասին, ուստի չենք կարող ասել, թե Սյունյաց մետրոպոլիտությունը այդ ժամանակ միացել էր Աղվանից Աթոռին: «Ձեռնադրեալ եպիսկոպոս» ասելով Օրբելյանն այստեղ, քստ երևույթին, նկատի ունի որպես ապագայի Սյունյաց Աթոռի առաջնորդ-եպիսկոպոս:

Հատկանշական է, որ Ստեփանոս Գ-ի մահից և Աթոռի երկվեղկումից հետո երկու աթոռակալներից որևէ մեկը չի կոչվում այլևս մետրոպոլիտ ևս արքեպիսկոպոս, այլ պարզապես եպիսկոպոս: Դա գալիս է ասելու, որ Ստեփանոս Գ-ի մահից հետո՝ 1216 թվականից մինչև Ստեփանոս Օրբելյան, մինչև 1286 թվականը, Սյունիքը դադարել էր որպես մետրոպոլիտություն լինելուց: Դրա վկայությունն է նաև Օրբելյանի հետևյալ տողը. «...որք և (այսինքն՝ Նորավանքի և Տաթևի եպիսկոպոսները—Ճ.

³³ Նույն տեղը, էջ 291:

³⁴ Նույն տեղը, էջ 258:

³⁵ Նույն տեղը, էջ 258:

³⁶ Ղ. Ալիշան, Նշվ. աշխատ., էջ 185:

³⁷ Մխիթար Անեցի, «Մատենացի աշխարհադիպ համոզիարանաց», աշխատություններ Է. Գ. Մարգարյանի, Երևան, 1983 թ., էջ 6:

³⁸ Այսուհետև՝ Սարգիս Ա:

³⁹ Ստ. Օրբելյան, էջ 251:

ն.) միաբան թղթովք և ընծայիք յուրարկեալ էին գնա (յմա՝ Ստ. Օրբելյանին—ծ.ն.) առ կաթողիկոսն վասն նորոգման տուրք աթոռոյն հին պատուոյ և աստիճանին⁴⁰։ Դժվար է որևէ քաջատրություն տալ իր կյանքի մայրամուտին գտնվող Ստեփանոս Գ-ի այս քայլին, քանի որ բնական պիտի լիներ, եթե Սարգսիճ ուղարկեր Հայոց կաթողիկոսի մոտ՝ Կիլիկիա, ինչպես որ ինքն էր գնացել, և ոչ թե Աղվանից կաթողիկոսի։ Թերևս Ստեփանոսի այս քայլի որոշապատճառը ժամանակի Հայ եկեղեցու ներքին իրավիճակը համարենք, որ բոլորովին էլ միտրոպոսական չէր։ Չնայած Գրիգոր Զ Ապիրատյանի (1184—1203) մահից մի քանի տարի հետո որպես օրինական կաթողիկոս ընտրվել էր Հովհաննես Զ Սսեցից (ըստ Օրմանյանի, Սսեցին հաջորդել է Ապիրատյանին ոչ թե անմիջապես, այլ մի քանի տարի անց)⁴¹, սակայն կաթողիկոսական Աթոռներ էին հռչակվել նաև Անից, Սեբաստիան, Միսր և Աղթամարը⁴², իսկ Հովհաննես Զ-ը Լևոն թագավորի հետ գտնվել և քաշվել էր Հռոմկլա, չնայած իր Աթոռից չէր հեռացվել։ Մյուս կողմից, քուն Հայաստանի կամ Արևելյան եկեղեցիները, հատկապես Տուտեռոյի-Լամբրոնացի հայտնի վեճից, 1208 թվականի Լոռիի, ապա և Անիի ժողովներից հետո⁴³, ինչպես և Կիլիկիայում գտնվող Աթոռի կաթողիկամետ տրամադրությունների պատճառով մի տեսակ սառել էին Մայր Աթոռի հանդեպ և ճախնին վստահությունը չուներին։ Թերևս այս Աթոռներից միայն Աղվանքի կաթողիկոսությունն էր, որ գտնվելով քաղաքական անբարենպաստ վիճակում (այդ ժամանակ այն գտնվում էր սելջուկյան իշխանության ներքո, ինչպես և Սյունիքը, և հատկապես Գանձակի շրջանում անընդհատ կռիվներ էին մղվում հայ-վրացական և սելջուկյան զորքերի միջև), մտահոգված էր Հայոց կաթողիկոսության հովանու ներքո իր գոյությունը պահպանելով, ուր և դիմում է Ստեփանոս Գ-ը, հետագայում Սյունյաց Աթոռը

այլևայլ ազդեցություններից զերծ պահելու նպատակով։ Հատկանշական է, որ ինչպես Լոռիի ու Անիի ժողովներից ներկա եղած եպիսկոպոսների ցուցակում, այդ ընկնում էին Ջաջարեի նորանմուծություններն ու Կիլիկիայի կաթողիկոսության համաձայնությունն ու առաջարկները, այնպես էլ Տուտեռոյի-Լամբրոնացի վեճի ընթացքում չի միջվում Ստեփանոս Գ-ի անունը⁴⁴։

Մինչ Սարգիս Ա-ին անցնելը, նկատենք մի արձանագրության մեջ տեղ գտած թվական սխալը, որը սերտ կապ ունի Սարգիս Ա-ի աթոռակալման թվականի ճշտման հարցում։ Օրբելյանը գրում է, որ Ջաջարե Ջաջարյանը Ետկուզ աթաբեկից տուացած Ագարակի ձոր գյուղը վերադարձնում է Ամաղու Նորավանքին և գրում համապատասխան կալվածագիր. «Ես մեղուցեալ ծառայս Քրիստոսի Ջաջարե, Ամիր սպաալար՝ որդի մեծին Սարգսի՝ Հայոց և Վրաց առաքարապետի, դարձուցի զԱգարակի ձոր գիւղն ի Նորավանս ազատ յամենայն հարկաց և խնդրեցի ի տէր Սարգսի՝ տուաջնորդ սուրբ ոխտին... ի թուսականին Հայոց 680(1111)»⁴⁵։ Սակայն այս գյուղերը, ըստ նույն Օրբելյանի, միմյուր կամ վերադարձվում են Նորավանքին՝ Ա. Կարսպետ եկեղեցու կառուցման նպակատիքին, որը եղել է 1216 թվականին⁴⁶։

Սարգիս եպիսկոպոսին առաջին անգամ հանդիպում ենք Ստեփանոս Գ-ի կյանքի մայրամուտին, գրավ որված Խաչը վերադարձնելիս, երբ վերջինիս սլաղվերով ու հատուկ գրությամբ գնում է Իվանե Ջաջարյանի մոտ և քարեհույսող կերպով Խաչը վերադարձնում Ամաղու Նորավանք։ Սակայն, ինչպես նկատեցինք, մինչ նա տեղ կհասներ, Ստեփանոս Գ-ը վախճանվում է։ Եվ քանի որ դեռևս վերջինիս կենդանության ժամանակ Սարգիսը հաջորդ էր ճանաչվել, ուստի նա էլ հաջորդում է Սյունյաց Աթոռին։

Ստեփանոս Գ-ի մահվան թվականը, ինչպես նկատեցինք, Օրբելյանը դնում է 1216-ը, որին «յաջորդէ գտեղին տէր Սարգիս»⁴⁷։ Սակայն տարակուսանք է առաջացնում Մեսրոպ արքեպս. Սմբատյանցի՝ Ս. Աստվածածին եկեղեցու խորանի այժմ կորած մի խաչքարից արտագրած հետևյալ արձանագրությունը. «Թվին ՈԿԴ (1215) ի Հայրապետութեան Տեառն Սարգսի Միսեաց եպիսկոպոսի, ես Յակոբս կանգնեցի

⁴⁰ Նույն տեղը, էջ 318:

⁴¹ Մ. արքեպս. Օրմանյան, «Ազգապատում», հս. Ա, Բկյուրթ, 1858 թ., էջ 1558:

⁴² Նույն տեղը, էջ 1589, 1588. «Սյուս կենդանության ժամանակ նպս. էր ձեռնադրվել սրա (Ստեփանոս Գ-ի) քրոջ սրդին, իր քեռու (Ստեփանոս Գ-ի) որամանով, Աղվանից կաթողիկոսից»։ Ա. Արամանյանը այս տողը թարգմանել է հետևյալ կերպ, որը սխալ է. «Իհր սրա կենդանության օրոք կալիսկոպոս է ձեռնադրվել իր քրոջորդի Տիր Սարգիսի»։ Աղվանքի կաթողիկոս իր քեռու որամանով, «Սկյուրնի պատմություն», էջ 285:

⁴³ Նույն տեղը, էջ 1618, 1578, 1588:

⁴⁴ Նույն տեղը:

⁴⁵ Ստ. Օրբելյան, էջ 262—263:

⁴⁶ Ս. Բարխուդարյան, «Դիվան հայ վրձնագր.», հս. Դ, էջ 208:

⁴⁷ Ստ. Օրբելյան, էջ 257:

գիտաչա ծնողի իմոյ Խաչիկից, յիշեցէք»⁴⁸։ Սակայն Օրբելյանը որոշակիորեն ճշտում է, որ Չարեք բերդը Իվանենց պաշարել էր 1216⁴⁹ թվականին, ուր և Ստեփանոս Գ-ի պատվերով գնում է Սարգիսը՝ Ավագ Խաչը ստանալու։ Մի այլ տեղ նույնպես Ստեփանոս Գ-ի մահը դնում է 1216 թվականին⁵⁰։ Ուստի արձանագրության վերջին միավորը՝ Դ-ն, պետք է լիներ Ե, որը կա՛մ փորագրողի սխալն է, կա՛մ էլ Սմբատյանցն է սխալ կարդացել։ Իսկ եթե ընդունելու լինենք, որ արձանագրության թվականը ճիշտ է, ապա Ստեփանոս Գ-ի կենդանության ժամանակ՝ 1215 թվականից, հաջորդ աթոռակալ է ճշմանակվել և ճանաչվել Տեր Սարգիսը։ Այսպիսի փաստերի պիտի համդիպենք ճակ մեր ուսումնասիրության հետագա ընթացքին։

Սակայն Տեր Ստեփանոսի մահից հետո նրա հորեղբորորդին՝ Հովհաննես անունով, գնում է Աղթամար, այնտեղ ձեռնադրվում էպիսկոպոս և մատուցում Տաթևում⁵¹, այսպիսով հասնելով իր նպատակին, քանի որ «կամբ լինել աթոռակալ Սիմեոս»⁵²։ Տեր Հովհաննեսի այս փափուսզը համընկնում էր Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ձգտումներին նույնպես։ Եվ Տեր Հովհաննեսը «երթեալ Ալթամար ձեռնադրի անդ»⁵³։

Աճշտւոյտ, ճիշտ չի լինի Տեր Հովհաննեսի այս քայլը ընդհանրացնել ողջ Սյունյաց Աթոռի վերաբերյալ և ասել, թե Սյունյաց Աթոռը միացավ Աղթամարի Աթոռին, քանի որ հակաթոռ պետք է նկատել ինչպես Աղթամարի կաթողիկոսության, այնպես էլ Տեր Հովհաննեսի ընթացքը։ Հատկապես, որ Սարգիսը գնում է Կիլիկիա՝ Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221—1267) մոտ թե՛ վաճառվելու իր գահակալությունը և թե՛ ներկայացնելու համար ստեղծված վիճակը։ Նա նախօրոք Նախիջևանի, Վայոց ձորի ու Մահուկի թեմերը հաստատում է որպես «սեպհական ժառանգութիւն սրբոյ ուխտին իւրոյ Նորաւանից և գալն թողու ի նա»⁵⁴։ Այնչա՛ն այս երկփեղկման պատճառը համարում է Տեր Սարգիսն ու Տեր Հովհաննեսի միջև Ավագ Խաչի շուրջ ծագած վեճը. «Դարձեալ յնտ ամաց վեճ

մեծ եղել ի վերայ Խաչիս, յերկփեղկել եպիսկոպոսութեան Սիմեոսաց. զի Տեր Հովհաննէս հորեղբորորդի Տեառն Ստեփանոսի՝ որոյ վիճակեցաւ Տաթև, կամբ ընդ իւր տանել գալն»⁵⁵։ Այս առթիվ Տեր Սարգիսը դիմում է Իվանեին, և Դվիճում էպիսկոպոսական ժողով գումարելով, որոշվում է Խաչը թողնել Նորաւանքում, որովհետև «...մեռեալն և գերեալն զմի ունին օրինակ. որ ոչ զմեռեալն յարուցանէ՝ ոչ է ծնողացն ձնունդ, այլ նորոգողին զնա. և որ ոչ զգերեալ թափէ՝ ոչ է ստացողին յայնմհետէ, այլ գերեթափին»⁵⁶։ Հավանաբար, Տեր Հովհաննէսի՝ Ավագ Խաչը Տաթև փոխադրելու պահանջը պարզապես առիթ էր՝ իր նպատակին հասնելու համար։ Խաչի գտնվելը Աթոռներից որևէ մեկում հեղինակային ճշմանակություն է ենթադրում։

Իր գահակալության առաջին իսկ տարում, Տաթևի քաժանումից անմիջապես հետո, Տեր Սարգիսը, Լիսյարիտ Օրբելյանի օժանդակությամբ, ձեռնարկում է Նորաւանքի Ս. Կարապետ եկեղեցու շինությանը և ավարտում յոթ տարվա ընթացքում։ Ըստ Օրբելյան պատմիչի, եկեղեցու շինությունն ավարտվել է 1223 թվականին, այսինքն Տեր Սարգիսի աթոռակալությունից՝ 1216 թվականից 7 տարի հետո⁵⁷։ Սյունյաց պատմիչի նշած այս թվականները կապաճի տեղիք են տալիս, որովհետև Ս. Կարապետ եկեղեցու պատին շինարարության ավարտման վերաբերյալ արձանագրությունը գրված է 1221 թվականին⁵⁸։ Թերևս 1221 թվականին հաջորդած երկու տարիներին ևս մասնավոր աշխատանքներ են կատարվել, որոնք և նկատի ունի Օրբելյանը։ Ա. Աթրահամյանը ենթադրում է, որ արձանագրության թվականը պետք է լինի ՌՀԲ, այսինքն վերջին Բ-ն եղծվել է, ուստի այնտեղ ևս պիտի լիներ 1223⁵⁹։ Եկեղեցու կառուցման նախակատիքը կատարվում է «մեծահանդէս ժողովուր՝ էպիսկոպոսօք, վարդապետօք, գահագուլիս իշխանօք, ազատօք և տանուտերօք»⁶⁰, ուր և տարբեր իշխանների կողմից կատարվում են քաղմաթիվ նվիրատվություններ⁶¹։ Հատկանշական է, որ այդ արձանագրություններից մեկում Լիսյարիտ Օրբելյանը գրում է. «Ես Լիսյարիտ, որդի Այակումից, թոռն մեծի

⁴⁸ Մեսրոպ արքեպս. Սմբատյանց, «Տեղագրութիւն Գեղարքունոյ ի վաղաքսոյ գաւառի», Էջմիածին, 1885 թ., էջ 505։

⁴⁹ Ստ. Օրբելյան, էջ 258։

⁵⁰ Նույն տեղը, էջ 251։

⁵¹ Նույն տեղը։

⁵² Նույն տեղը, էջ 258։

⁵³ Նույն տեղը։

⁵⁴ Նույն տեղը, էջ 280։

⁵⁵ Ղ. Այիշան, «Սիուական», էջ 185։

⁵⁶ Ստ. Օրբելյան, նույն տեղը։

⁵⁷ Նույն տեղը, 281։

⁵⁸ Ս. Բաղդասարյան, «Դիվան», հտ. Գ, էջ 211։

⁵⁹ «Սյունիքի պատմություն», էջ 501։

⁶⁰ Ստ. Օրբելյան, նույն տեղը։

⁶¹ Տես «Դիվան», հտ. Գ, էջ 211, 212, 218, 214։

Արաբելեանց... շինեցի զվանքս որ կոչի Նորավանք, յառաջնորդութեան Տէր Սարգսի Սինեաց վերադիտողի»⁶²: Իսկ Գեղարքունիքի տերն ու Զաքարյան իշխանների քարձրաստիճան գործակալներից մեկը՝ Բուպաք անունով, որը մուսլայես մասնակցել էր Ս. Կարապետ եկեղեցու նախակառույցին, իր նվիրատվական կազմանագրի մեջ Տէր Սարգսին անվանում է «երջանիկ Հայրապետս մեր Տէր Սարգսիս»⁶³: Մա նա գալիս է ցույց տալու, որ Տէր Հովհաննեսի կողմից անջատված Տաթևի Աթոռը մասնավոր Աթոռ էր, որի հետ չէին հաշտվում Այուրաց իշխողներն ու քարձրաստիճան անձինք: Սարգիս Ա-ի հետագա գործունեության մասին այդ ժամանակը ներկայացնող մատենագիրները (Վարդան, Գանձակեցի և այլն) լուրս են, իսկ Այուրաց պատմիչը հաղորդում է ընդհանուր խոսքերով. «...յետ քազում արդեանց և երևելի արարուածոց գնայ ի Կիլիկիա առ քարեպաշտ արքայն Հայոց Հեթում, և պատիւ յոյով ընկալեալ ի նմանէ և տեղի հանգրստեան»՝ զաւագ Մէլիճին. և քազումս ճգնեալ անդ՝ գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ ի գերեզման Աստուծոյն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի...»⁶⁴: Արդ, Հեթում Ա-ը գահակալել է 1228—1272 թվականներին⁶⁵: Ուրեմն, Սարգիս Ա-ը Կիլիկիա է գնացել 1228 թվականից հետո: Կիլիկիայում նրա առաջին գործը լինում է Կոստանդին Ա Բարձրբերդոյ կողմից հաւատատել Նորավանքը որպէս առանձին Աթոռ. «Եւ գնացեալ ինքն առ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին՝ առնու ի նմանէ վիճակ հաստատում անխախտելի դաշամբ և թողլոք շրջաբերական վասն այսց զառաւացս, զի լիցի հաստատում վիճակ ժառանգութեան սուրբ եկեղեցւոյն Նորավանից»⁶⁶: Այնուհետև Սարգիսը առանձնանում է Մելիճու վանքը, «և քազումս ճգնեալ անդ... գնաց ի սուրբ քաղաքն Երուսաղէմ»⁶⁷: Երուսաղէմում նա խաչակիրներից գնում է Ստեփանոս Նախավկաչի Աջը և ուղարկում Նորավանք: Երուսաղէմում էլ նախատակվում է իր երեք ուղեկիցների հետ: Ստ. Օրբելյանը գրում է, որ երբ նրանք աղոթում էին Տիրոջ գերեզմանի վրա, «...առեալ խորագմին գերուսաղէմ ի Փռանգէն»⁶⁸,

սկսում են կոտորել բնակիչներին և գտնելով Տէր Սարգսին իր ուղեկիցների հետ, սպանում են աղոթքի վայրում: Այստեղ, անշուշտ, սխալվում է Օրբելյան պատմիչը, քանի որ խմբագրի շահը, կամ խորեզմշահը մինչև Երուսաղէմ չի հասել, այլ հաւանվելով մոնղոլներից, 1228 թվականին մտնում է Անդրկովկաս, մեծ ավերածություններ գործում և հասնում մինչև Ամիդ: Սպանվում է 1231 թվականին՝ մոնղոլների կողմից պարտվելուց հետո Ամիդից փախչելիս⁶⁹: Այս մասին գրում են և՛ Գանձակեցին⁷⁰, և՛ Վերաց ժամանակագրությունը⁷¹, և՛ Իբն Ալ-Ասիրը⁷²: Այսպես է ընդունված նաև ժամանակակից ուսումնասիրությունների մեջ: Միշտ է, Իբն Ալ-Ասիրը գրում է, որ Զալադդինի գործի մի մասը պարտվելուց հետո գնաց Խաուան, մի ուրիշ խումբ դիմեց Մծքին, Մոսուլ, Սինջար, Արբելա և երկրի այլ վայրեր, տակայն այստեղից չենք կարող եզրակացնել, թե խորեզմշահի գործի մի մասն էլ Երուսաղէմ է հասել և նույնիսկ գրավել այն: Օրբելյանը իր «Պատմություն» մեջ այս պատկերը վերցրել է տարիներ առաջ իր իսկ կազմած «Ժամանակագրությունից», ուր կարդում ենք. «Իսկ խորագմին անտէրումց գտեալ զաշխարհս, յանխնայ կոխեաց և աներեաց և գնաց մինչ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ. և արեամբ քրիստոնէից ելից զսուրբ տաճարն և զփողոցսն, քայց ինքն, ասի սպանեալ ի շոռոնց յանձնան արանց»⁷⁴: Օրբելյանը հավանաբար շփոթել է Եգիպտոսի Սալահադդին սուլթանին խորեզմի Զալադդինի հետ: 1228 թվականին խաչակիրները Այուրյան սուլթաններից գրավում են Երուսաղէմը, որին «վերստին տիրեցին մահմեդականները 1244 թվականին»⁷⁵: Այն, որ Սարգիս Ա-ը վախճանվել է ոչ թե 1238 թվականին (որովհետև, ըստ Օրբելյանի, աթոռակալել է 20 տարի, իսկ Նորավանքի Աթոռին, ինչպես արդեն ասացինք, նստել է 1218 թվականից), այլ

⁶² Հ. Մանանդյան, Երկիր, հոտ. Գ, Երևան, 1977 թ., էջ 198—208:

⁷⁰ Կիրակոս Գանձակեցի, «Հայոց պատմություն», Երևան, 1982 թ., էջ 165—167:

⁷¹ Վերաց ժամանակագրություն, Երևան, 1971 թ., էջ 71:

⁷³ Արարական աղբյուրներ, «Իբն Ալ-Ասիր», Երևան, 1981 թ., էջ 343:

⁷³ Նույն տեղը:

⁷⁴ «Ժամանակագրություն Ստեփանոսի Օրբելյանի», հրատարակության համար պատրաստեց Ա. Արուստմյանը, Երևան, 1942 թ., էջ 24:

⁷⁵ ՀԱ Համբարգիտարան, հոտ. Ե, Երևան, 1979 թ., էջ 17:

⁶² Նույն տեղը, էջ 211:

⁶³ Գ. Մ. Գրիգորյան, Նշվ. աշխատ., էջ 128:

⁶⁴ Ստ. Օրբելյան, էջ 252:

⁶⁵ «Հայ ժող. պատմություն», հոտ. Գ, Երևան, 1978 թ., էջ 876:

⁶⁶ Ստ. Օրբելյան, էջ 260:

⁶⁷ Նույն տեղը, էջ 252:

⁶⁸ Նույն տեղը, էջ 252:

1244 թվականի շուրջ, որոշակիորեն երեւում է նույն Օրբելյանի «Պատմության» ՀԱ գլխում քերված եպիսկոպոսների ցանկից: Այդ ցանկը Ուեսլյայն է. «Առաջին՝ Յովհաննէս Կասպանեցի—ամս ինչ: Ստեփաննոս, որդի տեառն Գրիգորի—ամս ինչ, Սարգիս—ամս 20, Ստեփաննոս—ամս 20, Գրիգոր—ամս 1, Սարգիս—ամս 24, Եւ ապա միապետեալ գերկոսին աթոռսն (նրստի) Ստեփաննոս (Օրբելեան) եպիսկոպոս Սինեաց և Նորավանհի՝ եօթներորդ»⁷⁶: Նախ, հայտնի է, որ Ստեփաննոս Օրբելյանից Սյունյաց միապետրալ Աթոռին ընտրել են 1285 թվականին և ապա, որպես միացյալ Աթոռների գլուխ, ուղարկել են Կիլիկիա՝ ձեռնադրվելու⁷⁷: Արդ, Սարգիս Ա-ը, ինչպես տեսանք, Ստեփաննոս Գ-ին (Ֆախր էլ Մսեհ) փոխարինել է 1215—16 թվականներին: 20 տարի աթոռակալելով, ըստ Օրբելյանի, պիտի մահացած լիներ 1236 թվականին, նրան հաջորդած Ստեփաննոսը՝ ևս 20, կլինի՝ 1256, այնուհետև Գրիգոր՝ 1, այսինքն՝ 1257, և վերջապես Սարգիս՝ 24, կլինի 1281: Ինչպես տեսնում ենք, քաջ է մնում շուրջ 5—6 տարի:

Նախ նկատենք, որ պահպանվել է Նորավանքի երկրորդ Ստեփաննոսի տապանաքարը՝ 2Թ (1280) թվագրությամբ⁷⁸: Իսկ Ստեփաննոսը, ըստ Օրբելյանի, աթոռակալել է 20 տարի, այսինքն՝ 1240 թվականից: (1240—1280): Ուստի նրանից առաջ եղած Սարգիս Ա-ը պիտի մահացած լինի այս

թվականի շուրջ, երբ Երուսաղեմի համար մամուլոքների ու խաչակիրների միջև կոփվեցեր էին մղվում: Իսկ Ստեփաննոսից հետո 1 տարի աթոռակալել է Գրիգորը, այսինքն՝ 1260—1261, ապա Սարգիսը՝ 24 տարի, որ կլինի 1285 թ., երբ «միապետեալ գերկոսին աթոռսն (նստի) Ստեփաննոս (Օրբելյան) ...»:

Հետադարձ հայացք ձգելով շարադրվածի վրա, Սարգիս Ա-ի գործունեության վերաբերյալ կարող ենք ասել, որ հանդես գալով քաղաքական ու ներկեղեցական պաշտպանությունների մի ժամանակահատվածում, նա առանձնակի ձեռներեցություն չի ցուցաբերել: Փոխանակ աշխատելու վերացնել իր գլխավորած Աթոռի ներքին պահպանումը, նա քաղաքարվում է միայն Նորավանքը որպես առանձին վիճակ վավերացնելով, այսպիսով առավել ևս խորացնելով ստեղծված թաժանումը, որը հետագայում, հատկապես Ստեփաննոս Օրբելյանի օրոք, քաղականին հուզումների տեղիք է տալիս: Մյուս կողմից, երբ բնաջնջվում էր ժողովուրդը և երկիրն ավերվում խորեզմցիների ու մոնղոլների արշավանքներից, Սարգիս Ա-ը տարիներով քաշվում է Մլենդ վանք, անտեղյակ իր հոտի իրավիճակից, այնտեղից էլ ուխտագնացություն կատարում Երուսաղեմ: Սակայն, մյուս կողմից, իր աթոռակալման առաջին տարիներին նա շինարարական լայն աշխատանք է ծավալում Ամադու Նորավանքում և քաղական ծաղկուն վիճակի է հասցնում այն, որը հետագայում դառնում է Վայոց ձորի կրթական օջախներից մեկն ու Սյունյաց ընդհանուր մետրոպոլիտության աթոռանիստը:

(Ծարունակելի)

⁷⁶ Ստ. Օրբելյան, էջ 364:

⁷⁷ «Սյունիքի պատմություն», էջ 8:

⁷⁸ Ս. Բարխուդարյան, «Դիվան», հտ. Գ, էջ 280:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱՍՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ,
ՈՐԸ ԼՈՒՍԱՎՈՐԵՑ՝ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԴԵՎԵՐԻ ՄՈՒՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՈՒ
ԿՈՒՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԱՐՁՐԵՑ ԴԵՊԻ ՃԵՄԱՐԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ԽԱՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

1. Հայաստանում կար Սանատրուկ³¹ ա-
նունով մի թագավոր, որը Քրիստոսին նա-
մակ գրող Ուոհայի Աթաթ թագավորի
քեռորդին էր: Ասում են, որ նա Դավիթ
արքայի ու մարգարեի ցեղից էր: Այստեղից
էլ Հայաստանի բոլոր թագավորները Դավի-
թի տնից են համարվում:

2. Հայոց այս թագավորի՝ Սանատրուկի
օրոք հայտնվեց³² Ահիմ, որի մականունն
էր Թադեոս, այսինքն՝ Ադդե³³, և նրանց
քարոզեց հալիւտի խոսքը: Սանատրուկը՝
Աթաթ թագավորի քեռորդին, ընդունեց
նրան:

3. Լսելով այդ՝ հայոց նախարարները³⁴
հավաքվեցին եկան նրա մոտ ու ասացին
նրան. «Քեզ վայել չէ լքել քո նախնիների
աստվածներին»: Նա էլ կատարեց նրանց
կամքը և լեռադարձավ իր նախկին մոլո-

րությանը:

4. Իսկ Ադդեին քարձրացրին մի քուր,
որտեղ և նա սպանվեց նրանց ձեռքով ու
թաղվեց հալիւտացյալ մարդկանց կողմից:
Շատ ժամանակ անց Սանատրուկը մահա-
ցավ: Նրանից հետո թագավորեց Արտա-
շեսը³⁵, որը նույնպես մահացավ:

5. Նրանից հետո թագավորեց Խոսրո-
ւը³⁶, մի հզոր և դաժան մարդ: Սա հաղթեց
քազում թագավորների և կոտորեց նրանց,
ժառանգելով նաև նրանց հողերը: Նրանից
սարսավում էր նույնիսկ Թալիթիզի³⁷ պար-
թևագուն³⁸ մեծ արքան, որը նրան թագա-
վոր էր կարգել:

6. Խոսրուկն ուներ Անակ³⁹ անունով մի
եղբայր: Այս Անակը դիմեց Թավրիզի ար-
քային, ասելով. «Մի վախենա իմ եղբորից,
քանզի եթե դու կամենաս, ես կգնամ ու
կսպանեմ նրան խորամանկությամբ»:

7. Այս բանը լսելով՝ Թավրիզի մեծ ար-
քան անչափ ուրախացավ ու նրան ճանա-
պարհ դրեց: Անակը շարժվեց իր ողջ զոր-
քի, կանանց, որդիների ու բոլոր տնեցի-
ների ուղեկցությամբ և ճանապարհ ընկավ՝
եղբոր մոտ գնալու համար:

* Եւրոմակված «Էքմիաժին» ամսագրի 1987
թվականի № № ԺԱ—ԺԲ-ից:

³⁰ Բնագրում՝ «դարձյալ պատմություն» (Իւի
հօւր): Ասորական ձեռագրելում «դարձյալ» բառը
նյութերի հաշորդակնությունն ընդգծելու մի եղա-
նակ է և չի մտնում որևէ որոշակի բնագրի վեր-
նագրի կազմի մեջ:

³⁰ Բնագրում՝ «ուսուցանեց (վարդապետեց)»
(Լիմմի):

³¹ Բնագրում՝ ՏՈՐԻՄԵՑ. վերջին բաղաձայնի ձայնե-
ղացումը արդյունք է հայոց լեզվի արևմտյան քար-
տեղների արտասանության:

³² Բնագրում՝ «եկավ» (Է):

³³ Թադեոս անաքլայի ասորական անվանաձևը
(Էյ):

³⁴ Բնագրում՝ «թագավորները» (Միկյ):

³⁵ Բնագրում՝ Իրփֆ, հմմտ. M. van Esbroeck, Լ'ın
nouveau temoin, p. 101.

³⁶ Բնագրում՝ կհրո. հմմտ. ամդ, էջ 108:

³⁷ Բնագրում՝ Լրյշ. հնարավոր է որոշ աղավա-
ղում:

³⁸ Բնագրում՝ աղավաղված իիհ'ի ա'իհ'ի. Հատ
Մ. վան Էսբրոկի՝ սա հայերեն «Պամիսու եւ եղ-
բար» բառերի տառադարձությունն է:

³⁹ Բնագրում՝ ուք. վերջին բաղաձայնի մասին
տե՛ս նաև նոթ. 91:

8. Երբ մա հասաւ մի քաղաքի, նրա բանակը դադար առաւ այնտեղ: Իսկ ինքը բարձրացաւ այն բլուրը, որտեղ պսակի էր արժանացել Ադրե ատաքայրը, և այդ գիշեր ճնշեց իր կնոջ հետ: Վերջինս հղացաւ նրանից այս Գրիգորին, որը լուսավորեց⁴⁰ ողջ Հայաստանը:

9. Դրանից հետո, երբ մա հասաւ Դվին⁴¹ քաղաքը և այդ մասին լսեց նրա եղբայր Խոսրովը, մեծ զորքով ելավ նրան ընդհանաջ ու, ուրախությամբ ընդունելով նրան, ասաց. «Ահա ես կործանեցի քաղում թագավորների ու ժառանգեցի նրանց երկրները: Նստիր, սրդ, ինձ մոտ, որպեսզի լինես իմ աջակիցն այս թագավորության մեջ»:

10. Անակն իր հերթին նրան ասաց. «Հենց նրա համար եմ եկել, որպեսզի մեր խոսքը մեկ լինի և մենք միաճենք ողջ աշխարհը»: Եվ Խոսրովը նրան իշխան կարգեց իր ողջ ունեցվածքի վրա, և այդ ձմեռ նրանք անցկացրին փոխադարձ ուրախությամբ ու կերուխումով:

11. Երբ եկավ ամառը, աճեց խոտը, և անասուններն ապահովվեցին կերով ու օրերը տաքացան, Խոսրովը հավաքեց իր ողջ բանակը՝ Թավրիզի մեծ արքայի հետ պատերազմելու համար:

12. Իսկ Անակը՝ նրա եղբայրը, մտածում էր, թե ինչ հնար գտնի սպանելու նրան, ինչպես խոստացել էր Թավրիզի մեծ արքային:

13. Երբ Խոսրովը մեծաթիվ զորաբանակներ հավաքեց, նրանք ճամբար դրին մի մեծ և ընդարձակ դաշտում, Դվինի դիմաց: Մի օր, մինչ Խոսրովը և Անակ եղբայրները շրջում էին դաշտում ու խորհրդակցում ինչ-ինչ գործերի մասին և բավականին հեռացել էին ճամբարից, Անակը, որը թաքուն⁴² սուր էր կրում, սրով հարվածեց Խոսրովին ու թողեց ընկած, կարծելով, թե մեռած է:

14. Երբ նրա ծառաները եկան ու տեսան նրան, պարզվեց, որ նրա մեջ դեռևս շունչ կա: Եվ մա ասաց նրան. «Ապանեցեք իմ եղբորն ու նրա տան բոլոր անդամների⁴³, ինչպես նաև նրա հետ եղող բոլոր ռազմիկներին»:

15. Հետապնդելով և հասնելով նրան Դվինի դաշտի գետի մոտ, նրանք խեղդե-

ցին նրան այդ գետում ու կոտորեցին նրա տան անդամներին:

16. Իսկ Գրիգորի՝ այս Անակի որդու դայակը, դեռևս երկու ամսական Գրիգորին մեռեց իր ծոցը և, փրկելով նրան կոտորածից, փախավ Հունաց երկիրը:

17. Նա բնակություն հաստատեց Նեոկեսարիա քաղաքում և այնտեղ էլ քրիստոնյա դարձավ: Գրիգորին մա դաստիարակեց Աստծու երկյուղով և Սուրբ Գրքի ընթերցանությամբ:

18. Իսկ մինչ այդ, լսելով Խոսրովի սպանության մասին, Թավրիզի մեծ արքան անչափ ուրախացավ և մեծաթիվ զորք հավաքած շարժվեց դեպի Դվին: Նա կոտորեց Խոսրովի տան բոլոր անդամներին ու նրա բոլոր մեծամեծներին և գրավեց նրա երկիրը:

19. Խոսրովն ուներ երեք տարեկան մի որդի, որը կոչվում էր Տրդատ⁴⁴: Սրան էլ իր դայակը փախցրեց Հունաց երկիրը: Լիկիանոս բռնակալի մոտ, ծանուցելով նրան, որ Հայոց արքայի որդին է: Նա մեծ պատվի արժանացրեց նրան, և մա զորեղ ու հսկայազուն մանուկ դարձավ:

20. Երբ սրա հորեղբորորդին՝ Գրիգորը, տասնհինգ տարեկան դարձավ, նրա դայակը նրան կին առավ: Եվ մա նրանից մի որդի ծնեց, որին կոչեց Վրթանես անուով: Ծնեց նաև մեկ ուրիշը, որին անվանեց Ռստակես⁴⁵: Ապա Գրիգորը հարցրեց իր դայակին, թե ովքեր են իր ծնողները:

21. Այնժամ մա պատմեց նրա ծնողների ողջ պատմությունը, թե ինչպես նրա հայրը սպանեց իր եղբորը և ինչպես սպանվեց ինքը, նաև՝ նրա հորեղբորորդի Տրդատի մասին, որն ազատվեց և գտնվում է Լիկիանոս բռնակալի մոտ:

22. Ապա Գրիգորը կանչեց իր կնոջը և նրան երկարորեն հորդորեց, որպեսզի իրենք լքեն աշխարհը և ապրեն սրբությամբ: Եվ մա համաձայնեց դրան:

23. Այնուհետև թողեց նրան ու իր որդիներին և զնաց տեղեկանալու իր հորեղբորորդու մասին, որպեսզի նրան ծառայություն մատուցի նրա հոր արյան դիմաց, որին սպանել էր Անակը՝ Գրիգորի հայրը:

24. Դրանից ի վեր, գտնվելով նրա մոտ, մա Աստծու երկյուղով, ողջ սրտով և ամտորոտուն մեծ ծառայություն էր մատուցում

⁴⁰ Տե՛ս ծանոթ. 30:

⁴¹ Բնագրում՝ dbyl. Դվինի արաբական անվանումն է. հմտ. M. van Esbroeck, Un nouveau témoin. p. 15.

⁴² Բնագրում վրիպմամբ տպագրված է mly փխ mly.

⁴³ Բնագրում՝ «որդիներին» (ibny):

⁴⁴ Տրդատ անունը ասորական բնագրում տառադարձված է հետևյալ ձևերով. d'yl, tr'd, trl.

⁴⁵ Բնագրում վրիպմամբ տպագրված է dws'lyws փխ rws'qws.

նրան: Եվ Տրդատը չափազանց զարմանում էր Գրիգորի վրա:

25. Մի օր նա կանչեց Գրիգորին և ասաց նրան. «Քո ծառայությունն ու հնազանդությունը շատ վայելուչ են, սակայն դու մի թերություն ունես, որ չես երկրպագում աստվածներին: Եվ եթե կատարյալ լինելու համար ամեն նաև այդ բանը՝ երկրպագես աստվածներին, ես քեզ կկարգեմ իմ ողջ ունեցվածքի վրա, և դու կդառնաս իմ փոխամորդը»:

26. Գրիգորն ասաց նրան. «Ես ձեռագործներին չեմ երկրպագի, քանի որ նրանցից շահ չկա, և նրանք նույնիսկ իրենց չեն կարող օգնել: Արդ, ես ծառայում եմ քեզ և իմ վարձն ստանում Աստծուց, որն աստեղծել է երկինքն ու երկիրը և նրանցում եղած ամեն ինչ, որին էլ հենց երկրպագում եմ»:

27. Տրդատը շատ ջանք թափեց Գրիգորի վրա, բայց չկարողանալով համոզել, ձեռք քաշեց նրանից:

28. Այդ ժամանակ կար մի դաժան բրոնակալ, հնարավորին չափ հսկայական ուժով, որը պատերազմի մեջ էր Դիոկղետիանոսի հետ: Վստահ լինելով իր ուժի վրա, նա Դիոկղետիանոսին հղեց հետևյալը.

29. «Մենք չենք ցանկանում, որ մեր բանակները մարտնչեն իրար հետ, և մեր միջև արյունահեղություն լինի: Այլ հանդիպենք իրար ես ու դու, և ով սպանի իր մրդակցին⁴⁶, թող նրան պատկանի ողջ թագավորությունը»:

30. Երբ սուրհանդակը հասավ Դիոկղետիանոսի մոտ, սա նրան պահեց իր կողքին⁴⁷ և իր ողջ տերությանը հրահանգեց զորք հավաքել և գալ իր մոտ:

31. Այնուհետև Լիկիանոսը, որի մոտ էր գտնվում Գրիգորի հորեղբորորդի Տրդատը, բազմաքանակ զորք հավաքեց՝ մոտ հինգ հազար, և Տրդատին հետը վերցրած գնաց: Գիշերասուտին նրանք հասան Դիոկղետիանոսի քաղաքը:

32. Եվ կեր փնտրեցին իրենց գրաստների համար, բայց ոչինչ չգտան, քանի որ դարպասները փակ էին: Այնժամ Տրդատը, հայացքն ուղղելով քաղաքի բարձրաբերձ աշտարակներին մեկին, վերցրեց մի երկար

ուարան, նրա ծայրին երկաթե կեռ ամրացրեց և նետեց դեպի աշտարակի գագաթը:

33. Մագլցեց քաղաքի ներսը և այդ աշտարակի մեջ գտավ բազմաքանակ գրաստներ ու հարդի խրճեր, որ կուտակված էին այնտեղ անասուններից կերակրելու համար:

34. Տրդատը, որ դեռևս քսան տարին չէր լրացրել, մի այնպիսի հսկայական ուժ ուներ, որ ամհմար էր ցկարագրել: Այսուհետև, նա գրկեց մի ավանակ, նրան դրեց հարդի խրճերի արանքը և նետեց ցած, դեպի բանակատեղին:

35. Այդպես նա կեր նետեց նրանց, մինչև որ բավականացրեց թյուրին, ապա իջավ: Դա արեց իր ուժը ցույց տալու համար: Լիկիանոսը և նրա ողջ բանակը անչափ զարմացան նրա վրա:

36. Երբ առավոտ եղավ և դարպասները բացվեցին, Լիկիանոսն իր զորքի հետ մղտավ քաղաք ու գնաց Դիոկղետիանոսի մոտ:

37. Տեսնելով, որ նրա դեմքը տխուր է և վշտացած, դիմեց նրան ու ասաց. «Ի՞նչ պատճառով է արքան այդպես տրտմած»:

38. Դիոկղետիանոսն ասաց նրան. «Այսինչ ապստամբ բռնակալը ի՞նչ լուր է ուղարկել, ասելով, թե չենք ցանկանում, որ մեր միջև արյունահեղություն լինի, այլ հանդիպենք իրար ես ու դու, և ով ընկճի իր մրդակցին⁴⁸, թող նրան պատկանի ողջ թագավորությունը: Իսկ ես գիտեմ, որ նա հսկայագործ և պատերազմասեր մարդ է»:

39. Արքան ասաց նրան. «Մի՛ տրտմիր դրա համար, քանզի ի՞նչ հետ է մի զորեղ պատանի՝ Հայոց թագավոր Խոսրովի որդի Տրդատը, որի մամը ես ներքե չեմ տեսել: Ժամանելով երեկոյան և դարպասները փակ գտնելով, մենք մնացինք դրսում: Մենք ոչինչ չուցեինք գրաստներից կերակրելու համար:

40. Այս Տրդատն էր, որ մագլցեց քաղաք և գրաստներ ու հարդ գտավ: Նա գրկեց մի ավանակ, կապեց հարդի խրճերին և իր հսկայական ուժով նետեց մեզ, կըտացնելով ողջ ճամբարը: Արդ կեր, խմիր և զվարճացիր, քանզի սա կկործանի բրոնակալին»:

41. Դիոկղետիանոսը զարմացավ լսածի վրա, կանչել տվեց Տրդատին ու պատմեց նրան այդ բռնակալի մասին: Տրդատը դիմեց նրան ու ասաց. «Մի՛ տրտմիր, տեր իմ ափքա, այլ միայն խոստացիր ի՞նչ, որ երբ հաղթեմ նրան, ի՞նչ զորք տաս, որպես-

⁴⁶ Բնագրում՝ «իր ընկերոջը» (ixbch). Ասորերենում այս կառուցվածքն ունի «մյուս» անորոշ դերանվան իմաստ (ինչպես, օրինակ, «այդ ընդ ընկերի իւրում» նշանակում է «մեկը մյուսին»):

⁴⁷ Բնագրում՝ lxth (նրա մոտ). «մոտ» բառը երևի անգամ նույն նախադասության մեջ չկրկնելու համար, այստեղ թարգմանել ենք «կողքին»:

⁴⁸ Տե՛ս ծանոթ. 46:

զի եւս նվաճեմ իմ նախնիների թագավորությունը»։ Եվ արքան խոստացավ նրան կատարել այդ բանը։

42. Ասլա Դիոկղեսիանոսը ետ ուղարկեց այն բռնակալի սուրհանդակին ու ասաց նրան. «Պատրաստվիր, որպեսզի հանդիպենք իրար պատերազմում»։

43. Այնուհետև, երբ ելան կովի և մարտակառգերը դասավորվեցին, Տրդատին հագցրին Դիոկղեսիանոսի հանդերձները, որը նրա գլխին դրեց նաև իր թագը և նրա վրա կապեց իր զենքուզարհը, հենց նեղով արքայական նժույգին։

44. Բռնակալը ձայն տվեց և ասաց. «Թող մեր մարտակառգերը չմարտնչեն իրար հետ, այլ միայն ես և դու մարտնչենք, և ով հաղթի մեզանից, թող նրան պատկանի թագավորությունը»։

45. Տրդատը, արքայական հանդերձանքով ու զենքուզարհով և արքայական թագը դրած գլխին, ելավ նրա դեմ ու ասաց. «Ահա ես»։

46. Այնժամ բռնակալը փորձեց հարվածել Տրդատին գեղարդով և նրան ցած գցել նժույգից։ Տրդատը, թուրը բռնած ձեռքը, խոյացավ բռնակալի վրա, նրան գցեց նժույգից ու, ձեռքով բարձրացնելով նրան, բերեց Դիոկղեսիանոսի մոտ։ Իսկ նրա նժույգը վերադարձավ իր ճամբարը։

47. Դիոկղեսիանոսն, իր մեծամեծների հետ, շատ ուրախացավ և նվաճեց այդ բռնակալի թագավորությունը։ Դիոկղեսիանոսը թագադրեց Տրդատին, նրան բազմաթանկ զորք տվեց և ուղարկեց իր երկիրը, որպեսզի նվաճի իր հայրերի թագավորությունը։

48. Գրիգորը նույնպես գնաց նրա հետ։ Երբ Տրդատը հասավ Եփրատ գետին, հանդիպեց քրչվորների⁴⁹, որոնք գտնվում էին այնտեղ, և նրանք բոլորին կոտորեց։ Նա անցավ Կղեսուրի⁵⁰ երկրով և ամրացրեց այն։ Իսկ այնտեղից մտավ իր հայրերի երկիրը։

49. Տեսնելով նրանց կուռքերը, երկրպագեց նրանց ու մեծամեծ զոհեր մատուցեց արձաններին։ Եվ նրանցից օգնություն խնդրեց, ասելով. «Քանի որ իմ հայրերն

անտեսեցին ձեզ, դուք երես դարձրիք⁵¹ նրանցից։ Սակայն խնդրում եմ ձեզ՝ օգնեք ինձ, ես էլ ձեզ մեծապես կպատվեմ»։

50. Եվ Գրիգորին հրամայեց երկրպագել կուռքերին։ Գրիգորն ասաց նրան. «Ես չեմ թողնի Աստծուն⁵², որն ստեղծել է երկինքն ու երկիրը, ցերեկն ու գիշերը, արեգակը, լուսինն ու աստղերը, ծովերն ու գետերը, լեռներն ու բլուրները, ամասունները՝ չորքոտանիներն ու սուլունները, միջատներն ու թռչունները,

51. որն ստեղծել է նաև մարդուն իր պատկերի համեմատ և նրան իշխան կարգել այդ բոլորի վրա, որն ստեղծել է նաև նրանց, ովքեր տեսանելի են կամ աներևույթ, և [չեմ] երկրպագի մարդկանց ձեռքով ստեղծված արձաններին, որոնք ոչ պատիվ են զոտվ, և ոչ ծաղրանք»։

52. Տրդատը թեև շատ համոզեց նրան, բայց [երբ] նա չամսաց, դիմեց նրան ու ասաց. «Առաջնորդության և թագավորության փոխարեն, որ ուզում էի քեզ շնորհել, այժմ քեզ կմատնեմ չարաչար կորստւան»։

53. Այնուհետև անօրենք հրամայեց աղբերել՝ մոտ երեք բեռ, որը բարձեցին ու կապեցին նրա վրա և գլխվալոր կախեցին նրան, իսկ տակը աղբ լցրին։ Այդպես նա մնաց յոթ օր, որից հետո հրամայեց իջեցնել նրան։

54. Եվ Տրդատը դիմեց նրան ու ասաց. «Ո՛ր է երկինքն ու երկիրն ստեղծող քո Աստվածը, որ չազատեց քեզ այս տանջանքից»։

55. Գրիգոր նահատակ⁵³ ասաց նրան. «Աստվածն իմ երկնքում է։ Նա անում է այն ամենը, ինչ ցանկանում է։ Իշխում է ողջերի ու մեռյալների վրա, և նա կարող է ինձ ազատել քո ձեռքերից»։

56. Տրդատը զայրացավ, և անօրենք հրամայեց կախել նրան գլխվալոր։ Նրա տակ մի ձագար դրին և վրան ջուր շաղե-

⁵¹ Երես դարձրիք. քնագրում՝ 'sinyfwn, որը թերևս տպագրական վրիպակ է և պետք է ուղղել 'hnyfwn.

⁵² Բնագրում Մ. վան Էսթրոեկի կողմից ընթերցված է 'li', որը թերևս պետք է ուղղել 'li'.

⁵³ Բնագրում՝ ngyx' (փառահեղ, հաղթական, հռչակավոր). այս բառը Գրիգոր Լուսավորչի նահատակ (մարտիկ, ըմբիշ— ՁՆՀՀԳՀ) մականվան ասորիերեն թարգմանությունն է (հմտ. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, աշխատության մ. Տիր-Միրոյչյան և Ստ. Մայիսայան, Տփղիս, 1804, էջ 17, 28, 28 և այլն)։ Բնագրի ոճը սլավոնական համար թարգմանության մեջ նախընտրել ենք գրաբարյան նահատակ բառը։

⁴⁹ Բնագրում՝ bix', որ քարշուկի թարգմանության մեջ վերաբնակված է 'lrb (արաբներ) բառով։

⁵⁰ Հայաստանի սահմաններում Կղեսուրը անունով մի քանի լեռնացքներ և ամրոցներ են հիշատակվում (տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1988, էջ 58)։ Մ. վան Էսթրոեկի կարծիքով՝ ասորական խմբագրության հեղինակը նկատի ունի Դերջանի լեռնացքը (տե՛ս M. van Esbroeck, Un nouveau témoins, p. 109)։

ցին, մինչև որ նա ուռաւ: Յոթ մարդ կարգեց նրա վրա, որպէսզի ծեծեն նրան և ջուր շաղ տան, և նրանք ծեծեցին նրան: Այդպէս նա մնաց երեք օր, որից հետո իջեցնել տվեց նրան:

57. Ու դիմեց նրան և ասաց. «Ո՛ր է քո Աստվածը, որ չկարողացաւ ազատել քեզ իմ ձեռքերից»: Քրիստոսի վկան նրան ասաց. «Տես, այս բոլոր տանջանքներով հանդերձ, որոնցով ինձ չարչարեցիր, նա թույլ չտվեց, որ ես մեռնեմ»:

58. Եվ որքան սաստիկ հանդիմանեց նրան, նա տեղի չտվեց: Հրամայեց բերել մի անոթ, որի մեջ կրակի կայծեր լցրին, դրին նրա գլխին ու ամրացրին վրան: Այդպէս նա մնաց յոթ օր, որից հետո հրամայեց իջեցնել այն:

59. Դարձյալ բազմիցս հորդորեց, բայց նա չհնազանդվեց նրան: Եվ հրամայեց դաժանորեն ճզմել նրան, մինչև որ նրա ոսկորները փշրվեն: Երեք մարդ կարգեց նրա վրա, որպէսզի ծեծեն նրան: Եվ այդպէս նա մնաց յոթ օր:

60. Դրանից հետո բերին սափրիչի անձնի պէս սրված մի երկաթ և քերեցին նրա գլուխն ու մարմինը: Կրակի մեջ արձիճ հալեցրին և ցողեցին նրա վրա: Հետո Քրիստոսի վկան՝ տեղ⁵⁴ Գրիգոր մահատակը, գլխավայր կախված, աղոթք մատուցեց, ասելով.

61. «Տեր Աստված ամենակալ, գթացող և ողորմած, հաղթություն տուր ինձ և ողորմիր քո ողջ ժողովրդին: Լուսավորիր այս մարդկանց մտքի աչքերը, որպէսզի նրանք գիտենան, որ դու ես միակ ճշմարիտ Աստված»:

62. Իսկ Տրդատը հրամայեց իջեցնել նրան, դիմեց նրան ու ասաց. «Ես չեմ տեսնում, որ քո Աստվածը, որին դու սիրում ես, որքէ բանով քեզ օգնեց»:

63. Քրիստոսի վկան նրան ասաց. «Աստվածն իմ երկայնամիտ է, լի բարության և ճշմարտությամբ: Նա մեղավորներին մահ չի ցանկանում⁵⁵: Նա էր, որ ինձ ուժ տվեց դիմաւորել քո այս խոշտանգումներից, որպէսզի դրանցով դու գիտենաս, որ նա ամենակարող է: Արդ, վախեցիր նրանից և դարձիր առ նա»:

64. Այնուհետև Տրդատը գայրացաւ և հրամայեց ծախել նրա ծնկներն ու դնել երկաթյա ոտնակապերի մեջ, դրանք միացնել⁵⁶ իրար և պնդել գամերով, ձեռքերի ու

ոտքերի վրա երկաթներ, իսկ պարանոցին մի մեծ քար դնել և կախել գլխի վայր: Նրա հետ աչդպէս վարվեցին յոթ օր:

65. Դրանից հետո նրան իջեցրին և երկաթյա փշեր պատրաստեցին: Քրիստոսի վկան գլորեցին դրանց վրա, և նրանք պատահողեցին նրա մարմինը: Նրա արյունը հոսեց գետնի վրա:

66. Այդ բոլոր խոշտանգումների ընթացքում նրա ոգին գորել մնաց: Նա գովերգում էր Աստծուն և աղոթում իր հալածիչների համար, որպէսզի նրանք ընթանան ճշմարտության ճանապարհով, դարձի զուգ և փրկվեն:

67. Տրդատը կանչեց նրան ու ասաց. «Ո՛ր է քո Աստվածը: Ահա ես քեզ տանջեցի, բայց նա չկարողացաւ քեզ օգնել և փրկել իմ ձեռքերից»:

68. Ծշմարիտ վկան՝ տեղ Գրիգոր մահատակը, նրան ասաց. «Աստվածն իմ միշտ ինձ հետ է և օգնում է ինձ: Նա հզոր է և ողորմած: Իր ողորմածությամբ նա ինձ ուժ տվեց քո այս բոլոր խոշտանգումների դեմ, որոնց ինձ ենթարկեցիր, որպէսզի դու ճանաչես նրան և գովաբանությամբ դառնաս առ նա: Իսկ ինձ հարության ժամանակ նա բերկրանքի կարծանացնի իր երկնային արքայության մեջ: Եվ եթե դու չդառնաս առ նա, քեզ կտանջի դժոխքում դների հետ, որոնց դու պաշտում ես»:

69. Եվ մինչ նա խոսում էր, թագավորի մեծամեծները մեկը դիմեց նրան ու ասաց. «Ինչո՞ւ ես այդպէս վարվում այս ապստամբի հետ: Սա որդին է քո հորեղբոր՝ Անակի, որն սպանեց քո հորը և կործանեց ողջ Հայաստանը: Նա արժանի չէ ապրելու»,—սրբին նա գիտեր նրա դայակի միջոցով:

70. Այնժամ Տրդատը ապշեց ու զարմացաւ և հրամայեց նրա ձեռքերն ու ոտքերը պնդել կապանքների մեջ, վզին աճուր դնել և մետել վիրաւը⁵⁷: Այդպէս էլ արեցին և նրան մետեցին վիրաւը, որի խորությունը չորս միզակի երկարության չափ էր:

71. Այն լցված էր բազում սուղուն կենդանիներով, օձերով ու տղմով: Երբ թագավորը թռնամանում էր մեկի հետ, նրան ցնում էին այնտեղ: Եվ հրամայեց նրան ցնտել այդ վիրաւը, որտեղ նա մնաց տասնհինգ տարի:

⁵⁴ «Տի-թ» (mry) բառը Մ. վան Էսթրոկի ֆրանսերեն թարգմանության մեջ բաց է թողված:

⁵⁵ Հմմտ. Եղեկ. ԺԸ, 29, 32:

⁵⁶ Բնագրում ուղղված. Մեզ չհաջողվեց ասորե-

րենի թատարաններում ժոզ բաղանջներից կազմված այդպիսի բայ գտնել, ուստի թարգմանում ենք ըստ Մ. վան Էսթրոկի վերծանության:

⁵⁷ Այս և հետագա դեպքերում վիրաւ բառի դիմաց ասորերեն բնագրում դրված է gw' (—գուր) բառը:

72. Իսկ ողորմած և քարեգութեամբ Աստված, որը պատասխանում է իր ծառաներին և չի անտեսում իր երկրպագուներին, հրեշտակի միջոցով տեղեկացրեց մի այրի կնոջ, որպեսզի ամեն օր մի նկանակ՝ հաց նետի վիրապը: Եվ աստվածային նախախնամությամբ՝ տասնհինգ տարի նա արեց այդ քանը՝ ամեն օր մի նկանակ հաց նետեց վիրապը:

73. Դա էր սրբի կերակուրը: Եվ Աստված նրան պահպանեց այդ կենդանիներից, ինչպես որ գրում Իրկել էր Դանիելին աշուժներից և նրան հաղթանակ տվել թևերի՝ նրա թշնամիների նկատմամբ, ու այնտեղ եղած բոլոր մարդկանց դարձի բերել մոլորությունից:

74. Տրդատը տիրում էր իր հայրերի թագավորությանը և մեծապես հզորացում: Իսկ Դիոկղետիանոսը հալածանք էր սկսել քրիստոնյաների դեմ:

75. Օրերից մի օր նա մի կնոջ շատ գեղեցիկ պատկեր՝ տեսավ և հրամայեց այդ պատկերի պատճենը վերադարձնել կտավի վրա, շրջել իր ողջ տերության մեջ, մինչև որ իր համար պատճենի նման մի կին գտնեն և զան հաղորդեն իրեն:

76. Դեսպանները փնտրեցին ու կանանց վանքում գտան մի կուսակրոն աղջնակ, որը կոչվում էր Հոփսիսմն⁶¹ և արքայադուստր էր: Նրա հետ էր իր դայակը, որի անունը էր Գայանե⁶²:

77. Վանքում կալիմ յոթանասուցյոթ կրոնավորուհիներ՝ անապատ և սուրբ կանայք: Դեսպանները գնացին տեղեկացնելու թագավորին: Իսկ երկնային թագավորի՝ Քրիստոսի հարսնացուները⁶³, նկատելով այդ, գլխովին ելան ու փախան Հայոց երկիրը:

78. Նրանք բաժանվեցին երկու մասի: Նրանցից քառասունը գնացին Դվինի⁶⁴ կողմերը և բնակվեցին մի ավերված հրեշտակում, որպեսզի ոչ ոք իրենց չճանաչի, իսկ մյուսները գնացին Ավան⁶⁵, Բերկի⁶⁶ քաղաքի մոտ, և հաստատվեցին լեռնային մի քարայրում:

79. Դրանից հետո, երբ դեսպանները եկան ու Դիոկղետիանոսին տեղեկացրին Հոփսիսմն կրոնավորուհու մասին, նա շատ ուրախացավ, հրահանգեց բերել նրան, ու մեծ ցնծությամբ հարսնանքի ամենայն պատրաստություն տեսավ:

80. Եվ երբ դեսպանները եկան ու չգրտան նրան, ոչ էլ կրոնավորուհիներից մեկին, շատ տխրեցին: Նրանց մասին հարցառվորն ամելով, իմացան, որ գնացել են Հայաստան: Եկան հայտնեցին թագավորին, և նա շատ վշտացավ:

81. Նա նամակ գրեց Տրդատին, ողջուցից հետո նրան ասելով. «Մենք շատ չարիքներ պատճառեցինք քրիստոնյաներին, մեր սրերը հոգեցին նրանց կոտորելուց, և երկիրը ողողվեց նրանց արյամբ, բայց նրանք քանի գնում աճում ու քաղմանում են: Իսկ նրանց, որոնց մենք կոտորեցինք, նրանք մեծ պատվով են ընկալում ու պաշտում են այն Աստծուն, որին խաչել են հրեաները:

82. Արդ, նրանցից ոմանք, որոնք կոչվում են կրոնավորուհիներ, չհավանելով մեր թագավորությունը, փախել և ապաստան են գտել քո մոտ: Նրանց մեջ են տեսել եմ մի գեղատես աղջնակ, որի նմանը չկա ողջ աշխարհում:

83. Ես անչափ ցնցված եմ նրա պատկերից: Արդ, հրամայիր փնտրել նրան ողջ քո տերության մեջ: Եթե գտնես նրան ու հավանես, վերցրու նրան, իսկ եթե ոչ՝ ուղարկիր ինձ»:

84. Եվ այն բանից հետո, երբ եկավ սուրհանդակն, ու Տրդատը կարդաց նամակը, [մարդ] ուղարկելով, յոթ օր փնտրեց նրան, բայց չգտավ ու շատ տխրեց: Սակայն մի մարդ, որ ճանաչում էր այդ սրբերին, եկավ և տեղեկացրեց Տրդատին:

85. Նա անմիջապես ուղարկեց իր զորքն ու հրամայեց շրջապատել նրանց, որպեսզի չփախան: Եվ նրանք եկան ու չորս

⁶⁰ Բնագրում՝ զլաբ', հոգնակի լույն մշտնով (= նկանակներ). հոգնակիի մշանը, մեր կարծիքով, դրված է սխալմամբ, քանի որ Ագաթանգեղոսի հալյրին քննադրում խոսքը զնում է օրական մեկ նկանակ հացի մասին (հմմտ. Ագաթ. 124):

⁶¹ Բնագրում վրիպմամբ տպագրված է bmo'broawt', սկսող է ուղղել bmo'broawt'.

⁶² Բնագրում՝ ywqot' d'otil' d'ēpyr' haw' sgy, որ Մ. վան Էսբրոեկը թարգմանել է l'image d'une femme très belle (մի շատ գեղեցիկ կնոջ պատկեր):

⁶³ Բնագրում ինչպես սուս, այնպես և Ուտագաղիպերում՝ krowpsym'. Addit. M. van Esbroeck, Un nouveau ténoiot. p. 110.

⁶⁴ Բնագրում՝ g'y'yn', այլ դեպքերում նաև՝ g'y'yn'. հմմտ. անդ, էջ 108:

⁶⁵ Բնագրում՝ mkyrth. Մ. վան Էսբրոեկը թարգմանել է les servantes (աղախիճները):

⁶¹ St'us ծանոթ. 41:

⁶⁵ Բնագրում՝ 'aw'ot: Այս տեղանվան մասին մանրամասն տե՛ս մեր սույն աշխատության առաջաբանը:

⁶⁶ Բնագրում՝ bregry. տե՛ս մեր աշխատության առաջաբանը:

գիճյալ շարքերով շրջապատեցին այն հըմ-
ձանը:

86. Տրդատն իր ծառաներից մեկին հրա-
մայեց տեսնել, թե որն է այն [կնոջ] գե-
ղեցկությունը, որին փնտրելու է դիմել հու-
նաց թագավորն, ասելով, թե նրա նմանը
չկա ողջ տիեզերքում:

87. Երբ այդ ծառան տեսավ նրան, ապ-
ջեց նրա գեղեցկությունից ու գնաց ասաց
Տրդատ թագավորին, թե նրա գեղեցկու-
թյան նմանը չկա աշխարհի քոլոր թագա-
վորություններում:

88. Այնժամ Տրդատն ասաց այն սուր-
հանդակին. «Գնա ասա Դիոկղեսիանո-
սին, որ չեմ գտել նրան, և եթե գտնեմ,
կուղարկեմ իրեն»:

89. Եվ Տրդատը Հոփսիսմեին հույակապ
արքայական հանդերձներ ու մեծաքանակ
ոսկեղեն ուղարկեց, որպեսզի նա հազմի,
ինչպես նաև ձիեր, որպեսզի նա հեծնի ու
գա իր մոտ: Նա հավաքեց իր բոլոր մե-
ծամեծներին և իր թագավորության մարդ-
կանց⁸⁷, որպեսզի իր հետ ուրախանան հար-
սանիքով:

90. Երգածայնություն, ցանկասեր պա-
րեր ու զանազան խաղեր կազմակերպեց:
Հավաքվեցին հազարավոր ու քյուրավոր
մարդիկ և ամբոխային ցնծության մեջ կո-
տորեցին իրար:

91. Այն քանից հետո, երբ մատուցվեցին
այն նվերները, որոնց մասին խոսեցինք,
Քրիստոսի կույր մերժեց ընդունել դրանք
ու չգնաց նրանց հետ: Իսկ բոլոր քույրերը
Աստծուն ուղղված միաձայն աղոթքով ու
աղերսանքով ասացին.

92. «Աստված, որ փրկեցիր Նոյին ջրո-
հեղեղից ու պահպանեցիր նրան տապա-
նի մեջ, պահպանիր նաև քո աղախնին
մեղքի ջրհեղեղից:

93. Աստված, որ ազատեցիր Սառային՝
Աբրահամի կնոջը, Փարավոնի և Արիմելե-
քի ձեռքերից, այժմ ազատիր նաև քո ա-
ղախնին ու հարսնացուն այս ամաստված
անօրենների ձեռքից:

94. Աստված, որ պահպանեցիր Անա-
նիայի տան մանուկներին հնոցի հրից և
նրանց օգնության ուղարկեցիր հրեշտա-
կին, այժմ պահպանիր նաև քո աղախնի-
ներից, որոնք պաշտում են քո անունը և
քո համար հայածանքի ենթարկվում: Մեզ
օգնության ուղարկիր քո հրեշտակին և հա-
լածիր այս գործը, որը հարելոնի բոցի
նման պաշարել է մեզ:

95. Ինչպես փրկեցիր Դանիելին աղյուծ-

ների գրոմ, այնպես փրկիր և մեզ: Եվ ինչ-
պես Նաբուգոդոնոսորը կորցրեց մարդկա-
յին կերպարանքն ու ամասունի վերածվեց,
մինչև հասկացավ ու գիտակցեց, որ դու
ես միակ Աստվածը, այնպես վարվիր նաև
այս ասպտամբի ու հեթանոսի հետ, որ-
պեսզի չմոխրորա քո ծառաների վրա և
իմանա, որ դու ես միակ ճշմարիտ Աստ-
վածը»:

96. Եվ աբ պահին նրանց վրա լույս ի-
ջավ ու նրանց մի ձայն հասավ, որն ասում
էր. «Լսեցի ձեր աղոթքը, և ինչպես ձեզ
ազատեցի (Դիոկղեսիանոսից, կազատեմ
նաև սրանից»:

97. Հանկարծ հողը ցնցվեց երկրաշար-
ժից, և այն ամբարտապան մարդիկ, որոնք
հսկում էին նրանց, ընկան իրենց ձիերից,
սաստիկ ահաբեկված ու դողալով:

98. Իսկ դեսպանները, որոնք նվերներ
էին բերել, ու դրանք չէր ընդունել Քրիս-
տոսի աղախինը, գնացին տեղեկացրին
Տրդատին: Եվ նա հրամայեց, որ նա գա
ծաղրոծանակով, քանզի չէր համաձայնել
զալ պատվով:

99. Հետո նրան բռնեցին բերին Տրդատի
պալատը: Երգողներն ու մյուս խաղացողնե-
րը ցնծում և ուրախանում էին՝ կարծես հարս
տեսած: Իսկ Տրդատը, տեսնելով նրան,
ապշեց նրա գեղեցկությունից և նրան խոս-
տովմեր տվեց՝ իր թագավորության տիրու-
թյուն դառնալու պայմանով:

100. Դեռատի սուրբ Հոփսիսմեին՝
Քրիստոսի աղախինը, դիմեց նրան ու աս-
աց. «Ես Քրիստոս արքային եմ պաշտում
և նրա հարսնացուն եմ: Քո սիրաշահում-
ներն ու խոստովներն ինձ ամենևին հա-
ճո չեն: Ես երես չեմ թեքի իմ Աստծուց,
որն ստեղծել է երկինքն ու երկիրը»:

101. Ծառ քոնադատելուց հետո, երբ նա
չհնազանդվեց, ձեռք ձգեց նրան: Սակայն
Աստծու աղախինը նրանից ստացած զո-
րությանը, որ բնակվում էր իր մեջ, նրան
հրեց դեպի պատը և պատառոտեց նրա
հանդերձները:

102. Եվ առավոտից մինչև իններորդ
ժամը սրբուհուն տանջելուց հետո, երբ նրա
ուժը սպառվեց, ժամը իննի մոտ դուրս ե-
կավ հաց ուտելու ու հանգստանալու:

103. Միճդնեռ երանություն անձկության
մեջ աղոթում և աղերսում էր Աստծուն, որ
իրեն ազատի նրանից, ինչպես թռչունը
որսորդի որոգաթից:

104. Տրդատը կանչեց նրա դայակին՝
Գայանեին ու ասաց նրան. «Խնդրում եմ
քեզ ասես նրան, որ հնազանդվի մեր թա-
գավորությանը և հակառակություն ցույց
չտա մեզ, իսկ ես կմեծարեմ նրան, նույն-

⁸⁷ Բնագրում՝ Ibny (որդիներին). Մ. վան Էսթրո-
կը թարգմանել է les sujets (հպատակներին):

միսկ թագուհի կդարձնեմ, քեզ էլ մեծ պատվի կարժանացնեմ»։ Գայանեն պատահականեց նրան, ասելով, «Ես նրան կասեմ այդ բաները և ավելի քան այդ»։

105. Ապա Գայանեն Հռիփսիմեին ասաց հունարեն. «Տե՛ս, դուստր իմ, ո՛ւմ ես խոստացել պահել քո կուսությունը։ Ո՛չ արդյոք Քրիստոս արքային, որն անապական է և որի արքայությունն անանց ու անսպառ է։

106. Նրան՝ ով մեռցնում ու կենդանացնում է, նրան՝ ով յուրաքանչյուրին հատուցում է ըստ իր գործերի։ Եվ նրանց, ովքեր կատարում են իր կամքը և ընթացում իր ճանապարհով, ովքեր հալածվում են իր համար և հանուն իրեն համբերում տանջանքների ու մեղություն, կու-

րախացնի ու վայելքների կարժանացնի իր երկնային արքայության մեջ, նրանց այնպիսի ժառանգություն տալով, որ անկնք չի լսել, մարմնավոր աչքը չի տեսել և մարդու սրտից վեր չի քարձարացել⁶⁵։

108. Իսկ նրանց, ովքեր լքում են նրան և շարժվում իրենց չար կամքով, ովքեր սիրում են ժամանակավոր կյանքն ու անցողական աշխարհը, անհետացող վայելքներն ու սպառնող ուրախությունները, կրտանջի անշեջ գեհեճում, խավարի մեջ, որտեղ լույս չկա և որտեղ ոչ որդն է պալատում⁶⁶, ոչ սատանան, որին նրանք հնազանդվել էին։

109. Տե՛ս, դուստր իմ, մի՛ սիրի՜ր չարը՝ քարոս փոխարեն, և ոչ խավարը՝ լույսի փոխարեն, ոչ էլ սատանային՝ Քրիստոսի փոխարեն, որին դու հարսնացել ես»։

110. Բայց այնտեղ կար մեկը, որ գիտեր խոսել հունարեն։ Երբ նա լսեց այս բաները, դրանք հայտնեց արքային։ Եվ նա խփեց նրան քարերով և հրամայեց ջարդել ու փշրել Գայանեի ատամները։

111. Գայանեն դարձյալ ասաց առաքինի Հռիփսիմեին. «Աստված, որ օգնեց մանուկ Դավթին, մինչև որ նա հաղթեց փղշտացի հսկա Գողիադին, նույն ինքը կօգնի նաև քո մանկությանը, մինչև որ դու հաղթես այս անաստված ապստամբին։

112. Նա քեզ կպսակի հաղթանակի պսակով։ Քանզի դու տեսար, թե ինչպես փորձություն ժամին, երբ աղոթում էինք հեճանում⁶⁷, Աստված ուղարկեց իր հրեշտակին,

որը ցնցեց նրանց, ովքեր պաշարել էին մեզ, մինչև որ նրանք ընդարմացան ու դարձան մեռյալների պես»։

113. Տրդատը մինչև կեսգիշեր մնաց տանջելու Քրիստոսի աղախին՝ Հռիփսիմեին, նրան պատրեց քաղում բաներով, քայց ուժը չպատեց։

114. Արդարև Աստված նրան հաղթանակ շնորհեց նրա (Տրդատի) նկատմամբ, քանի որ սա նրա առջև կարծես թռչնակ էր դարձել, թեև, ինչպես նախապես ասացինք, հույժ գորավոր մի մարդ էր, իսկ նա դեռևս աղջնակ էր։ Եվ նա, դժվարություն կրելով նրանից, թողեց նրան։

115. Այնուհետև երանուհին դուրս եկավ, չնկատվելով ոչ ոքի կողմից, և եկավ քաղաքի երկաթյա դարպասի մոտ։ Այն քաղվեց նրա առջև, և նա ելավ ու մոտ մեկ մղոն հեռացավ քաղաքից։

116. Հետո աղոթքի կանգնեց ու ասաց. «Ի՛նչ մատուցեմ քեզ, Տե՛ր Աստված իմ, ինձ տրված բոլոր բարիքներիդ փոխարեն։ Ես ոչինչ չունեմ քեզ մատուցելու։ Միայն անձն իմ, որ դու ստեղծեցիր, կարող եմ քեզ գոհել»։

117. Երբ պալատականներն իմացան, որ Հռիփսիմեն փախել է, հետապնդեցին նրան լապտերներով ու փնտրեցին նրան։ Իսկ երբ դարպասը բաց տեսան, ասացին իրար. «Նա կախարդ է»։

118. Հետապնդելով նրան, նրանք հասան նրան, գետնին չորս ցից խփեցին ու նրան կապեցին նրանցից, փորեցին նրա աչքերը, կտրեցին նրա լեզուն ու ձեռքերը, պատռեցին նրա որովայնն ու լցրին քարերով և կտրեցին նրա գլուխը։

119. Մեկառմեկ կտրելով նրա անդամները, նրանք ասում էին. «Սա է նրանց հատուցումը, ովքեր չեն հնազանդվում թագավորին»։ Եվ սուրբ վկան՝ Քրիստոսի աղախին Հռիփսիմեն, վախճանվեց վկայության մահատակությամբ։

120. Տրդատը հրամայեց խոշտանգել նաև Հռիփսիմեի դայակին՝ Գայանեին, որովհետև նա էր, որ չթողեց նրան կատարել իր կամքը։ Նրանք հանեցին նրա լեզուն պարանոցից, փորեցին նրա աչքերը և փշրեցին նրա սրունքները։ Փչեցին ու մորթազերծ արին նրան, հանեցին նրա մաշկը, և այսպես հոգին ավանդեց Աստծուն։

121. Նա վախճանվեց վկայության պսակով՝ իր երեք այլ ընկերուհիների հետ։

⁶⁵ Հմմտ. Ա. Կորնթ. Բ, 8։

⁶⁶ Հմմտ. Ես. 42, 24. Մարկ. 8, 47։

⁶⁷ Բնագրում՝ հոգի (քարայրում, Մ. վան Էսթրոկը համապատասխանաբար թարգմանել է մոտ ին գրոտե)։ Մեզ թվում է, սակայն, որ այստեղ

գրչական աղավաղում է տեղի ունեցել. ճշված բառը ամենայն վստահությամբ պետք է ուղղել հոգի (Բնագրում)։

[Տրդատը] հրամայեց քերել նաև մնացած նրեսուներեքին և սրով կոտորեց նրանց: Իսկ նրանցից մեկը, որի անունն էր Մամի, զնաց լեռը և քնակվեց քարանձառում:

122. Եվս մեկը նրանցից հիվանդ էր: Նրան թողին այն հեծանում: Եվ նա աղոթում էր ու ասում. «Տեր իմ, ի՞նչ մի՞ գրքիկի ընկերուհիներին հետ մեղմելուց և մի օտարացրու նրանցից: Այլ ընդունիր իմ հոգին նրանց [հոգիների] հետ և արժանացրու ի՞նչ ընկերուհիներին քախտին»:

123. Եվ մինչև նա աղոթում էր, վրա հասավ ու սպանեցին նրան: Եվ այդ սուրբ վկայուհիների մարմինները մեռեցին սատկած անասունների դիակների հետ:

124. Երեք օր հետո Տրդատը հիշեց Հոհիսիմի գեղեցկությունը և վառվեց նրա սիրուց: Երբ նրան հայտնեցին նրա մահվան մասին, սաստիկ վշտացավ, շարտեց թագն իր գլխին, ո՛չ կերակ, ո՛չ խմեց ու, ողբալով նրա վրա, ասաց. «Նրա մամը չեմ տեսել ո՛չ հույների մեջ, ո՛չ հայերի մեջ, ո՛չ էլ մի այլ տեղ»:

125. Իսկ նրա մեծամեծները մտան նրա մոտ, ամեն կերպ մխիթարեցին նրան ու ասացին. «Գնանք որսի ու զվարճանանք»: Նրա համար պատգարակ քերին, նա նրստեց վրան, և մեծամեծներն ընկերակցեցին նրան:

126. Երբ մեկնեցին, Աստված նրա վրա մի դև ուղարկեց. նա ընկավ սպտգարակից ու խածառեց իր մարմինը, փոխելով իր մարդկային կերպարանքն ու վերածվելով վարազի:

127. Նա զնաց անտառ և սկսեց արածել վարազների հետ: Դեերը տիրեցին նաև նրա բոլոր մեծամեծների ու բոլոր պալատականների վրա, բացի նրա քրոջից ու կնոջից:

128. Նրանք բոլորն էլ խելակորույս եղան և դիվահարների պես դեսուդեն ընկան: Իսկ Տրդատը արածում էր վարազների հետ ու խոտ էր ուտում: Ժամանակ առ ժամանակ նրա գիտակցությունը վերադառնում էր և նա հիշում էր իր թագավորությունը:

129. Այնուհետև ողորմած ու գթասիրտ Աստված, որը լսում է իր ծառաների աղոթքը, ուլքեր հարածամ դիմում եմ նրան, և որը պատժում է յուրաքանչյուրից ըստ իր կամքի, նա՝ ով կենդանացնում է իր սիրով և պատժում իր գթությամբ, տեսիլքի միջոցով ուղարկեց իր հրեշտակին:

130. Եվ նա ասաց նրա քրոջը. «Դուք չուներ մի այլ քծիշկ՝ թագավորին բուժելու և նրան առաջվա պես մարդ դարձնելու, ինչպես նաև նրա մեծամեծների գիտակ-

ցությունը վերականգնելու համար. բացի Գրիգորից, որը ծառան է կենդանի Աստծու՝ երկնքի ու երկրի և նրանցում եղած ամեն ինչի արարչի:

131. Ահա նա մետված է վիրապը, Արտաշատ՝ քաղաքի մոտ, քանի որ նրան բազում չարչարանքներով տանջել ու այնտեղ է մետել Տրդատը, որն այժմ վարազ է դարձել:

132. Այնժամ նրա բույրը կանչեց որոշ մարդկանց, ուլքեր պահպանել էին իրենց գիտակցությունը, և ասաց նրանց. «Գնանք հանեք Գրիգորին Արտաշատ քաղաքի մոտ գտնվող վիրապից, և նա կբուժի թագավորին ու նրա բոլոր մեծամեծներին»:

133. Նրան պատասխանեցին, ասելով. «Բո մեջ նույնպես դե կա, քանի որ դու ասում ես, թե թագավորին ու նրա մեծամեծներին այժմ կբուժի մի մարդ, որը ընդհանրապես ու տանջանքներից ջախջախված մարմնով տառաջահիմա տարուց ի վեր մետված է խոր վիրապը՝ ի չարաքարո ու մահացու սողուններով»: Եվ նա լռեց:

134. Մյուս գիշեր տեսիլքը հայտնվեց վարազ դարձած Տրդատի կնոջն ու քրոջը, ասելով նրանց. «Գնա քո եղբոր մոտ, քանզի ժամանակ առ ժամանակ նրա գիտակցությունը վերադառնում է, և նրան հուշիր ասել իր մեծամեծներից մեկին, որ Գրիգորին հանեն վիրապից, և նա բուժի իրեն»:

135. Գնաց գտավ նրան մի թավուտում արածելիս և ասաց նրան, ինչպես ասված էր իրեն: Նա էլ գլուխը խոնարհեց ի նշան «այո»-ի:

136. Եվ [բույրը] նախարարներից մեկին, որ կոչվում էր Օտա²², հրամայեց գործով զնալ Արտաշատ քաղաք և հանել Գրիգորին վիրապից:

137. Երբ Օտան զնաց ու հասավ Արտաշատ, տեղի մեծավորները նրան ողջունելու ելան և հուրընկալեցին նրան: Տեղեկանալով նրա խնդրին, նրան ասացին. «Նրանից ոչինչ չի մնացել, նույնիսկ հոտը, որովհետև վիրապը քնակեցված է չարաքարո կենդանիներով»:

138. Իսկ Օտան, վերցրած չորս երկար պարանգ, զնաց այդ վիրապի մոտ, դրանք կապեց իրար, մետեց վիրապը, և քարծր ձայնով կանչելով ասաց. «Գրիգոր, Աստծու ծառա, քոնիր, քանզի քո տերն ուղարկել է քո ետևից»:

²² Բնագրում՝ 'r/šl. Բնմտ. M. van Esbroeck, L'n nouveau temoin, p. 101.

²³ Բնագրում՝ 'w/. Բնմտ. M. van Esbroeck, Un nouveau temoin, p. 103.

139. Ասլա մա շարժեց պարսմը ներքե-վից, և նրանք շատ ուրախացան դրանից: Նրան ձորձեր նետեցին, որպեսզի դճի իր կողերին և վրայից կապի պարանք: Եվ մա արեց այդպես. պարսմը կապեց իր մեջքից ու ցնցեց նրանց համար:

140. Իսկ նրանք ձգեցին և նրան վեր թարձրացրին: Երբ տեսան նրան, երկրպագեցին նրան, ուրախանալով ու զարմանալով նրա վրա: Նրա մարմինը սկսեց էր: Նրան շորեր հագցրին ու զնացին:

141. Տեսնելով նրան, արտաշատցիները մեծապես ցնծացին նրա համար ու զարմացան: Իսկ երբ հասան Տրդատի վաղարշապատ⁷⁵ քաղաքը, և քաղաքի բնակիչները լուր առան, նրանք ցնծությամբ ու մեծ ուրախությամբ նրան դիմավորելու եկան:

142. Վարազ Տրդատը նույնպես եկավ նրա մոտ անտառից, գլուխը խոնարհելով գետին ու երկրպագելով: Այդպես ման նրա բոլոր մեծամեծները, որոնք արտասվում էին նրա առաջ:

143. Իսկ Քրիստոսի վկա՝ տեր Գրիգոր նահատակը, աղոթեց և խնդրեց Աստծուց, որ վերադարձնի նրանց գիտակցությունը, որպեսզի նրանք հասկանան և ըմբռնեն, ինչ որ նրանց քարոզելու և ուսուցանելու է՝ քրիստոնյա դառնալու և ճշմարտության ճանաչողությամբ հասնելու համար:

144. Եվ մինչ մա աղոթում էր, նրանց գիտակցությունն անմիջապես վերադարձավ, ինչպես նախկինում: Տրդատի գիտակցությունը նույնպես վերադարձավ, ինչպես անցյալում էր: Եվ խոսում էր մարդու պես, թեև նրա մարմինն ու գլուխը մնում էին վարազի: Նա արտահայտվում ու արտասվում էր սուրբ Գրիգորի աչքի առաջ և պաղատում էր նրան:

145. Եվ Քրիստոսի վկա՝ Գրիգոր նահատակը, դիմելով նրանց, ասաց. «Ո՛ր եք նետել այն սուրբ կրոնավորունիներին՝ Քրիստոսի վկաների մարմինները»: Իսկ նրանք ապշեցին ու զարմացան այն քանի վրա, թե վիրապում փակված մարդն ինչպես է իմացել այդ սրբերի սպանության մասին:

146. Երբ ցույց տվին դրանք, տեսան, որ դիակները, թեև նետված, բայց պահպանվել էին, և ո՛չ գազանները, ո՛չ էլ թռչ-

չունները նրանց չէին դիպել: Դրա համար վառաբանեցին Աստծուն և ամրապնդեցին հավատքի մեջ: Նրանցից՝ հաճելի բույր էր գալիս, ինչպես մի հրաշալի անուշահոտություն:

147. Գրիգորը հավաքեց նրանց դիակները և ոչ ոքի չթողեց մոտենալ դրանց, ասելով. «Ռո՛ւք իրավունք չունեք դիպելու այս սրբերի մարմիններին, քանի դեռ չեք ընդունել սուրբ մկրտությունը»: Նրան մատուցեցին թանկարժեք արքայական ըզգեստներ, որպեսզի նրանց պարուրի դրանցով, բայց մա չընդունեց դրանք:

148. Եվ Քրիստոսի վկա՝ տեր Գրիգորը, ինքն իր ձեռքերով հավաքեց այդ մարմինները և, բերելով, իրենց իսկ հանդերձներով պատանեց դրանք ու տեղադրեց այն հնձսնում, որտեղ նրանք առաջ քրճակվում էին:

149. Եվ բոլոր նախարարներն ու մնացյալ մարդիկ, ինչպես ման թագավորը, որ վարսագ էր դարձել, խնդրեցին Գրիգորին⁷⁶, ասելով.

150. «Տեր իմ, ներիր մեզ, որ մենք քեզ եթարկեցինք բազում չարչարանքների և մեր կամքով քեզ կորստյան մատնեցինք: Բայց Աստված քեզ պահպանեց, որ դառնաս մեր փրկիչը: Արդ, տեր իմ, խնդիր քո Աստծուն մեզ համար և թագավորին դարձրու ինչպես առաջ էր, ու մենք կհավատանք քո Աստծուն»:

151. Քրիստոսի վկա՝ տեր Գրիգորը, նրանց հրամայեց քուրձ հագնել և ծոմ պահել: Եվ արեցին⁷⁷ այդպես: Թագավորին նույնպես, որը վարազ էր դարձել, քուրձ հագցրին և ամբողջովին ծածկեցին, բացի աչքերից: Եվ այդպես, մինչ մա ուսուցանում էր նրանց, մնացին վաթսուհինգ օր:

152. Նա առաջնորդեց նրանց աշխարհի սկզբնավորումից, թե ինչպես Աստված արարեց երկինքն ու երկիրը և նրանցում եղած ամեն ինչ, որոնք տեսանելի են կամ սենեկնային, ինչպես՝ մինչ ստեղծեց Ադամին, սատանան հախանձեց նրան, և սրա խորհրդով մա վտարվեց դրախտից, ինչպես Ադամն ապաշխարեց՝ իր գործած մեղքի համար:

⁷⁵ Խուսքը վերաբերում է դիակներին:

⁷⁶ Բնագրում վրիպմամբ տպագրված է grygawys փխ grygawys.

⁷⁷ Բնագրում՝ Էեժ (արեց), որն, ըստ կրկնության, պետք է ուղղել Էեժա (արեցին):

⁷⁸ Ասորերեն բնագրի լեզվով (ապաշխարություն) բառը Մ. վան Հաբրոկը հանուշադրությամբ ընթերցել է լեզվով (բարություն) և համապատասխանաբար թարգմանել է լեզվով:

⁷² Բնագրում ինչպիսի այս, այնպիսի և մյուս դիպքերում՝ մեթր. ամենայն հավանականությամբ ասորական բնագրում նախապես եղել է wēšp (wala, šapay). w և l տառերի զրչական միացումից հետագայում առաջացել է m տառը. հմմտ. M. van Esbroeck, Un nouveau temolo, p. 112.


153. Եվ թե ինչպես, երբ Նոյի օրոք մեղքը շատացավ, Աստված ջրհեղեղ ուղարկեց ու կործանեց բոլոր մարդկանց և բոլոր տեսանելիներից, բացի Նոյից ու նրա յուրայիններից և նրանցից, որոնց Աստված հրամայեց նրա հետ մտնել տապանը, և Աստված աչք ժամանակ նրան պահպանեց պատուհասից:

154. Դարձյալ, թե ինչպես որոշ ժամանակ անց, երբ մարդիկ աճեցին, խորհեցին

մի մեծ աշտարակ կառուցել, որպեսզի դրանով փրկվեն պատուհասից, և ինչպես Աստված խառնեց նրանց լեզուներն ու նրանց հիշողւոյան արեց ողջ երկրում:

155. Նաև, թե ինչպես մարդիկ հեթանոսությունն աշխարհ մուծեցին և ամենայնի արարչին փոխեցին մարդկանց ձեռքով գործված կուռքերի արձանների և նմանքաների հետ:

(Ծառուհակելի)



ԱՐՄԻՆԵ ՔՅՈԾԿԵՐՑԱՆ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՍԱՂՄՈՍԱՑ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ» ՆՈՐԱՀԱՅՑ ՏԱՐԲԵՐԱԿԸ*

Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնության» մյուս բնագիրը, որը պիտի կոչենք **Բ տարբերակ**, պահպանված է համեմատաբար շատ ձեռագիր օրինակներով: Մաշտոցի անվան Մատենադարանում կան շուրջ 90 գրչագրեր՝ մեծ մասամբ ԺԵ և ԺԷ դդ. ընդօրինակություններ: Քիչ չեն նաև արտասահմանյան հավաքածուներում գտնվողները: Պահպանված օրինակները քննարկյալին յուրջ տարբերություններ չունեն, բայց մերթ ընդ մերթ նկատվում են խմբագրական միջամտություններ, հավելումներ: Ըստ տպագիր աղբյուրներում եղած տվյալների, ժամանակի առումով ամենահինը Մատենադարանի № 4958 ձեռագիրն է՝ ներկայացված իբրև 1405 թ. ընդօրինակություն³⁰: Այս թվականը վերցված է 285բ թերթում գտնվող հիշատակարանից. իրականում, սակայն, դա ոչ թե գրչինն է, այլ հեղինակինը և նկատի ունի աշխատության հորինման ժամանակը: Գրչի՝ Գրիգոր Ջուղայեցու հիշատակարանները, որոնք

գտնվում են ձեռագրի 27ա, 44բ և 88բ թերթերում, ոչ մի թվական չեն բովանդակում: Գրիգոր Ջուղայեցին Տաթևացուն աշակերտել է 1390—1408 թթ.³¹, իսկ տվյալ ձեռագիրը նա, հավանաբար, ընդօրինակել է ավելի ուշ, որովհետև այնտեղ կան հավելումներ ու, մեր կարծիքով, դրանք պատկանում են հենց նրա գրչին: Գրչության վաղեմիության և բնագրի անաղարտության առումով համեմատաբար լավ օրինակ է Մատենադարանի № 1198 ձեռագիրը, գրված 1413 թ. Տաթևում, Հերմոնում և Եղվարդում՝ Հովհաննես Երզնկացու ձեռքով: Վերջինս աշակերտել է Գևորգ Երզնկացուն, իսկ ավելի ուշ՝ Գրիգոր Տաթևացուն³²: Հենց այս գրչագիրն է մեզ համար ծառայել իբրև հիմնական աղբյուր, թեև հաճախ նկատի ենք ունեցել նաև ուրիշ՝ ավելի ուշ շրջանի ընդօրինակություններ:

«Սաղմոսաց մեկնության» **Բ տարբերակը** ունի ծավալուն խորագիր և ուշագրավ հիշատակարան, որոնք անցյալ տարբերություններով կրկնվում են բոլոր աղբյուրնե-

* Ծարուցակված «Էջմիածին» ամսագրի 1987 թվականի № № ԺԱ—ԺԲ-ից:

³⁰ Տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», Ա, էջ 1929: Ձեռագրի գրությունը միասյուն է, էջն ունի 94 տող. այն թերթերը, ուր կան հետագայի լրացումներ, ունեն տարբեր զբաղվածություն և առավել խիտ են գրված, կազմելով 48—49 տող: Այս ձեռագրի սահմաններում «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 51—52:

³¹ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Ա, էջ 608: Գրիգոր Ջուղայեցին իբրև Տաթևացու աշակերտ հիշված է նաև Թովմա Մեծոփեցու կողմից (տե՛ս Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոյ, Փարիզ, 1860, էջ 51):

³² Տե՛ս «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 141—149, 754):

րում: Բերում ենք խորագիրը ըստ № 1188 ձեռագրի օրինակի:

Նորին բազմերջանիկ և երանաշնորհ սուրբ հալոն և անյաղթ հոգևորի և լուսատու վարդապետի և խաղաղագրեաց ճրգնատրի նորոգ լուսատրչի Հայոց Գրիգորի եռամեծի՝ լուծմունք դժուարիմաց բանից և քաղութանոյ Սաղմոսսոցն Դաթի ի սրբոյն վարդապետ Մեկնութենէ, լոյժ պիտանի շարադրութեամբ և գեղեցիկ պիտառութեամբ: Ազգեաց Հոգի Աստուած և առ քեզ աւարտեալ:

Այստեղ հիշված վարդապետ Արևելցին է, իսկ ի սրբոյն վարդապետ Մեկնութենէ խոսքերը հուշում են, որ նրա կատարած Սաղմոսաց Մեկնությունը հիմք է ծառայել Տաթևացու տվյալ երկի համար: Հեղինակն Արևելցուն անդրադարձնում է նաև իր թողած հիշատակարանում, որը ոչ միայն տալիս է աշխատության գրության ճշգրիտ թվականը, այլև լույս տալով հարակից այլ հարցերի վրա: Ահա այդ հիշատակարանը.

Յիշատակարան³⁴. Ընդ որոց վերջին բանասիրաց և տրուպ խնդրողաց բանից պիտակ անուն կոչեցեալ Գրիգոր, մեղսաներկ անձամբ և տխեղծ մատամբ վերստին հաւաքեցի զքաղութանոյ մեկնութեան Սաղմոսացն Դաթի, ի մեղ և ի ստորաւսուցեալ ժամանակիս, որում բունակալն Թամուր թոյլտուութեամբ վերին խնամոցն տիրեալ թագում աշխարհի և աւերեալ. եւ կործանեցաւ յայսմ ամի ՊԵՐ (1405) թուի: Եւ պատճառ շարժութեան վերստին քաղութանոյ. նախ՝ մեծին վարդապետ համառատ և խորին տեսութիւն, որ անյալտ մնայր միշտ, հոգացա յայտնի և ընդարձակ ցուցանել. երկրորդ՝ զի առաջին քաղութանոյն կարի կարճ և պակաս թուէր. երրորդ՝ ի թախանձանաց ոմանց հարկեցեալ, մանաւանդ որ տայ ամենայնի և յայտնէ ում և կամի: Եւ է պիտանութիւն սորա. նախ՝ ի մեկնիչն վարդապետ դասի ընթերցմանց պայծառ տեսութեանց. այլն ի բանս խրատու և քարոզութեանց, և լուծումն խնդրոյ հարցողաց. նաև ի վարժումն իմաստից մտաւոր սաղմոսողաց:

[Ե]ւ թագում մեկնութիւն կրկին է գրեալ որպէս ողորմութիւն և ճշմարտութիւն և հատուցումն և այլն վասն կրկին պատճառի. նախ՝ որ էր յառաջին քաղութանոյն և յերկրորդն գրեցաւ. և դարձեալ՝ դանդաղկոտ մտաց յուրացեալ անձանց և քառակին տես-

ութիւն ըստ հասակի տեսողաց և ոչ ամենայն բանի, զի քոյրին մեկնութիւն յառաջինն գտցի և մասնատրն սատ, զի ճշմարտութիւն ճշմարտութեան ոչ ներմակացի, որպէս ասէ իմաստուն ստորագիշն աշխարհի:

Այդ, եթէ գտցի ինչ ի սմայ արժանի տեսութեան ձեր Տեառն շնորհի և վարժասիրացն նախնի, և պակասն տկարութեան մերում ներեցի: Այլ և վարժապետին իմոյ Յոհաննու Ռոտմնեցոյ յիշատակ քարի ի Տէր արձանացի. ընդ որում քառութիւն թագազան մեղաց մերոց և ծնաւուցն կրկին, արեան մերձաւորաց և աշակերտաց, եղբաւ[ը] յաւեր կամաց ձերոց մաղթեցի, որ և գրել աղաչեմ զիմաստուն զաղափարօղս սակաւս յիշատակի, որպէս և դուք գրեալ յիշեք ի զիրն անջնջելի. և ձեզ յիշողացդ ի քարի, և մեզ յուրդացս ի հողի առհասարակ Տէրն ողորմեցի, ամեն. եղիցի»:

Հիշատակարանի ստացին իսկ տողերը վկայում են, որ սա հեղինակի կատարած երկրորդ մեկնությունն է. «...վերստին հաւաքեցի զքաղութանոյս Մեկնութեան Սաղմոսացն Դաթի... յայսմ ամի՝ ՊԵՐ (1405) թուի...», այսինքն՝ մայիսի 18 տարի հետո: Հետագա շարադրանքը բացահայտում է այս տարբերակի հորինման դրդապատճառները և նպատակը: Պարզվում է, որ Տաթևացուն մնաց քայլի մղող հիմնական շարժառիթը եղել է վարդապետ Արևելցու համարձեց Մեկնությունը հրապարակելու, մատչելի դարձնելու անհրաժեշտությունը. «Մեծին վարդապետ համառատ և խորին տեսութիւն, որ անյալտ մնայր միշտ, հոգացա յայտնի և ընդարձակ ցուցանել...»: Եվ իրոք, թեկուզ ոչ մանրախոյզ քննությունը ցույց է տալիս, որ Տաթևացին իր աշխատությունը կառուցել է Արևելցու Մեկնության հիման վրա: Ընդհանրությունն է հայտնի է գալիս հենց ներածականում, որը երկու հեղինակների գործերում էլ ունի Մի է Աստուած... (կամ՝ Նախ մի է Աստուած...) սկիզբը: Հաջորդ էջերում Տաթևացին տալիս է Արևելցու առաջաբանի մեկնությունը, որի ավարտին գրում է. «Վիճչն ցայս նախերգան է վարդապետ»: Նույն ձևով, վերջին մասում նա վերադառնում է ենթերցումն Արևելցու հիշատակարանը: Նմանությունն նկատվում է նաև քննադրում, իսկ, ընդհանուր առմամբ, Տաթևացու գործն աչքի է ընկնում ըստ կանոնների առավել որոշակի բաժանումներով, շատ ավելի ընդարձակ բացատրություններով, յուրաքանչյուր կանոնի սկզբում նյութերի մանրամասն ցանկով, հաճախ նաև սաղմոսների

³³ Ձեռագրում խորագրի վերջին հատվածը նախորդում է և գեղեցիկ պիտառութեամբ խոսքերին: Ուղղել ենք ըստ այլ օրինակների:

³⁴ Ձեռ. № 1188, թերթ 267 ր:

տներին, գուրդացներին, վոխերին վերաբերող սպառնիչ քննությանը մեղադրումներով:

Այսպիսով, միանգամայն հասկանալի է վարդապետ Արևելցու անվան առկայությունը Գրիգոր Տաթևացու Մեկնության և՛ խորագրում, և՛ հիշատակարանում: Այժմ տեսնենք, թե ի՞նչ չափով և ինչպե՞ս է հեղինակի Մեկնությունը նորահայտ տարբերակը հարաբերում Բ տարբերակին: Վերջինիս հիշատակարանում հեղինակը մինևույն նյութին երկար ընդմիջումից հետո կրկին անդրադառնալու պատճառներից մեկը համարում է նախորդի համառոտ լինելը. «Ջի առաջին քաղուածոյն կարի կարճ և պակաս թուէր...»: Արդարև, Բ տարբերակը առաջին հերթին աչքի է ընկնում իր պատկառելի ծախալով: Հիմնական առաջին, անշուշտ, առաջինում օգտագործված նյութըն է, ընդ որում, շատ ենթադրութենք երկու մեկնություններում տառացիորեն կրկնում են միմյանց: Նյութերի հաջորդականությունը եւս հիմնականում պահպանված է նույնությամբ. դա, մասամբ, պայմանավորված է Սաղմոսարանի, իբրև կանոնական ժողովածուի, կայուն կառուցվածքով: 1405 թ. Մեկնությունը սաղմոսները ներկայացնում է ըստ ութ կանոնների, համապատասխան ցանկերով ու մեկնաբանություններով, իսկ նորահայտ բնագրում, ինչպես տեսանք, այդպիսի բան առհասարակ չկա:

Երկու մեկնությունների համեմատությունը ցույց է տալիս, որ շատ հատվածներ ընդարձակ տարբերակում արժանացել են առավել մանրակրկիտ քննության. քացի այդ, այստեղ հաճախ կատարված են հեղինակի նախընթաց մեկնությանը և նրա մյուս գործերին ու, մանավանդ, «Գիրք Հարցմանց»-ին ակնարկող համապատասխան հղումներ: Այդպիսի հղում, ինչպես տեսանք, արված էր Վասն այսորիկ անօգնական... խորագրով նյութի վերաբերյալ: 1405 թ. բնագրում համեմատաբար ծավալում են ներկայացված, օրինակ, ԻԹ, ԼԳ, ԽԷ, ԾԱ, ՂԶ ենթագլուխները²⁵: Կան այնպիսիք, որոնք ունեն տարբեր շարադրանք (ԺԵ, ԽԶ), իսկ մի քանիսը (ԻԲ, ԽԵ) Բ տարբերակում առհասարակ քացակայում են: Ուշագրավ է մանավանդ այն, որ երկու մեկնություններում նույնությամբ (կամ քիչ տարբերություններով) կրկնված

շատ հատվածներ ընդարձակ տարբերակում խորագրված են իբրև քարոզ: Այդպես են, օրինակ, Ի, ԻԱ, ԼԴ, ՀԲ, ՀԳ, ՀԸ, ՀԷ, ՀԹ, ԶԹ ենթագլուխները²⁶: Որպես կանոն, նորահայտ տարբերակում քարոզներ չկան ու եթե հիշյալ գլուխները հետազայում այդ անուն են ստացել առանց որևէ փոփոխություն կրելու, նշանակում է դրանք ունեցել են քարոզներից պատշաճող շարադրանք և ըստ այդմ ձեռք են բերել համապատասխան կիրառություն:

Ամփոփելով մեր խոսքը Գրիգոր Տաթևացու «Սաղմոսաց մեկնության» մասին, նշենք նաև այն հանգամանքները, որոնց թելադրանքով նա ստեղծեց իր երկու բնագրերը: Առաջին անգամ այդ գործին ձեռնարկելիս Տաթևացին պարզապես հետամուտ էր ցույց տալու ազգային ոգու և ազնվության պահպանման անհրաժեշտությունը և քացատրելու, որ ուղղադավան եկեղեցուց հեռանալը կլիներ ճակատագրական սխալ: Դա, հավանաբար, հապճեպով կատարված մի գործ էր, ուսումնական մի ծրագիր: Բնագրի մի քանի օրինակների համեմատությունը, ինչպես տեսանք, որոշ գլուխներում ի հայտ բերեց այնպիսի անհամապատասխանություններ՝ քացաղողումներ, հավելումներ, տեղաշարժեր, որոնք դժվար թե ձեռագրական պատահական վրիպումներ լինեն: Ավելի ճիշտ կլի՞նի մտածել, որ տվյալ դեպքում գործ ունենք ուսանողական լսարանների համար նախատեսված մի ձեռնարկի կամ դասախոսության հետ, ուր կատարված միջամտությունները ըստ հարկի ու պահանջի փոփոխություններ էին, որոնց, անշուշտ, իրենց մասնակցություն են բերել նաև Տաթևացու աշակերտները: Մի՞թե դրա վկայությունը չեն հեղինակային հիշատակարանում հանդես եկող Գրիգոր Զուղայեցու և Մատթեոսի անունները: 16 տարի անց, ստեղծագործական երկար ու քեղմնավոր ուղի անցնելուց հետո մինևույն նյութին անդրադառնալիս հեղինակը, դարձյալ, առաջին հերթին ներկայացնում է իբրև ուղղադավանության ջերմեռանդ պաշտպան ու քարոզիչ: Բայց այժմ նա նկատի ուներ ընթերցողների ավելի լայն շրջանակ ու հետապնդում էր առավել որոշակի նպատակ, ինչպես հավաստում է գործի հիշատակարանը. ըստ այդմ, նյութն այս դեպքում ներկայացված է ամենայն խորությամբ ու են-

²⁵ Տե՛ս հոդվածին կից ներկայացված ենթագլուխների ցանկը, որը կազմված է նորահայտ Մեկնության օրինակների հիման վրա: Բ տարբերակում դրանց համապատասխանող գլուխներն ունեն միանգամայն տարբեր թվահամար:

²⁶ Այս շարքին է պատկանում նաև ԺԳ գլխի նախերգան խորագրով հանդես եկող բաժինը, որի մասին իր տեղում արդեն խոսվել է:

թարկված մանրագին քննության: Այս տարբերակը մույնպես անաղարտ չէ, կամ խմբագրական միջամտություններ և, անտարակույս, իր հերթին ու իր չափով ունեցել է ուսումնական և մշակութային: Այդ եմ վկայում բնագրում տեղ գտած քարոզները, կանոնների և առանձին սաղմոսների վերաբերող բացատրական նշումները:

Ահավասիկ այն հիմնական արդյունքները, որ ստացել ենք Գրիգոր Տաթևացու Սաղմոսաց մեկնության մեր կատարած ընդհանուր քննությունից: Այդ քննությունը, որ լույս է ափսոսման հեղինակի ստեղծագործական կյանքի լույս մի դրվագի վրա, կրկին անգամ մերկայացնում է նրան իբրև խոհուն գիտնական, հմուտ մանկավարժ, խորամիտ քաղաքագետ և ազգային ավանդների նախանձախնդիր: Առավել խոր ու հանգամանալից հետազոտությունն աներկբայորեն պիտի բացահայտի ուշադրության արժանի այլ առանձնահատկություններ և մեծ ուսուցչապետի դիմանկարը պարզաբանող մոր գծեր:

[ՅԱՆԿ ԿԻԹՈՑ]: ԱՅՍ ԻՆՉ Է Ի ՍՄԱՅ՝

- Ա. Ոչ յարիցեն ամբարիշտք (Ա, 5)
- Բ. Ընդ առաօտս լուիցես (Ե, 4)
- Գ. Ի փայլատակել մորա (ԺԷ, 13)
- Դ. Որպես փեսայ գի ելանէ (ԺԸ, 8)
- Ե. Զի՛նչ է միամորտութիւն (ԻԱ, 21)
- Զ. Որո՞վ զանազանի օրհնեալն և գովեալն
- Է. Զի՛նչ են փառք և զի՛նչ պատիւ**
- Ը. Որո՞վ զանազանին պատկառանք և ամօթ:
- Թ. Որո՞վ զանազանին ուրախութիւն և ցնծութիւն
- Ժ. Ես առ Աստուած կարդացի (ԾԴ, 18)
- ԺԱ. Ետուր երկիւղածաց քոց նշան (ԾԹ, 8)
- ԺԲ. Համբարձից գծեոս իմ (ԿԲ, 5)

* Սույն ցանկը կալմել ենք Մեկնությունը բովանդակող բոլոր ձեռագրերի հիմամբ վրա, ցանկ չունեցող օրինակների դեպքում եզրակացվելով բնագրային խորագրերից: Նշույթներ մերկայացրել ենք որոշ խմբագրմամբ և ըստ հնարավորին ամփոփ ու հակիրճ, աշխատելով չխաթարել իմաստային ամբողջականությունը. կից, փակագծերի մեջ, նշել ենք համապատասխան սաղմոսի թվահամարը և տունը, բացառությամբ այն ենթացվածների, որոնք չեն կապվում որոշակի սաղմոսի որոշակի տամ հետ:

** № 1181 ձեռագրում այս եմթագլխին նախորդում է միևնույն թվահամարով հանդես եկող վասմ այսորիկ օծ գրեզ Աստուած... խորագրով նշույթը:

ԺԳ. Անգաք մեք ընդ հուր և ընդ ջուր (ԿԵ, 12)

ԺԴ. Ծանաչել զճանապարհս քո (ԿԶ, 3)

ԺԵ. Ծանապարհ արարէք ընդ արևմուտս (ԿԷ, 5)

ԺԶ. Զհերս կարճնովին (ԿԸ, 22)

ԺԷ. Զի՛նչ է առաելութիւն քանական

ԺԸ. Զի՛նչ է քարկութիւն և սրտմտութիւն

ԺԹ. Զի՛նչ է նախատելն

Ի. Յանկարծակի սատակեցան... երազ է կեանքս (ՀԲ, 19—20)

ԻԱ. Սեղան քո, Տէր գորութեանց (ԶԳ, 4)

ԻԲ. Զի՛նչ է ողորմութիւն և ճշմարտութիւն (ԶԸ, 2—51, նաև՝ ՂԷ, 2—3)

ԻԳ. Ընդէ՛ր ոչ գիտէ մարդ զկատարած կեանց իր

ԻԴ. Ընդէ՛ր է զի նախահարքն երկարալեացք էին և մեք սակաւ

ԻԵ. Արդարքն որպէս զարմաւենիս (ՂԱ, 13)

ԻԶ. Տասնադէս սաղմոսարանս (ԼԲ, 2. ՂԱ, 4. ԾԽԳ, 9)

ԻԷ. Տէր թագաւորեաց՝ վայելչութիւն զգեցաւ (ՂԲ, 1)

ԻԸ. Վասն է՛ր հուր գա առաջի (ՂԶ, 3)

ԻԹ. Ի գոյիցս ո՛րք են որ մնան յետ յարութեան

Լ. Երկիր պագէք պատուանդանի ոտից մորա (ՂԸ, 5)

ԼԱ. Աւուրք իմ որպէս հովանի (ԾԱ, 12)

ԼԲ. Օրհնեա, անձն իմ, գՏէր (ԾԲ, 1)

ԼԳ. Վասն է՛ր ասէ. Արարեր գխաւար (ԾԳ, 20)

ԼԴ. Առաքեա զոգի քո (ԾԳ, 30)

ԼԵ. Վասն է՛ր խոստացաւ Աքրահամու (ԾԴ, 9)

ԼԶ. Վասն է՛ր է զի Աստուած նախ զայս խոստանայ

ԼԷ. Զի՛նչ է անդրանիկ խորհուրդն աստուածաշտութեան

ԼԸ. Վասն է՛ր հրամայեաց Աստուած դաւաճանել

ԼԹ. Խոստովան եղերուք Տեառն, զի քաղցր է (ԾԵ, 1. ԾԶ, 1)

Խ. Որպէ՛ս զանազանին մեղք, անօրէնութիւնք, յանցանք

ԽԱ. Զի՛նչ են դրոնք պղնձի և միգ երկաթի (ԾԶ, 16—17)

ԽԲ. Որո՞վ զանազանի նեղութիւն և վիշտ (ԾԶ, 19)

ԽԳ. Զի՛նչ է կեցոյցն և ապրեցոյցն (ԾԶ, 20, 28—29)

ԽԴ. Զի՛նչ է հողմ և մրրիկ (ԾԶ, 25)

ԽԵ. Քրիստոս հրամայէ օրհնել զանիծիչս և մարգարէն անիծանէ

ԽԶ. Վասն է՛ր յիշատակ մեռելոց ասեմք
զԱմբիծքն (ԺԺԸ, 1)

ԽԷ. Զի՛նչ է օրենք և պատուիրանք
(ԺԺԸ)

ԽԸ. Մածաւ որպէս կաթն (ԺԺԸ, 70)

ԽԹ. Արարի իրաւունս և արդարութիւն
(ԺԺԸ, 121)

Ծ. Վասն է՛ր ցերէ Աստուած չարեաց

ԾԱ. Վասն է՛ր Աստուած զԱդամ ի
դրախտն եղ

ԾԲ. Յորժամ արար իրաւունս և արդա-
րութիւն (ԺԺԸ, 135)

ԾԳ. Զրեբան իմ քացի (ԺԺԸ, 131)

ԾԴ. Եօթն ամգամ յաւոր օրհնեցից
(ԺԺԸ, 184)

ԾԵ. Մոլորեցայ ես որպէս զոչխար
(ԺԺԸ, 176)

ԾԶ. Քանի՛ եմ եղանակք ճախախնամու-
թեան

ԾԷ. Զի՛նչ օգոտ է նեղութիւն

ԾԸ. Զի՛նչ է նետք հօգորի (ԺԺԹ, 4)

ԾԹ. Զի՛նչ նշանակէ ասելն. Վայ է իմ
(ԺԺԹ, 5)

Կ. Համբարձի զաչս իմ ի յերինս (ԺԻ, 1)

ԿԱ. Վասն է՛ր երթամք յերուսաղեմ
(ԺԻԱ, 1)

ԿԲ. Վասն է՛ր փորձութիւնս ուղխաջոր
կոչէ (ԺԻԳ, 5—8)

ԿԳ. Զի՛նչ է ասելն. Ո յուսայ ի Տէր
(ԺԻԴ, 1)

ԿԴ. Զի՛նչ նշանակէ յերիս ժամանակս
ազատութիւն ի հաքելոնէ

ԿԵ. Զի՛նչ է որ ասէ. Վասն մարդոյս
քնութեան քաղաք է մեծ և պատուական

ԿԶ. Զվաստակս ձեռաց քոց կերիցես
(ԺԻԷ, 2)

ԿԷ. Որք կոչի Քրիստոս և այգի՛ եկեղե-
ցի (ԺԻԷ, 3)

ԿԸ. Խոնարհեցայ որպէս մանուկ սար-
տուցեալ (ԺԼ, 2)

ԿԹ. Զի՛նչ է որ զմարդկութիւն ոտք կո-
չեն

Հ. Զի՛նչ է որ ասէ. Երկիր պագցուք ի
տեղոջ ուր կացեալ եմ ոտք նորա (ԺԼԱ,
7—8):

ՀԱ. Զի՛նչ է խոստումն, ուխտն և երդու-
մն

ՀԲ. Արի, Տէր, ի հանգիստ քո (ԺԼԱ, 8)

ՀԳ. Քահանայք քո զգեցցին զարդարու-
թիւն (ԺԼԱ, 9)

ՀԴ. Զի՛նչ է որ ասէ. ի պտղոյ յորովայ-
նէ նորա (ԺԼԱ, 11)

ՀԵ. Վասն է՛ր եղջիր կոչի և ճրագ
(ԺԼԱ, 17)

ՀԶ. Զի՛նչ է բարի կամ զի՛նչ վայելուչ
(ԺԼԲ, 1)

ՀԷ. Որպէս իող զի իջանէ ի գլուխ (ԺԼԲ,
2)

ՀԸ. Աստ օրհնեցէք ամենայն ճառայք
(ԺԼԳ, 1)

ՀԹ. Ի գիշերի համբարձէք զձեռս (ԺԼԳ,
2)

Ձ. Եթէ ընդէ՛ր մի է աշխարհ և ոչ բա-
զում

ՁԱ. Տէ՛ր, փորձեցեր զիս և ծանեար
(ԺԼԸ, 2)

ՁԲ. Դու ստեղծեր զիս և եղիր զձեռն քո
(ԺԼԸ, 5)

ՁԳ. Խաւար նորա որպէս զլոյս նորա
(ԺԼԸ, 12)

ՁԴ. Զանգործս իմ տեսից (ԺԼԸ, 18)

ՁԵ. Զի՛նչ է գտակք չարեաց

ՁԶ. Վասն չար գազանաց (ԺԼԹ)

ՁԷ. Ապաւենք ի նեղութեան ժամու
(ԺԼԹ, Գան՝ ԺԽԱ՛, 3)

ՁԸ. Հովանի գլխոյ իմոյ (ԺԼԹ, 8)

ՁԹ. Ուղիղ եղիցին աղօթք (ԺԽ, 2)

Ղ. Տէ՛ր, հան ի բանտէ զանձն իմ (ԺԽԱ,
8)

ՂԱ. Ուսոյց զձեռս իմ ի պատերազմ
(ԺԽԳ, 1)

ՂԲ. Անվախճան է թագաւորութիւն Աս-
տուծոյ (ԺԽԴ)

ՂԳ. Զի՛նչ է բանալ ձեռացն Աստուծոյ
(ԺԽԴ, 18)

ՂԴ. Օրհնեցէք զՏէր յերկնից (ԺԽԸ, 1)

ՂԵ. Ի Մեծացուցեմ

ՂԶ. Թէ որպէ՛ս օրհնեն արարածք զՏէր
(ԺԽԸ)

ՂԷ. Զի նա ասաց՝ և եղեն, հրամայեաց՝
և հաստատեցան (ԺԽԸ, 5)

ՂԸ. Լերինք բարձունք և ծառք (ԺԽԸ,
9)

ՂԹ. Եղբայրք իմ մեծամեծք (ԺԾԱ,
5—8)

Է. ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ԱԽԾ ԶՁԵԶ
ԱՍՏՈՒԱԾ, ԱՍՏՈՒԱԾ ՔՈ ՔԱՆ
ԶԸՆԿԵՐՈՒ*

(ԽԴ, 8—9, Գան՝ Երր. Ա, 9—10)**

[Լ]ոյս ի յուսոյ ասեմ զհանգ Աստուծոյ
ի Հօրէ ծնելոյ և՛ ամենայն աստուածաշունչ
գիրք, և՛ ոգէնուաստ վարդապետք ըստ այ-
նըմ որ ասէ մարգարէն՝ Լուսով երեսաց
քոց տեսանեմք զլոյս (Սաղմ. ԼԵ, 10—11).

* Մաշտոցի անվան Մատենադարան, Ձեռ. №
1131, թերթ 85ա—88ա:

** Իբրև խորագիր օգտագործված ճախադասու-
թյունը քաղված է հետևյալ պարբերությունից. «Այի-
րեցիր զարդարութիւն և ատենիք զանօրէնութիւն:

և ինքն Տերճ՝ ես լոյս յաշխարհ եկի (Յովն. ԺԲ, 48). և առաքեալ յԵրրայեցոց՝ Որ է լոյս փառաց և նկարագիր էութեան նորա (Եբր. Ա, 3). և ի դաւանութիւն հաւատոյ՝ Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ: Եւ վասն թագում սլաւոճառի ըստ համեմատութեան լուսոյն առ ճառագայթ իւր. [ն]ախ՝ վասն պարզութեան, զի մի՝ տեսցէ ախտ ինչ և ի մարմնական աստուածային ծնունդեան, որպէս ոչ է ի մէջ լուսոյն և ճառագայթին իւրոյ. զայստիկ ասէ երանելի Կիրիլ ի Գիրս Պարապմանց // (65բ). ք) զի անճառելի է որպիսութիւն արձակման լուսոյն, ասէ, և Տերն մեր ոչ ոք գիտէ գհայր թէ ոչ որդի, և անդրադարձի. գ) զի ի լուսոյ ճառագայթն իբր ի պատճառէ, և Տերն ել ի Հարէ և եկն յաշխարհս. դ) զի անմիջոց ժամանակի է ծագումն լուսոյն, սոյնպէս՝ Ի սկզբանն էր Բանն (Յովն. Ա, 1) ասէ առտարանիչ Յովնաննէս. ե) զորպէս անբաժանելի է լուսոյն, Բանն էր առ Աստուած (Յովն. Ա, 1—2), ասէ. գ) զի մի քնութիւն է ամենեկն լուսոյն և ճառագայթն իւրոյ, և վասն Որդոյ վկայէ՝ Աստուած էր Բանն (Յովն. Ա, 2). Է) զի որպէս լոյսն և ճառագայթն եմ ի միմեանց ըստ էութեան, սոյնպէս Հայր և Որդի, որպէս ասէ՝ Հայր ի յիս և ես ի Հայր (Յովն. Ժ, 38), և՛ Որ ետես զիս՝ [ետ]ես գՀայր իմ (Յովն. ԺԴ, 9), և թէ՛ Ես և Հայր իմ մի ենք (Յովն. Ժ, 30). ը) զի որպէս եղանակաւ ինչ է էացուցիչ լուսոյն ճառագայթն, սոյնպէս և Բանն նկարագիր է էութեան Հայր, որպէս ասէ առաքեալն. թ) զի այլ է առանձնապէս լոյսն և այլ՝ ճառագայթ իւր ի նոյն էութեան. սոյնպէս և այլ է ըստ առանձնատրութեան՝ Հայր և այլ՝ Որդի ի միում էութեան գոյով. ծ) զի որպէս առ լոյսն ձգէ ճառագայթն զհայեցումն տեսողացն, նմանապէս և Որդի՝ Որ հաւատայ յիս, ոչ հաւատայ յիս, այլ յայն որ առաքեաց զիս (Յովն. ԺԲ, 44—45), և այլն: Եւ դարձեալ՝ Ոչ ոք գայ առ Հայր՝ թէ ոչ ինն (Յովն. ԺԴ, 8—7) որոյ ի դէմս ասէ նախագուշակ մարգարէն՝ Ասէ զքեզ Աստ-

ուած, Աստուած քո, զոր մեք ուսաց զԲանն նախ՝ ի դէմս տնայրեմութեան Քրիստոսի, և ապա՝ որ ի շնորհացն առնեալք կոչեցան, յաղագս որոյ ասէ՝ օծ զքեզ: Զայս խորհեցի իւրաքանչիւրք ի ձեզ, որ և ի Քրիստոս, ասէ առաքեալն ի Փիլիպէ: Եւ գիտելի է զի ի մէջ եկեղեցեաց Ե (5) կարծիս կայ վասն միատրութեան Քրիստոսի. զի ոմն չարաչար բաժանէ և ոմն վատթար միատրէ. Բ—ք (2) յաջ և յսինակ խտտորումն ի ճշմարտութեան. իսկ միմն՝ որ է միջինն, ողելընթաց աստուածաշտութեան:

Առաջին խտտորումն՝ Նեստորին, որ բաժանեաց զՔրիստոս յ—Բ (2) քնութիւնս և Բ (2) անձինս, և կրկին կամք և ի գործս. սոյնպէս ասաց թէ՛ Գոյացութիւն մարդոյն նախ, և ապա եկեալ Բանն Աստուած քնակեցաւ ի մարդն և նույսս կուտարեաց զտնօրհնութիւն. ըստ այնմ կարծեացն ոչ է մարմնացեալ, այլ որպէս ի մարգարէսն՝ քնակութեամբ է: Եւ այլք աշակերտք նորա որ ի ժողովն Քաղկեդոնի ասացին՝ Զանձն միացեալ և զքնութիւն ոչ միատրեալ, այլ մարդն յանձն քանին կայացեալ, այլ ոչ նույսս գոյացեալ: Եւ տքա ոչ ասեն զմիատրեալ, այլ ամենեկն ամենայն իրօք զՆեստորին խորհին, քայց յայնմանէ մի ասեն զանձն պատրանօք, և յԲ(2) Որդիս և յերկուս քնութիւնս քաժանեն, որպէս միագլուխ վիշապ և Բ(2) տրտունս ունելով, և որպէս միոյ գլխոյն Բ(2) ձեռս ունելով քաժանի ի միմեանց: Այս է չարաչար քաժանումն երկարեակաց աղանդոցն:

Իսկ որ վատթար միատրեն, որպէս Եւտիքէս, զի շփոթեալ ասաց՝ Զքնութիւնն որպէս արեւ և ջուր և զինի, զի ոչ պահեն զքնակութիւն քնութեանց. սոյնպէս և նա ըզՔրիստոս կարծէր: Եւ այս՝ խտտորումն է ի ճշմարտութեան, իսկ ուղիղն ունի զաստուածաշտութեան դաւանութիւն, փայլելով ի Քաղկեդոնէ երկարեակացն և յԵւտիքէս, որպէս և այժմ մեք, եկեղեցիս Հայաստանեաց, սոյնպէս դաւանեմք զՔրիստոս Աստուած մարդացեալ, անշփոթ և անբաժանելի միատրութեամբ: Աստուած մարդացեալ ասելն ցուցանէ յԲ-ուց (2) զՔրիստոս, անշփոթ պահէ զյատկութիւն քնութեանցն. անքաժանելին՝ խառնումն քնութեանցն ի մի դէմս և ի մի անձնատրութիւն, զի իսկոյն, ընդ յիջանէ Բանին յարգանդ Կուսին եղև՝ ա) քաժանումն արեան, ք) թանձրանալն, գ) ձևանալ, դ) հոգևորիլ, ե) աստուածանալ, և այն՝ ի ստղ ժամանակի եղև առեալն իբրև զառողն գոյգ Աստուած՝ նոր խառնումն և զսքանչելի խառնումն ըստ Աստուածաբանին, զոր և զխառնումս գայս «ժ-

վասն պարբիկ օծ զքեզ Աստուած, Աստուած քո, իւղով ուրախութեան առանի քան զընկերս քո»: Բնագրումն Ռիդիմակը հիմնախ է անդրադարձում այս պարբերության առանձին հատվածներին, որոնք ներկայացրել ենք շեղագրով, առանց սակայն նշելու աղբյուրը: Բնագրումն հանդիս եկող աստվածաբանական մյուս քաղաքները նույնպես շեղագրով են, իսկ կից փակագծերում նշված են աղբյուրները: Ուղղագրական միջամտություններ, որպես կանոն, չենք կատարել:

* առանձնատրութիւն = միայնութիւն, միակություն:

ծումն» անուամբ մարգարես անելով՝ Վասն աշտրիկ օծ զքեզ. և Պետրոս ի Գործքն գնա՝ Տէր և Ածեալ՝ Աստուած արարեալ (Գործք. Բ, 58), և ասէ. իսկ եթէ օրինակ խնդրես, տես զմիաւորութիւն հոգւոյդ ընդ մարմնոյդ. նախ՝ զի որպէս հոգիդ բոլորն ի բոլորինդ է և բոլորն յիրաքանչիւր մասն, սոյնպէս և Բանն Աստուած բոլորն ի բոլոր մարմինն է միաւորեալ, և բոլոր Բանն Աստուած յիրաքանչիւր մասն մարմնոյն, որպէս ասէ առաքեալն՝ Ի նմա բնակէ լրումն՝ աստուածութեան մարմնապէս (Կողոս. Բ, 9—10), որ է նապէս. ք) զի այլ և այլ բնութեան միաւորեալ՝ մի անձն, մի դէմք և մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ, որպէս ասէ սուրբն Կիրեղ. գ) զի բաժանելն ի միմեանց ոչ գոյ մարդ, այլ կա՛մ մեռեալ մարմին, կա՛մ մերկ հոգի. նոյնպէս և գործելն Աստուած և զմարդրն ոչ է Քրիստոս, այլ կա՛մ մարդ սոսկ // (88ա), կա՛մ Աստուած մերկ. դ) զի որպէս մարմին զգայական միաւորելով ընդ բանականին հոգոյ ոչ է, և ոչ ասի զգայական, այլ բանական մարդ, սոյնպէս և մարդկային բնութիւն միաւորելով Բանին Աստուծոյ, գիտէ զամենայն աստուածաբար. ըստ այնմ՝ Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր (Յովհ. Ժ, 15). ե) զի որպէս ծնունդն միաւորութեանս մերոյ ոչ ասէ մարմին ծնանի, այլ թէ՛ Մարդ ծնալ յաշխարհ (Յովհ. ԺԶ, 21—22) ըստ Տեառն, նմանապէս ասիմ այս անուն մարդ ճանաչեալ և մեռեալ, որ և յատուկ մարմնոյն սոքա. սոյնպէս և զծնանիլ փրկչին Աստուած մարդացեալ և զծնեալն Աստուածածին դաւանիմք, և զչարչարանք և մահ Աստուծոյ խոստովանիմք, և մարդացելոյ դաւանիմք, որով փրկեցաք յամենեքեան համեմատութեան, իսկ այսու անհամեմատք. նախ՝ զի միաւորութիւն մարդոյս յեղանակացս է ընդ միմեանս, իսկ փրկչին՝ բոլորեցունցն անեղ ընդական* է. ք) զի հոգին և մարմին զոյակիցք են միմեանց անընդհատ ժամանակաւ, իսկ Բանն Աստուած է անսկզբնաբար ի Հայրէ, և յետոյ սկսեալ ի Կուսէն, ըստ առաքելոյն՝ Իբրև եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած գորդին իւր, որ եղև ի կնոջէ և եմ[ուտ ընդ օրինօք] (Գաղ. Դ, 4—5). գ) զի հոգին միաւորիլ ընդ մարմնոյն երբեմն, զի որոշի և դարձեալ միանալ, իսկ Բանին Աստուծոյ քաջ սիրով եռացումն ընդ մարմնոցն[], անբաժան և անորոշ գործեալ միաւորութիւն, ուստի յայտ է զի էր ընդ

մարմնոյն ի գերեզման, և էր ընդ հոգւոյն ի դժոխս իջեալ. դ) զի ի մարդն է միաւորութիւն սոյնպէս հոգոյ և մարմնոյ, իսկ Քրիստոս եռակի միաւորութիւն առանել իմն քան զմերս, սոյնպէս Աստուծոյ ընդ հոգւոյ, հոգւոյ ընդ մարմնոյ և Աստուծոյ ընդ մարմնոյ. ե) զի հոգին միաւորիլ ընդ մարմնոյ, է միայն ի մարմնումն էութեան, և ոչ այլ ուրեք, թելաւտ մտօք ի բազումս տեսանեմք, իսկ Բանն Աստուած մարդացեալ է էութեամբ առ Հայր պահպանութեամբ ի բոլոր էակս շնորհօք յամենայն սուրբս, և բնութեամբ ի մարմնի միաւորեալ, յաղագս որոյ ասէ մարգարէս՝ Վասն աշտրիկ ասծ զքեզ:

Եւ զի ճշմարիտ Աստուած է Քրիստոս ընդ մարմնոյն միաւորութեան, ցուցից և զայն սակաւ ինչ վկայութեամբ ի Սուրբ Գրոց, սոյնպէս և նա փրկիչ բոլորեցունց միայն Աստուած է ըստ Նալեա[լ]՝ Տէր փրկիչ մեր՝ և նա փրկ[եցեղ] (Նալի. ԼԳ, 22—23): Եւ հրեշտակն ասէր առ Յովսէփ՝ Կոչեցից զանուն նորա Յիսուս, որ է փրկիչ և նա փրկեցեղ զծոռովորդ իւր ի մեղաց իրեանց (Մատթ. Ա, 21—22). ք) զի զխորհուրդ սրտից գիտել միայն Աստուծոյ է ըստ մարգարէին՝ Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա (Սաղմ. ԼԲ, 15), և ի միտ առնելով զամենայն գործս նոցա աւետարանիչ ասէ՝ Գիտաց Յիսուս զխորհուրդ նոցա և ասէ. Ձի՛ խորհիք ի սիրտս ձեր (Մատթ. ԺԶ, 8). գ) Աստուծոյ միայն է թողուլ զմեղս, ըստ այնմ ոչ ոք կարէ թողուլ զմեղս թէ ոչ Աստուած և ինքն, զի Որդին ասէր՝ Իշխանութիւն ունիմ յերկրի թողուլ զմեղս (Մատթ. Թ, 6: Մարկ. Ա, 10: Ղուկ. Ե, 24), և՛ Քեզ ասեմ՝ թողեալ լիցին քեզ մեղք (Մատթ. Թ, 2, 5: Մարկ. Բ, 5, 9: Ղուկ. Ե, 20, Է, 48). դ) ամենին սրբութեամբ և արդարութիւն Աստուծոյ միայն է, ըստ այնմ ոչ գոյ սուրբ որպէս զՏէր, և ոչ արդար որպէս զԱստուած մեր, և մարգարէն ասէ վասն Որդւոյ՝ Ոչ արար մեղս, և ոչ գտաւ նեղութիւն ի բեր[ան նորա] (Ա Պետր. Բ, 22—23), որպէս և ինքն ասէ՝ Իշխան աշխարհիս յիս ինչ յիրայոցն ոչ գտանէ (Յովհ. ԺԴ, 30—31). ե) Բանն Աստուծոյ Աստուած է, ըստ այնմ՝ Ի սկզբբանէ էր Բանն և Աստուած էր Բանն (Յովհ. Ա, 1—2), իսկ Յոհաննէս ասէ՝ Չեղք մեր շօշափեցին զԲան կենդանի (Ա Յովհ. Ա, 1). և Թումա շօշափեաց Տէր և Աստուած դաւանելով. գ) Տէր փառաց Աստուած միայն է բնութեամբ, ըստ այնմ Տէր Սաքաւօք՝ այս անուն է նորա, և առաքեալն ասէ թէ՛ էին ծանուցեալ ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին (Ա

* ընդական = հոյացք ական՝ քաղցր կամ պաշտպանողական:

Կորնթ. Բ, 8). Է) Է Գաղի ընդ աջմէ Աստուծոյ, այսինքն՝ ի փառս աստուածութեան Աստուած միայն վայել է, ըստ այնմ՝ Ասաց Տէր ցՏեառն իմոյ, Եփսոս ընդ աջմէ իմմէ մինչև [եղից] (Մարկ. ԺԲ, 38: Գործք. Բ, 34—35): Եւ առաքեալն ասէ՝ Մանաւանդ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ Աստուծոյ (Հռոմ. Ը, 34): Եւ Ստեփանոս՝ Ահա տեսանեմ զերկինս բացեալ և գորդի մարդոյ զի կայ [ընդ աջմէ Աստուծոյ] (Գործք. Է, 55—56). Ը) և Կենաց ծնող Աստուած միայն է, ըստ այնմ եւ սպաննեմ և եւ // (86բ): Եւ ինքն Տէրն ասէ՝ Ես իսկ եմ յարութիւն և կեանք (Յովհ. ԺԱ, 25): Եւ դարձեալ՝ Որք ի գերեզմանս կացցեն, լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ և եկեսցեն (Յովհ. Ե, 28—29), որոց և նախ զԼազար ի վեր կոչե[ա]ց. Թ) իսկ երկրորդապագութեամբ պաշտաւն՝ Աստուծոյ միայն վայել է. ըստ այնմ՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես և զնա միայն պաշտեսցես (Մատթ. Դ, 10—11): Եւ առաքեալն ասէ՝ Յանուն Յիսուսի Քրիստոսի ծունր կրկնեսցի երկնաւորաց և երկրաւորաց (Փիլիպ. Բ, 10). Ժ) դատել և գործ հատուցանել Աստուծոյ միայն է, ըստ այնմ՝ Աստուած դատաւոր արդար, հզոր (Սաղմ. Է, 12). Կ' Իմ է վրեժխնդրութիւն (Հռոմ. ԺԲ, 19), և ինքն Տէրն ասէ՝ Ոչ թէ Հայր դատի գոք, այլ զամենայն դատատաւանն ետ Որդւոյ (Յովհ. Ե, 22—23): Եւ առաքեալն՝ Եւ մեզ ամենեցուն յանդիման կալոց եմք առաջի ատենմին Քրիստոսի, զի ընկալցին իւրով մարմնով զոր ինչ գործեսցէ՝ թե՛ բարի և թե՛ չար (Բ Կորնթ., Ե, 10), որոյ ի դէմ ասէ մարգարէ[ն]՝ Վասն այսորիկ ամօ զքեզ:

Բեր տեսցոյք թէ զի՞նչ նշանակէ ամենայ անուն, և թէ որքանաբար ասի ամենուն: Գիտելի է զի ամենայն ի լեզուս Եբրայեցւոցն «մենսիա» թարգմանի, իսկ ըստ Հռոմեան Զրիստոս, իսկ ի մերս՝ օծեալ, որպէս և ասէ մարգարէն՝ Ամօ զքեզ Աստուած, Աստուած: Այս՝ ըստ Ժ լեզանակի է ամենուն. նախ՝ ամենուն մարմնականք, որպէս փափկասիրացն. Բ) օծումն պատերազմական լըմ[ք] շարմարտիցն. Գ) մաքրական, որպէս հիւանդացն. Դ) ամենուն զմըտոյ, որպէս մեռելոցն. Ե) ամենուն քահանայիցն վասն միջնորդութեան. Զ) ամենուն թագաւորաց վասն տէրութեան. Է) ըստ գաւորութեան, որպէս Կիրոսի. ըստ Եսայեայ՝ Մոյսայէ ասէ Տէր ցաւծեալ իւր ցԿիրոս (Եսայի ԽԵ, 1). Ը) օծումն Հոգւոյն Սրբոյ, որպէս մարգարէիցն՝ Մի՛ մերձենալք, ասէ, յօծեալս իմ, և ի մարգարէս մի՛ մեղանչէք (Սաղմ. ԺԳ, 15). Թ) օծումն

յորդեգրութեան, որպէս մկրտութիւն. Ժ) օծ[ումն] գերագոյն, ասաց, բնութեան միաւորութեան, այսինքն՝ Բանին Աստուծոյ ընդ մարդկութիւնս: Եւ զի միաւորութեամբ բնութեանց իմանի Քրիստոս, յայտ է զի որդեակն ըստ ոմանց ոչ մնա[յ] Քրիստոս, իսկ Քրիստոս վասն իւր ընկալաւ զամենեւեան զայսոսիկ զամենուն մարմնական ի պողոնիկ կնոջէն, յորժամ եբեր՝ զի՞չ եղոյն ի զլուխ նորա. ըստ այնմ որ ասէ առ Սիմոն՝ Մտի [ի] տուն քո ջուր, [նստից իմոց] (Ղուկ. Է., 44). Սա արտասօք եթաց զոտս [իմ] (Ղուկ. Է. 44). իսկ օծումն լըմքամարտութեան, յորժամ վերացաւ հոգւովն յամաւաւորն ի սատանայէ, որ և յաղթեաց հակասականամարտին բնութեան մերոյ. իսկ օծ[ումն] հիւանդաց եցոյց ինքեամբ յայլս, յորժամ զանկեայն ի ձեռս առաքակացն կանգնեաց, և ձիթով և զինով բժշկեաց զվերս. իսկ օծումն մեռելոյ[ն], յորժամ թաղեցաւ. իսկ օծումն քահանայութեան՝ ի Թաւրօր լերին, ուր ասացաւ՝ Դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ (Մարկ. Ա, 11: Ղուկ. Գ, 22—23): Եւ Սուրբ Հոգին ամբողջանի, և Մովսէս և Եղիայ սարկաւագէին նմա. իսկ ամենուն թագաւորական ի Մարեմայ՝ քեռ Ղազարու, և յորժամ նստաւ ի վերայ յովանակի. իսկ ամենուն գորութեան, յորժամ ամենա արեամբն ի վերայ խաչին և էառ աւար. իսկ օծումն Հոգւոյն Սրբոյ, յորժամ էջ Հոգին աղանակեալ և հաճեաւ ի վերայ նորա. իսկ մկրտութիւն նորա ոչ թէ յորդեգրութիւն էր որպէս և մերս, այլ ճշմարիտ յորդիութեան յայտնութեան, ըստ այնմ Դա է Որդի իմ սիրելի ընդ [որ] հաճեցայ (Մատթ. Գ. 17: Բ Պետր. Ա, 17):

[Եւ] տեսցոյք թէ քանի՞ եմ եղանակ ամենանն. նախ՝ զի եղով ամենեին, որպէս քահանան և թագաւորք. Բ) օծանէին մարգարէքն այլ ոչ եղով, այլ և իման[ա]լ-լարար Հոգովն Սրբով, որպէս ասէ՝ Մի՛ մերձենալք յաւծեալս իմ, և ի մարգարէս (Սաղմ. ԺԳ, 15). Գ) ամենուն հաւատացելոց մկրտութեամբ առաքանին. Դ) ասի ամենուն բռնաւորաց և աշխարհակալաց առ ի յուղղութիւն ոմանց ի Տեառնէ ապրտամբելոց, զոր առնու Աստուած զոմանս ի ձեռն և տա[յ] համարձակութիւն իշխանութեան, որպէս ասէ մարգարէն՝ Այսպէս ասէ Տէր ցԿիրոս (Եսայի. ԽԵ, 1). զի թէպէտ կռապաշտ էր, յԱստուծոյ ունէր զիշխանութիւն թագաւորութեան. Ե) օծումն արեամբ որպէս մարտիրոսաց, որ պսակեցան ի Քրիստոսէ. Զ) ճշմարիտ Քրիստոսի ամենուն է, որ օծաւ // (87ա) մարդկային

* Պետք է լինի՝ երկու:

քննությունն աստուածությունեամբն փրկիչ աշխարհի. իսկ ամառ քննութեամբ, միատրութեամբ ընկալաւ Քրիստոս ի կուսական լարգանդէ, որ և խառնեալ միացոյց զմեր քննութիւնս ընդ յիւրում աստուածութեան, և ծնաւ մարդ որ է Քրիստոս, որ թարգմանի «Աւծեալ» ըստ հրեշտակի՝ **Ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի** (Ղուկ. Բ, 11), որպէս ասէ մարգարէն Դաւիթ թէ՝ **Վասն այսորիկ ամօ զքեզ**:

[Բ]եր տեսցուք թէ ո՛վ են ընկերք սորա և կամ թէ զի՞նչ առաւելութիւն ամօումն Քրիստոսի քան զընկերաց մորա, վասն որոյ ասէ՝ **Առաւել քան զընկերս քո**: Ընկերք կոչիմ մարգարէքն և քահանայքն և ամենայն ամենայն դասք, և զի որպէս մարդանայովն ընդ մեզ, մեք հաւասար մարդկութիւնս «եղբարք» անուանեցաք, ըստ այնքն պատմեցից զան՞. սոյնպէս և դասք ամենայն «ընկերք» անուանեցան ճշմարտելոյն Քրիստոսի. իսկ առաւելութիւն ամօման Քրիստոսի. նախ՝ զի վեր ասացեալ ժ յեղանակ ամօութեան բովանդակապէս ոչ այլ ումէք պատշաճի, բայց միայն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս ցուցաւ. ք) զի մոքս մարդիկ էին և յԱստուծոյ օծեցան, իսկ Տէրն մեր Քրիստոս՝ Աստուած և յԱստուծոյ օծեալ, որպէս ասէ մարգարէն՝ **Ամօ զքեզ Աստուած, Աստուած**. գ) զի մոքս ժամանակաւոր ամօումն ընկալան յոր ինչ և կոչեցան, իսկ ի դէմս Տեառն մերոյ ասէ հայր՝ **Դու ես քահանայ յալիտեան ըստ կարգին Մեքիսէղեկի** (Սաղմ. ԾԹ, 4). դ) զի մոքս ի մարմնական միջոյ, այսինքն՝ լեղոր ընկալան զամօումն, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ի Հոգոյն Սրբոյ, որպէս ասէ Պետրոս ի Գործքն՝ **ՋՅիսուս զոր ի Նազարէթէ, զոր ամօն Աստուած Հոգովն Սրբով** (Գործք. Ժ, 38). ե) զի մոքս մասամբ ինչ ընկալան զմոռոհս կամ գիտութեան, և այլն, իսկ վասն Տեառն ասէ Կողոսացիս, թէ՝ **Ի մմա բնակէ ամենայն լրումն աստուածութեան մարմնապէս** (Կողոս. Բ, 9), որ է էապէս. գ) զի մոքս շնորհօք կոչեցան որդիք կամ Աստուած որպէս Մովսէս, կամ այլ ինչ, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ըստ քննութեան միատրութեան ընդ Բանին. ըստ այնմ թէ՝ **Բան մարմին եղև** (Յովհ. Ա, 14), և թէ՝ **Մշմարիտ որդին ազատեցէ զձեզ** (Յովհ. Ը, 33). է) զի մոքս յայմէ ընկալան զամօմըն, որպէս եղիսէ յեղիսէ և Դաւիթ ի Սամուելի, իսկ Տէր մեր Յիսուս Քրիստոս յինքննէ ընկալաւ զամօումն, որպէս ասէ՝

Ինքն էօծ զինքն, վասնզի ինքն է Աստուած, ըստ որում էամօ և ինքն եղև մարդ, ըստ որում՝ ամառ. ք) ոչ որ ըստ արդարութեան կոչեցաւ ամենայն, զի ամենեքեան գրաւեալք էին ի նախնոյն յանցանաց, իսկ ի դէմս Տեառն մերոյ ասէ մարգարէն՝ **Սիրեցեր զարդարութիւն, և այլն, Վասն այսորիկ օծ զքեզ**. թ) զի ամենեքեան ի մմանէ ամենաց, իսկ նա ի մոռումն ոչ բնաւ. ապա և առաւել է նա, որ ամառն է, քան զմոռս որ ամառնէին, զի ամենեքեան ի ծնումն արիմակ Քրիստոսի լինէին ամենայն, թէ՝ թագաւորք և թէ՝ քահանայք, և այլք: Իսկ կատարումն արիմակին ճշմարտութիւն է, և առաքեալն ասէ թէ՝ **Կատարումն արիմաց և մարգարէիցն Քրիստոսն է** (Հռոմ. Ժ, 4), ապա և առաւել է ճշմարտութիւն որ է Քրիստոս, քան զարիմակն, նաև որք ի մոռումս ի խորհուրդս ճշմարիտ ամենայն ամօանիմք. և նա միայն է ճշմարիտ ամենայն քան զամենայն ընկերս մորա, որպէս ցուցաւ, յաղագս որոյ ասէ մարգարէն՝ **Վասն այսորիկ ամօ զքեզ**:

Այսքան է ի դէմս մարդեղութեան Քրիստոսի:

Բեր այժմ վերստին առեալ զբանս ի դէմքս քահանայական ամօութեան, որպէս խոստացաք ի սկզբան բանիս. նախ տեսցուք թէ զի՞նչ է քահանայութիւն և զի՞նչ է երօթիւն քահանայութեան և զաստիճանս մորա: Քահանայութիւն է, ասէ Դիոնիս, կարգ սրբազան, հանճար և ներգործութիւն, իսկ երօթիւն քահանայութեան կատարի Զ(Թ) իրաւք. ա) իշխանութիւն տրւի/(Թ7բ)աղիմ զկարգն, զի պարտ է եպիսկոպոս լինել. ք) միջք, այսինքն՝ ամառ ի քահանայսն՞. գ) ձև բանին. դ) է դիտաւորութիւն. ե) զի ալու լինին, զի կինն ոչ ընդունի զքահանայական կնիք. զ) զի կարգ առնալն մկրտեալ լինիցէ: Իսկ վասն աստիճանաց քահանայութեան վարդապետք իրաւք ինչ համաձայնին և իրաւք ինչ տարաձայնին. համաձայնին այսու՝ զի ամենեքեան առհասարակ ինն են ասացեալ զաստիճանս քահանայութեանս մերոյ, ըստ Թ(9) դասուց հրեշտակացն: Իսկ վասն աստիճանաց իրեանց զանազանին Գ(9) ազգ վարդապետութեամբ. նախ՝ ըստ մենին Դիոնիսիայ բաժանի և ի մերս քահանայութիւն ըստ Թ(8) դասուցն ըստ երկնայնոց մմանութեան յերիս երեքակս որոշեալ, յորոց առաջինն է աթոռք, քերթեք,

* Բնագրում՝ քահանայութիւն, ուղղված յուսանցքում՝ քահանայսն:

* թիւսն՝ զամենայն:

սերոքէք. սոքա անընդմիջաբար վայելեն յաստուածային շնորհացն և հաղորդեն անճախանձաբար զմիջին քահանայութիւնսն որք անուանին՝ տէրութիւնք, զարտութիւնք, իշխանութիւնք. նոյնպէս, սոքա առանկ յառաջնոցն հաղորդեն զվերջինս, որ են՝ պետութիւնք, հրեշտակապետք և հրեշտակք. իսկ սոքա մեզ՝ մարդկան ուսուցանեն վասն պիտոյից մեր զամենայն լուսափայլութիւն պարգևս Աստուծոյ որպէս բոլոր երկինք են ի թիւ Թ-եակ (8) դասուցն լըրման, և սոյնպէս յեկեղեցի, որք միանգամ հաւատացեալք են յնուն զթիւ Թ(9) աստիճանացս. ա) կարգք եպիսկոպոսապետ՝ եպիսկոպոս, քահանայ, և բ) սարկաւազն, կէս սարկաւազ, սաղմոսասացք. գ) սրբազան ժողովուրդք որ են մկրտեալք. երախալքն, որ առնելոց են զկնիք և ապաշխարողք, այսինքն՝ միայնակեացքն—զայս ասէ սուրբն Դիոնիսիոս:

Իսկ սոքա, ըստ Հոռոմայեցոց ազգին—առաջին դասքն՝ պատրիարք, որ են կաթողիկոս, որ ունին զաթոռ չորից անետարանչացն. սոքա մափորտ բազմախաչ և եմփորոն պատէ զիրեաւ շուրջ Ե(5) կըրկին: Գործ է նոցա ձեռնադրել զարքեպիսկոպոսունս և հրաման տալ ժողովս առնել և արհմել զաստուածալոյս մեռոն. բ) արքեպիսկոպոսք, որ թարգմանին պետք. սոցա [Ե]մփորոն Դ(4) կըրկին, և գործ է սոցա ձեռնադրել մետրապօլիտ, և Գ(3) արքեպիսկոպոսք ունին իշխանութիւն ձեռնադրել զպատրիարքն. գ) մետրապօլիտսն, որ են մայրաքաղաքացիքն, [Ե]մփորոն Գ(3) կըրկին է: Գործ է սոցա ձեռնադրել եպիսկոպոս, և Գ(3) մետրապօլիտ ձեռնադրեն զարքեպիսկոպոս իւրեանց. դ)

եպիսկոպոսք, որ են այցելութ, և [Ե]մփորոն մի կըրկին, միայն յառաջն և յետքն: Գործ է նոցա ձեռնադրել քահանայս և զսարկաւազ, և զայլ աստիճանաւորս, և Գ(3) ի նոցանէ ձեռնադրեն զմետրապօլիտ իւրեանց. ե) դաս քահանայից ունին մափորտ միայն, և գործ է սոցա կատարել զԷ(7) խորհուրդ եկեղեցոյ, և ուր չիցէ եպիսկոպոս, հրամանաւ եկեղեցոյ արհմեն և խաչ. զ) սարկաւազուցք. զգեստ է նոցա պատմուծան հոլանի կալ և առանց գատոյ, ուրար յահեակ յունս, բազպան և բազկուրար յահեակ բազուկն: Գործ է նոցա հրամանաւ քահանային Անետարան կարդալ, քարոզել, բառնալ զքշոց և թուրուսո. է) սարկաւազն զգեստ է նոցա պատմուծան հոլանի և անգօտի և բազկուրար յահեակ բազուկն: Գործ է նոցա առաքեալ կարդալ և մոմեղէն և խաչազուխ գաւազան կրել, և գրակալ. զեկեղեցին նոցա զարդարեն և զդրունս պահեն. ը) անագանութ, որ են ընթերցողք: Գործ է նոցա ընթերցող զամենայն գիրս. թ) փսալաք, որ են սաղմոսասացք: Գործ է նոցա այելութ և մեսեդիք սաղմոս ասեն: Այս՝ ըստ Յունաց վարդապետաց:

Իսկ ըստ այլոց վարդապետաց՝ ի ներքուստ ի վեր. առաջին կարգն է դոնապ/(68ա)անութիւն. բ) ընթերցողութիւն. գ) երդմնեցողութիւն. դ) ջահվառութիւն, ե) կիսասարկաւազութիւն. գ) սարկաւազութիւն, է) քահանայութիւն, ը) եպիսկոպոսութիւն, թ) կաթողիկոսութիւն:

Ահա ցուցեալ եղև Թ(9) դասուց հրեշտակաց մմանութեան:



**East of Byzantium. Syria and Armenia in the Formative Period.
Dumbarton Oaks Symposium 1980. Ed. N. G. Garsoian Th.
F. Mathews and R. W. Thomson Washington, 1982**

(Բյուզանդիայի Արևելքը. Ասորիքի և Հայաստանի
[մշակույթը] ձևավորման շրջանում, Վաշինգտոն, 1982)

1982 թ. հոգվածների ժողովածուի ձևով լույս տեսան Վաշինգտոնի Դումբարթոն Զուքս բյուզանդագիտական կենտրոնում 1980 թ. կայացած ասորագիտական-հայագիտական գիտաժողովի նյութերը: Ժողովածուի առաջին մասը պարունակում է վաղ ասորական գրականությանը և արևելստինեցիական ութ հոդված: Մեզ հետաքրքրող հայագիտական բաժինը բաղկացած է վեց արժեքավոր հոդվածից, որոնց հեղինակների հիմնական նպատակն է ցույց տալ այն ազդեցությունների համակարգը, որոնց պայմաններում ձևավորվում էր ինքնատիպ հայկական մշակույթը:

Ժողովածուի հայագիտական բաժինը բացում է Ռոբերտ Թոմսոնի ընդհանրացող հոդվածը, որ վերնագրված է «Հայկական գրական ավանդույթի ձևավորումը» (էջ 135—150): Հեղինակը երկու նպատակ է հետապնդում՝ բացահայտել այն գրական մոդելները, որոնցից օգտվում էին 5—8-րդ դարերի հայ հեղինակները, և ցույց տալ, թե ինչպես էին նրանք հարմարեցնում աղբյուրներն ու թեմաները հայ իրականությանը և իրենց ժամանակին:

Այսպես, Ղազար Փարպեցու և Եղիշեի երկերը նվիրված են միևնույն պատմական իրադարձություններին: Սակայն Փարպեցու հիմնական նպատակն է գովերգել Մամիկոնյանների ընտանիքի և սբ. Գրիգորի փառքը, իսկ Եղիշեի հերոսը՝ Վարդանը, պայքարում է երկնային երանության և նախնիների ավանդության պահպանման համար: Պատմական զուգահեռ փնտրելով հայ վկաների համար, նա ընտրում է ոչ թե հռոմեական և սասանյան ժամանակա-

շրջանի վկաներին, այլ մակաբայեցիներին, Խորայելի հերոսներին, քանի որ վերջիններս տարբերություն չէին տեսնում կրոնի և հայրենասիրության միջև:

Մովսես Խորենացին նույնպես մտահոգված էր իրեն հովանավորող տոհմի՝ Բագրատունիների փառքով: Նա 800 թ.-ից առաջ եղած հայ պատմիչներից միակն է, որ դիտում է Հայաստանի պատմությունը համաշխարհային պատմության կոնտեքստում: Խորենացու երկի կառուցվածքային կաղապարը հիմնված է Եվսեբիոսի Քրոնիկոնի և Եկեղեցական պատմության վրա: Եվսեբիոսից է ծագում նաև այն հատվածը, որում Խորենացին կշռամբում է նախնիներին նրանց անհմաստասեր բարքի համար (1.3), Եվսեբիոսը Քրոնիկոնի սկզբում թվարկում է պատմագրություն ունեցող այն նույն ժողովուրդներին (քաղաքացիներ, ասորեստանցիներ, եգիպտացիներ, հելլենացիներ¹), որոնց հիշատակում է և Խորենացին (1.3), իսկ սրան հաջորդող «մեք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով» հատվածը բառացի զուգահեռ է գտնում Հովսեփոս Փլաբիոսի հայերեն թարգմանության մեջ:

Այսպիսով, Եղիշեի և Խորենացու ժամանակ հայ պատմիչների հմտությունը

¹ Այդ մասին մանրամասն տե՛ս R. W. Thomson. Euseb's History of Vardan: New Light from Old Sources.— In: Classical Armenian Culture. Ed. by Th. J. Samuelian.— Armenian Texts and Studies, 4, University of Pennsylvania, 1980, pp. 41—51.

² Եսեբի Պամփիկյայ Կեսարացու ժամանակագրություն Երկամասնայ, մասն Ա, Վենետիկ, 1818, էջ 1—2:

թույլ էր տալիս մրանց հաջողությամբ հաղթարեցնելու օտար աղբյուրների ընձեռած նյութը հայ իրականությանը:

Այնուհետև հեղինակն ամերիկացու է հայ գրերի ստեղծման մասնապատկերներ, հիշում, որ Տիգրան Մեծի և Արտավազդի օրոք Հայաստանում լայնորեն տարածված էր հունական գրականությունը³, իսկ ավելի ուշ բազմաթիվ հայ աշակերտներ կրթություն էին ստանում հունական մշակույթի կենտրոններում, որոնցից, օրինակ, Պրոհերեսիոսը այդ մշակույթի երեւելի գործիչը դարձավ, իսկ Մաշտոցը՝ հայ գրերի ստեղծողը:

Կորյունի «Մաշտոցի վարքը» առաջին երկն էր, որ կրում էր հունական ճարտասանական գրականության ազդեցությունը: Հունարենից և ասորերենից թարգմանված հսկայածավալ գրականությունը չէր կարող ազդեցություն չտողնել հայ հեղինակների վրա: Այդ ազդեցությունը երկակի բնույթ էր կրում՝ ա) թեմաների, մոտիվների գիտակցված փոխառություն, բ) «օղի մեջ» եղած գրական տեղիների յուրացում: Այսպես, Ազաթանգեղոսի երկը կրել է ինչպես Կորյունի, այնպես էլ վարքագրական գրականության ազդեցությունը, իսկ մրա ամբողջ կառուցվածքը և առանձին թեմաներ և տեղիներ հետևում են ասորերենից թարգմանված «Թադևոսի վարդապետությանը»:

«Աշխարհացոյցի» հիմնական թեման է քաղաքական աշխարհագրությունը, այն հիշեցնում է Գահնաձակներում գետեղված մախարարական տոհմերի ցուցակները:

Նշված շրջանի հայ գրականության մեջ բնության նկարագրությունը ոչ այնքան իրապատում էր, ինչքան հայրաքանական գրականության ընդհանուր տեղիներից էր ծագում:

Մեծ մշակությունն ունեցավ Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայքի» թարգմանությունը: Զգալի է մրա ազդեցությունը 7-րդ դարի հեղինակ Անանիա Շիրակացու վրա: Թումսոնը գտնում է, որ Անանիայի ինքնակենսագրության մեջ հանդես եկող Տյուրիկոսի ճանապարհորդությունը և տարբեր քաղաքներում ուսանելու կադապարը փոխ է առել Մովսես Խորենացիին, որին մա 8-րդ դարի հեղինակ է համարում⁴: Նման

ճանապարհորդություն, ըստ ավելի ուշ աղբյուրների, կատարել է և Ստեփանոս Այուրեցիին: Ուսուցողական մպատակներով ճանապարհորդելը, այսպիսով, գիտակցված ընդհանուր տեղի էր, ընդ որում անպայման հիշատակվում էին Հույնը, Աթենքը, Կոստանդնուպոլսի հայ գաղութը:

Ինչ վերաբերում է հայերի՝ դասական հունական գրականության ծանոթությանը, այն իրականացնում էր ոչ անտիկ հեղինակների թարգմանության միջոցով (քերականական, ճարտասանական երկեր, Աղեքսանդրի վարքը, Նոցմոս), որոնք թարգմանվել են հունարան դպրոցի գործիչների ձեռքով: Դասական հեղինակների թարգմանությունն չի եղել: Հոմերոսը, չնայած մրա ամուրի հաճախ է հիշատակվում ձեռագրերում, և մրա բառերի մի բառարան է պահպանվել, ամենայն հավանականությամբ, մույմպես թարգմանված չի եղել հայերենի⁵:

Այսպիսով, կազմավորման շրջանում հայ գրականությունն իր հիմնական գծերով քրիստոնեական մշակույթի ծնունդ էր, իսկ դասական հեթանոսական մշակույթի տարրերը զուտ դեկորատիվ դեր էին խաղում մրանում: Չնայած օտար գրական ազդեցությունների բարդ համակարգին, հայ գրականությունը երբեք չի գիտակցվել որպես հունական մշակույթի մաս, ոչ էլ մույնացվել է հարևան ասորիների կամ վրացիների գրականության հետ: Այն միշտ օտար է եղել հելլենիստական աշխարհի քաղաքային մշակույթին: Ազգային ինքնագիտակցությունը շեշտելու համար զուգահեռներ են քերվել սելևկյան տիրապետության տակ գտնվող հրեաների պատմությունից: Եղիշի կողմից մակաբայեցիների գրքերից քաղած պատկերների՝ սասանյան շրջանին հարմարեցնելու փորձին մեկ ան-

Armenians. Translation and Commentary of the Literary Sources by R. W. Thomson. Cambridge Massachusetts, London, England, 1978, pp. 1—51). քննադատության է ենթարկվել վերջինիս լույս ընծայվելուց ամսիջապես հետո (տե՛ս 1. Տեր-Պետրոսյանի գրախոսությունը՝ ՊԲՀ, 1980, 1, էջ 268—270) և նաև քոլորովին վերջերս՝ Դ. Մ. Սարգսյան. «История Армян» Мовсеса Хоренаци. Ереван, 1986, сс. 28—39.

⁵ Հմմտ. Н. А. Адоны. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, с. XIV; Ա. Սուրբան, Հոմերական բառգիրք և հոմերական տողը, Բազմավեպ, 1877, էջ 15—30 (ապացուցվում է, որ սովա տողերն ու բառգիրքը ամբողջական թարգմանությունն են ձագում և մրա գոյության վկայությունն չեն կարող համոզիանալ):

³ Հմմտ. Դ. Մ. Սարգսյան. Черты эллинизма в духовной культуре древней Армении.—Историко-филологический журнал, 1976, № 3, сс. 51—62.

⁴ Թումսոնի այդ տեսակետը, որ նա առաջ է քաշել Խորենացու իր անգլերեն թարգմանության առաջաբանում (Moses Khorenats'i, History of the

գամ ևս դիմել է Թովմա Արծրունցի⁶, այս սեգամ մահմեդական տիրապետության տակ ստեղծված իրադրությունը բնութագրելու համար:

Հաջորդ հոդվածը՝ «Ազաթանգեղոսի երկի իրանական ենթաշերտը» (էջ 151—174), պատկանում է Նիհա Գարսոյանի գրչին: Խնդրո առարկա երկի երկու հիմնական խմբագրությունների և այլաբեկության մեծությունների հարցը համառոտակի բնութագրելուց հետո, հեղինակն անդրադառնում է նրա ժանրին, ըստ որի այն տիպիկ վաղ քրիստոնեական վարք է, իր ամենաբանաձևային և ոչ պատմական ձևով, որը՝ հեղինակն անվանում է «էպիկական վկայաբանություն» (epic passion): Սակայն Ազաթանգեղոսի երկում կան նաև այդ ժանրի կառուցվածքի համար ոչ հատկանշական տարրեր, որոնք պայմանավորված են հայ նորադարձների մոտ հին, ոչ քրիստոնեական մշակութային ավանդույթների մասնակի պահպանումով: Իր այս դրույթը Ն. Գարսոյանը լուսաբանում է հետևյալ օրինակով: Տրդատի պատմվելու և «վայրենի խոզ» կամ «վարազ» դառնալու պատմությունը (Ազաթ, 212) իր հիմնական գծերով ծագում է Ազաթանգեղոսի կողմից հիշատակվող աստվածաշնչյան այն դրվագից, ըստ որի հաբեյոնի Նաբուգոդոնոսոր թագավորը (Դան. 4. 12—13) փոխակերպվում է «արջառի»: Հեղինակն այնուհետև բացատրում է, թե ինչու է Ազաթանգեղոսի մոտ արջառի փոխարեն հանդես գալիս վարազը: Եթե հուրապաքրիստոնեական դիցաբանության մեջ արջառը չեզոք դեր է խաղում, ապա այլ է իրադրությունը հայկական միջավայրում, որում դեռևս կենդանի էին գրադաշտական հավատալիքները: Այս առիթով վկայակոչվում են մի շարք իրանական գրադաշտական բնագրեր, որոնցում այդ կենդանին հանդես է գալիս որպես անմեղ զոհ, մարդկության բարերար և փրկիչ: Շարունակելով նշված դրվագի վերլուծությունը, հեղինակն անդրադառնում է այն հանգամանքին, որ Տրդատի կերպարամալիտությունը տեղի է ունենում որսի ժամանակ, իսկ որսը իրանական ավանդության մեջ թագավորական փառքի քաջահայտման ամենադասական տեղին է: Իրանական

սովորույթի արտահայտությունն է նաև այն վիստը, որ Տրդատը որսի է գնացել իր վիշտը փախտելու համար:

Տրդատի «քաջ» մակդիրը թագավորների համար սովորական մակդիր է, և համապատասխանում է նրա դյուցազնական ուժին և թագավորական փառքին: Նա իր «յաջությունը» ստացել է «քաջ» Վահագնից, որը հայկական գրադաշտականության մեջ իշխող եղյակի անդամ էր՝ Արամազդ, Անահիտ Վահագն, և իր դերով փոխարինում էր իրանական Միթրային: Վահագնի «քաջությունը» իր զուգահեռն է գտնում իրանական Վերեթրազնայի «հաղթող» (pérozgar) մակդրի մեջ: Նշված ժամանակաշրջանում ինչպես Վերեթրազնան, այնպես էլ Վահագնը հզոր աստվածություններ էին, թագավորի և նրա իշխանության պաշտպանները: Ի տարբերություն մյուս իրանական աստվածությունների, Վերեթրազնան օժտված էր կերպարանավորման հատկությամբ, և նրա տասը կերպարանքներից (avatar) հինգերորդը վարազի կերպարանքն է: Այդ փաստը հայտնի է ինչպես գրական աղբյուրներից, այնպես էլ իր արտահայտությունն է գտել կերպարվեստի տարբեր ձևերում: Իհարկե, բոլոր վարազի պատկերները չի կարելի նույնացնել Վերեթրազնայի հետ, սակայն որսի ռեալիստական պատկերներից բացի հանդիպում են, անշուշտ, և սիմվոլիկ պատկերներ: Այս բոլոր փաստերի հիման վրա Ն. Գարսոյանը հանգում է այն եզրակացությանը, որ հայկական իրականության մեջ ևս վարազը պետք է Վահագնի խորհրդանշիչը հանդիսանար: Այսպիսով, Տրդատը՝ ստանալով վարազի կերպարանք, ներկայացվում էր Վահագնի հետ: Ի դեպ, Տրդատ-վարազի նկարագրությունը իր զուգահեռներն է գտնում Վերեթրազն-վարազի պատկերներում: Տրդատ-վարազը պատասպարվում է եղեգնուտում, որի մասին Դանիելի գրքում ոչ մի հիշատակություն չկա: Սակայն այն հանդիպում է իրանական վարազի պատկերներում: Ընդ որում, դա կարող էր այդ կենդանու սովորության իրանական պատկերումը լինել, սակայն այն բացառություն է կազմում ռեալիստական տարրերից զուրկ ավանդության մեջ: Եղեգնի պատկերը հաճախ սիմվոլիկ, սխեմատիկ բնույթ է կրում: Վարազի և եղեգնի այդ զուգակցությունը վկայում են և գրական աղբյուրները: Իրանական աղբյուրներից բացի Ն. Գարսոյանը հիշատակում է Մովսես Խորենացուն: Վերջինիս մոտ (9.55) Հազկերտի որդի Շապուհը, որին նա թագավորեցրել էր հայե-

⁶ Եղիշեի՝ Թովմա Արծրունու վրա ունեցած ազդեցության մասին տե՛ս R. W. Thomson, 'Ovimey Arerunt as Historian', in: *Medieval Armenian Culture*, Ed. by Th. J. Samuelian and Michael Stone. — *Armenian Texts and Studies*, 6, University of Pennsylvania, 1984. pp. 69—80.

րի վրա, իր երկչոտությունը է ցուցաբերում, երբ եղեգմուտների մեջ (ի շամբ) վարազներ (կիճներ) էր որսում: Վերեթրագնա-Վահագնի և վարազի կապը եղեգնի հետ ժողովրդական էպիկական ավանդությունից է ծագում, որի ամենավաղ արտահայտությունը է Մովսես Խորենացու մոտ ընթվող «Վահագնի ծնունդը» (1.31): Ագաթանգեղոսը էլ չէր կարող նրան ծանոթ չլինել:

Այսպիսով, Տրդատի՝ վարազի կերպարանք ընդունելը եղեգների մեջ Ագաթանգեղոսի մոտ նրա աստվածային պաշտարանի հայտնությունը է, սակայն ծաղրական իմաստով: Ինչպես Հովսիսիմեն, որն իր գերբնական ուժը ստացել էր Սուրբ Հոգուց, Տրդատը վարազի կերպարանքով լույս էր պաշտպան աստծու անձնավորումը է, որը չնայած իր «քաջությամբ» չի կարող օգնել նրան հաղթելու քրիստոնեական Աստծու անձնավորումը հանդիսացող կույսին:

Վաղ քրիստոնեական Հայաստանի ժողովրդական երկակայությունը, եզրակացնում է հեղինակը, բնակեցված էր իրանական խորհրդանշաններով, և նույնիսկ հելլենականացված քրիստոնյա աստվածաբանները պետք է հաշվի առնեին այդ հանգամանքը:

Արքայան Տեղյանց իր «Հումաբան դրպրոց»: Նոր հայացք նրա ժամանակի, տեղի և գործունեության շրջանակների վրա» (էջ 175—186) հոդվածում քննադատության է ենթարկում Հ. Մանանդյանի կողմից հումաբան թարգմանությունների խմբավորման սկզբունքը: Վերջինս հենվում է հիմնականում հումարեն մախաթանցավոր բաների հայերեն թարգմանության տարբերությունների վրա, որոնք հանգեցնում են մի այնպիսի իրավիճակի, որ ուշ թարգմանություններում դիտվում է հումարեն մախաթանցավոր և բարդ բաների մեխանիկական պատճենում: Մանանդյանի մեթոդն, ըստ հեղինակի, ինչքան էլ այն արժեքավոր լինի, պետք է վերանայել, քանի որ նա հաշվի չի առել մի շարք կարևոր թարգմանություններ (օր.՝ Պլատոնի), բացի այդ շեշտը դրվում է առանձին պատճենումների օգտագործման վրա, որ Մանանդյանի համար խմբավորման կարևոր կռիվն է հանդիսանում, այնինչ ավելի մպատակահարմար կլինեին դիտել տարբեր թարգմանություններում նման պատճենումների կիրառության հաճախականությունը:

Ըստ Տեղյանի առաջին երեք խմբի թարգմանություններն իրագործվել են մեկ

անընդի թարգմանիչների ձեռքով: Նրանց միջև եղած տարբերությունները կարելի է բացատրել ոչ այնքան ժամանակային հաջորդականությամբ, ինչքան՝ տարբեր թարգմանիչների անձնական մախաթանություններով: Տեղյանը նրանցից առանձնացնում է միայն չորրորդ խմբի թարգմանությունները, որոնց մեծ մասը պատկանում է Ստեփանոս Սյունեցու գրչին: Հեղինակն այնուհետև ի մի է բերում բանասիրությանը հայտնի այն բոլոր վաստերը, որոնց համաձայն առաջին (առաջին երեք) խմբի թարգմանությունների համար 7-րդ դարից վաղ բնագրային վկայություններ չկան: Այսպես, Փիլոնի թարգմանություններից օգտվել են Մովսես Խորենացին, Եղիշեն և Մամբրե Վերծանողը, սակայն երեքի ժամանակի խնդիրն էլ, ըստ հեղինակի, վերջնականապես լուծված համարել չի կարելի: Ապացուցված է, որ Իրենեոսի երկերի թարգմանությունները ժամանակակից են Փիլոնի թարգմանություններից (ավերացնենք, իրագործված են նույն թարգմանչի ձեռքով): Իրենեոսի ամենավաղ վկայությունները պատկանում են 7-րդ դարի հեղինակներ Հովհան Կարենցուն և Վրթանես Քերթոդին (Ն. Ակիջյան): Նույնը կարելի է ասել «Պիտոյից գրքի» համար. նրա հետքերը առկա են Դավիթ Հարքացու և Սեբեոսի մոտ (Ս. Բաումգարտներ, Գ. Հովսեփյան)⁷: Տեղյանը Դիոնիսիոս Թրակացու ամենավաղ վկայություն է համարում 6-րդ դարի վերջի հեղինակ Դավիթ Ահաղթի քերականության մեկնությունը: Նրան առավել հավանական է թվում Ակիջյանի այն տեսակետը, ըստ որի դպրոցը հիմնադրվել է 572—575 թթ., և թարգմանությունների

⁷ Այդ իրողությունը լիովին ապացուցված կարելի է համարել՝ F. C. Conybeare. The Age of the Armenian Translation of Irenaeus. — Յուշարձան: Գրական ժողովածույ առթիւ 100 ամեայ յոթելինի հաստատման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811—1811) և 26 սամայ տարեշրջանի «Հանդես ամսօրեայ» ուսումնաթերթի (1887—1811), Վիեննա, 1911, էջ 183—202, Ա. Վարդանյան, Լեզվական ցանկությունների Փիլոնի և Իրենեոսի հայ թարգմանություններու մեջ.— Հանդես ամսօրեայ, 1921, էջ 448—458:

⁸ Մենք փորձել ենք Փիլոնի թարգմանությունների և «Պիտոյից գրքի» համար ավելի վաղ վկայություն գտնել. տե՛ս Խորենացու երկու աղբյուրի ժամանակի հարցի շուրջը.— Բանբեր Մատենադարանի, 18 (հրատ. ընթացքում). այդ հանգամանքը վերացնում է Խորենացուն և Եղիշենի 5-րդ դարով թվագրվող խոշորագույն մեկը:

մեծ մասն իրագործվել է մինչև 809 թ.: Արիստոտելի թարգմանությունների համար Տերյանը դիմում է մի հիշատակարանի, ըստ որի «Էակաց գիրքը», որ նա համարում է Օրգանոնի միման վրա գրված մի դասագիրք, ստեղծվել է 578—77 թթ.: Այդ ժամանակ է կատարվել և Արիստոտելի մյուս երկերի թարգմանությունը Պոլսում գտնվող Հովհաննես Գաբրելեանցի կաթողիկոսի միջավայրում: Հարկ ենք համարում նշելու, որ ըստ Ա. Արևշատյանի, այդ հիշատակարանը վերաբերում է Եվտիմիոս Կոստանդնուպոլսեցու «Յաղագս զանազանության քննության և առանձնատրությունների թարգմանությանը»⁹: Նույն ժամանակաշրջանին է վերագրում Տերյանը Դավիթ Ամհաղթի երկերի թարգմանությունը, որպես հիմք ընդունելով Դավթի կողմից Օլիմպիոդորոս կրտսերի հիշատակությունը, որը գլխավորում էր Ալեքսանդրիայի Նորպատկանական դպրոցը մինչև 564/5 թթ. (և իր ուսուցիչն էր): Դավիթը պետք է հունարան դպրոցի կենտրոնական դեմքերից մեկը եղած լիներ: Արիստոտելի թարգմանությունների ազդեցությունը դիտվում է Ամահիա Ծիրակացու «Յաղագս շրջագայության երկնից» երկում: Տերյանը նշում է, որ մույն 8—7-րդ դարերում են իրագործվել Արիստոտելի աստղերեն թարգմանությունները, որոնք, ըստ հետազոտողների, մույնպես կրում են հունարենի շարահյուսության ազդեցությունը (հմտ. սույն ժողովածուում Ա. Բրդի հոդվածը):

Զորորոդ խմբի թարգմանությունները կապվում են Ստեփանոս Սյունեցու անվան հետ, որոնք նա, ըստ հիշատակարանների վկայության, իրագործել է 712 և 717 թթ.: Հունարան թարգմանությունների լեզվի ազդեցությունը կրել են մի շարք ինքնուրույն հեղինակներ. այն դիտվում է քերականության մեկնություններում, Ստեփանոս Սյունեցու, Վրթանես Քերթոզի, Անահիա Ծիրակացու, Դավիթ Հարքացու, Թեոդորոս Քոթեմալորի և նրա աշակերտներ Սահակ Զորափորեցու և Հովհան Օձնեցու մոտ¹⁰: Այս շարքում Տերյանը նշում է նաև Մովսես Խորենացուն և Խոսրովիկ թարգմանչին: Նա նկատում է, որ հունարան դպրոցի ներկայացուցիչները նպատակ չունեին թարգմանելու Պլատոնի, Արիստոտելի կամ Փիլոնի քոլոր ստեղծագործությունները, այլ

միայն այն երկերը, որոնք կարելի էր օգտագործել ուսուցողական նպատակով: Ուշադրության արժանի է այն վաստը, որ դրանք նորալատոնականների կողմից այդ հեղինակների մեկնաբանվող հիմնական գործերն էին:

Եթե միշտ է հունարան դպրոցի գործունեությունը տեղադրելը Կոստանդնուպոլսում 570—780 թթ., ապա ժամանակի բյուզանդական դպրոցների ծրագրի մասին ուղղակի վկայությունների բացակայության պայմաններում, հայերեն թարգմանությունների աճողական վկայությունը կարևոր է բյուզանդական կրթության պատմության համար, քանի որ հունարան դպրոցի գործունեության շրջանակները պետք է հասկանալիս մենք բյուզանդական դպրոցների ծրագրին: Տերյանը նշում է հունարան դպրոցի մեծ ավանդը և հայ մտքի պատմության մեջ:

Պոլոս Լևոն Զեքյանի հոդվածը կոչվում է «Եղիշեի երկը որպես հայկական եկեղեցու եկեղեցաբանության վկայություն»¹¹ (Էջ 189—187) և սկսվում է հեղինակի այն ելակետային դրույթից, որ Եղիշեն 5-րդ դարի հեղինակ է և որ նրա անունը կողո քոլոր երկերը իրոք պատկանում են նրա գրչին: Հոդվածի հետագա շարադրանքն ուղղված է քաջահայտելու, թե ինչպիսի տարբեր հասկացություններ է խորհրդանշում եկեղեցին Եղիշեի մոտ: Առաջին հերթին այն հոգևոր, աստվածային գերբնական էություն է, որը սերտորեն կապված է եկեղեցու՝ որպես մշակութային խորհրդանշի հետ: Նա հանդես է գալիս որպես մշակութային կառույց, սակայն նրա ողջ էությունը կարող է արտահայտվել միայն հոգևոր իրականության մեջ: Եկեղեցին քոլոր հավատացյալների մայրն է: Բացի այդ այն քննարկվում է որպես «ուխտ»: «Ուխտ եկեղեցույ» արտահայտությունը Եղիշեի մոտ տերմինաբանական արժեք ունի՝ «կղեր» նշանակությամբ (նրա հոմանիշներն են՝ «ուխտ քահանայության», «ուխտի մանկունք»): Այն հուղայա-աստրական ծագում ունի: Աստվածաշնչում հանդիպում են «որդիք ուխտին» (Եզեկ. 30.5), «ուխտ քահանայության» (Նեեմ. 13.29) արտահայտությունները: «Ուխտի որդիները» և «ուխտի դուստրերը» (bney և bnat (yāmad) աստրական վաղ քրիստոնեության մեջ կուսակրոն և ճգնական

⁹ С. С. Аревшатян. Формирование филологической науки в древней Армении (V—VI вв.), Ереван, 1972, сс. 232—235.

¹⁰ Ավելացնենք նաև՝ «Պիտոյից գրքի» մեծագույն՝ ոչ թարգմանական մասում:

¹¹ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը մտադիր է հանդեսի առաջիկա համարներից մեկում թարգմանաբար վերահրատարակել այս հետաքրքիր հոդվածը:

կյանքին նվիրված մարդիկ են: Հայկական միջավայրում այդ արտահայտությունները՝ լայն իմաստ ստանալով, մատնանշում են եկեղեցու քահանայապետությանը պատկանող բոլոր մարդկանց, ամբողջ հոգևորականությունը: Եղիշեի մոտ ավելի լայն իմաստով «ուխտ» նշանակում է ամբողջ քրիստոնեական համայնքը, որ կոչվում է նաև «ուխտ քրիստոնեություն»:

Թմառ Մեթուզն իր «Էջմիածնի Ավետարանի (Երևան, Մատենադարան, ձեռ. 2374) վաղ հայկական պատկերագրության ծրագիրը» հոդվածում (էջ 199—215) ընդունում է Սիրարփի Տեր-Ներսեսյանի՝ Էջմիածնի Ավետարանի չորս եզրափակիչ մանրանկարների վաղ թվագրումը (6-րդ դ.), նաև այն ամրապնդող գուգահեռներ է բերում ասորական, հռոմեական, քուզանդական և սասանյան արվեստից, ինչպես նաև գրականությունից, որոնք նպաստում են նրանց յուրահատուկ պատկերագրության որոշակի խորհրդանշանների բացահայտմանը: Այսպես, առաջին՝ «Ավետումը Ջաքարիային» (Ղուկ. 1. 19) մանրանկարի ինչպես թեման, այնպես էլ կոմպոզիցիան և որոշ տարրեր գուգահեռներ են գտնում (ճիշտ է, սակավաթիվ) վաղ քրիստոնեական արվեստում: Վերջիցներից կարևոր են հրեշտակի սիրամարգի թևերը, որոնք շեշտում են, որ նա Գաբրիել հրեշտակապետն է, և Ջաքարիայի Հիմ կտակարանային քահանայի հանդերձանքը: «Գիրք տղայութեան Քրիստոսի» պայականոն ավետարանում Ջաքարիան «քահանայապետ» է հորջորջվում, իսկ հագուստի նկարագրությունը կարելի է գտնել Ելից գրքում: Այստեղ իր արտահայտությունն է գտել հայկական և ասորական եկեղեցիների աստվածաբանությունը, ըստ որի Քրիստոսի քահանայությունը Հիմ կրտակադանի քահանայության շարունակությունն ու ժառանգն է: Այս առիթով հեղինակը հիշում է նաև այն փաստը, որ Հայաստանում քահանայությունը ժառանգական էր, որ Ադոնցը կապում էր հայկական հասարակության նախարարական կառուցվածքի հետ:

«Ավետում» թեման վաղ քրիստոնեական արվեստում ամենատարածվածներից էր: Աստվածածինը զբաղված է մանելով, և այդ մանրամասնը հիշատակվում է «Տղայութեան ավետարան»-ում: Ազնվագարմ կնոջ այդ զբաղմունքը, մանավանդ ամուսնու բացակայության ընթացքում, ընդհանուր տեղի էր հունա-հռոմեական արվեստում և գրականության մեջ (հմտ. Ռդիսեսին սպասող Պենելոպեին): Աստվա-

ծամայրը, տեսնելով հրեշտակին, շփոթված ձեռքը տարել է ծնոտին, որ դասական արվեստում այդ զգացմունքն արտահայտելու սովորական շարժում էր, և որի գուգահեռները կան նաև 8—7-րդ դդ. արվեստում:

«Մոզերի երկրպագությունը» մանրանկարում մոզերը, ի տարբերության ժամանակի արվեստում սովորական փոյուզիական հագուստների, կրում են իսկական գրադաշտական մոզերի հագուստ, քանի որ նրանք իրական երևույթ էին Հայաստանի համար: Նրանց պատկերներում առկա են և թագավորական հասկանիշներ, որ ամրապնդվում է «Տղայութեան ավետարանի» վկայությամբ: Մեթուզն բացատրում է նաև երեք մոզերի երեք հասակների, մանուկ Քրիստոսին ամփոփող ձվաձև լուսապսակի (մանդորլայի) խորհրդանշական իմաստը: Լուսապսակը շեշտում է նրա հավերժական, աստվածային էությունը, մարմնավորված մարդկային բնության մեջ: Այսպիսի պատկերը համահնչում էր հայկական եկեղեցու հակառակուրդական և հակաքաղկեդոնական ուղղվածությանը 6-րդ դարում:

«Մկրտություն» մանրանկարի պատկերագրության մեջ արտահայտվել է մկրտությունը ծննդյան հետ կապելու հայկական ավանդույթը: Ծրցանակում պատկերված չորս ավետարանիչների նման արտաքինը և հավասար հասակը հիմնավորում են մանրանկարների վաղ թվագրումը: Հետագա դարերում ավետարանիչները սովորաբար հանդես են գալիս որպես երկու ծերունի և երկու երիտասարդ: Նրանց դեմքերի միջև պատկերված տասը հավալուստները ելրոպայում և Ասիայում շատ տարածված մոտիվ են: Սակայն հավալուստի սկահի մեջ պատկերն իր միակ գուգահեռն է գտնում Ռաբուլայի աստրական ավետարանում: Մեթուզն եզրակացնում է, որ չնայած Էջմիածնի ավետարանի մանրանկարները շատ կարևոր գուգահեռներ են հայտնաբերում հարևան մշակույթների հետ, սակայն դա տարաբնույթ տարրերի էկլեկտիկ միացություն չէ, այլ յուրահատուկ վաղ հայկական արվեստ:

Ժողովածուն եզրափակում է Հեկեն Էվանսի «Երուսաղեմի Ղամասյոսի դարպասի մոտ գտնվող հայկական խճանկարի ոչ դասական ակունքները» հոդվածը (էջ 217—222): 1894 թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել է մի խճագարդ հատակ, որ պարունակում է հայերեն ամենավաղ արձանագրությունը. «Վասն չիշատակի և փրկութեան ամենայն հայոց, որոց զան-

ուսնս տէր գիտէ» (6-րդ դ., որ հաստատում է նաև կատարման ոճը): Խճանկարն իր հիմնական գծերով նման է Պաղեստինի և Ասորիքի շրջանում դասական բյուզանդական ոճով կատարված պատկերներին. նույնն է խաղողի որթը, որի գալարները շրջանակ են կազմում թռչունների, կենդանիների, բույսերի և մարդկանց պատկերների համար: Սակայն այս հայկական խճանկարում պատկերված են քաջառապես թռչուններ, որոնք խորհրդանշալից դեր են խաղում: Հեղինակը կապում է այդ սյուսկներն արծաճագրության թռվանդակության հետ, այսինքն՝ թռչունները հանգուցյալների պաշտպանն են: Եվ իսկապես, Գրիգոր Լուսավորչի Վարդապետության մեջ և պաշտամունքային բնագրերում թռչունները խորհրդանշում են հարության, մոր կյանքի, մարդկային հոգու

գաղափարը: Հունա-հռոմեական դիցաբանության մեջ այդպիսի խորհրդանշան չկա: Հեղինակը ենթադրում է, որ այն կարող էր գալ զրադաշտականությունից: Խաղողի որթը վաղ քրիստոնեական ասորական հեղինակների մոտ հանդես էր գալիս որպես տառապանքի, մահատալության սիմվոլ: Կենտրոնում պատկերված արծիվը Քրիստոսի խորհրդանշանն է: Այսպիսի նույնացում կարելի է գտնել Եփրեմ Ասորու մոտ: Նա պիտի ազատագրի իրենից վերև տեղադրված վանդակում գտնվող թռչունին, որը մարդկային հոգու խորհրդանշն է: Այսպիսով, չնայած բյուզանդական ավանդության հետ ունեցած իր առնչությանը, այս հայկական խճանկարի պատկերների ծագումը դասական չէ:

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ





Յ Ո Ւ Յ Ա Կ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ ՆՈՐ ՍՏԱՅՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ*

№ 851
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՆԿԱՐ
(Ներսէս Ե. Աշտարակեցի)

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թերթերը՝ 1:— Մեծութունը $54.7 \times 37.1 \times 0.1$ սմ.:
— **Նյութը՝** կեղտոտած մաստ ստվարաթուղթ:—
Կազմ՝ չունի:— Պահպանակ՝ չունի:— Վիճակը՝ քա-
վայար:— **Գրութունը՝** երկայունակ:— **Դատարկ
թղթերը՝ 1բ:— Տողերը՝ 4+5:— Գծումներ՝ չունի:—**
Գիրը՝ մոտգիր:— **Ջարդագրութունը՝** պլակատի
կենտրոնում կա Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթո-
ղիկոսի (1843—1857 թթ.) օվալաձև ուն յուսա-
նկարը (18×12.5 սմ. չափսերով), որի երկու կող-
քերիմ կա Ներսիսյան անտառի և լճի փոքր նկար-
ները, ներքևում՝ Ներսիսյան ճեղքոր դպրոցի լու-
սանկարը, իսկ վերևում էլ նկարված է Ռայրապե-
տական թաղը, իսպնիսի և գավազանը, մաս երկու
Ռրեշտակներ, որոնք թագի ներքևի մասում բռնած
են յաջված մի գիրք: Պլակատի ներքևի կլետրո-
նական մասում կա Ռայրապետական Էմբլեման,
որի կենտրոնում գրված է ռուսերեն H տառը (Ներ-
սէսի սկզբնատառը): Բացի այդ այս բոլորի շուրջը
նկարված են գեղարվեստական ոճով ծառի մաստ
ու քարակ ճյուղեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատմի-
րաբանը՝** անհայտ (շատ հավանաբար Թիֆլիսի
Ներսիսյան ճեղքոր դպրոցը):— **Մադկողը՝** արվես-
տագետ Ներսեսով:— **Ժամանակը՝** 1874 թ.:— **Վայ-
րը՝** Վիեննա (Ավստրիա):— **Մանրագրությունը՝**
պլակատը Վեհափառ Հայրապետին նվիրել է Լոմ-
դոնում Մանչեստրի բնակիչ Գաբրիել Սուլթանյանը
1883 թ. մայիսի 8-ին: Մայր Աթոռ վերադարձին
Վեհափառ Հայրապետն էլ այն հանձնել է Զեռա-
գրատուն 1883 թ. հունիսի 8-ին:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1887
թվականի № № ԺԱ.—ԺԲ.—ից:

(Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսի գլխա-
վերևի մասում ռազմած գրքի երկու էջում գրված
է)

Որոց դարիս գործել իցե՛ ի յարուի նեմաց.
Եւ որոց դշար սրաքնալ՝ ի յարուի դատաւա-
նաց:

(Ներսիսյան անտառի և լճի տակը գրված է)

Լիճ և անտառս Արսոյ էջմիածնի:

(Ներսիսյան դպրոցի տակը գրված է)

Ներսիսեան ճեղքոր դպրոց:

(Ընդհանուր պլակատի ներքևի ձախ ու աջ մա-
սում գրված է)

Պաշտպան Եկեղեցւոյ
Ներսէս Հինգերորդի:

(Սքա ներքևում էլ, Հայրապետական Էմբլեմայի
երկու կողմում գրված է Ռուսկալը, երկու սյունակի
վրա)

Զոյգ գլուխքնոց իջեալ յերկմից՝ պարեմ ի թևս
զբաճանկիդ,
Կուլեայ ի գիրկս զլամն Յի՛ և մէն մի ծայր
ժապաւիճիդ.
Պինդ պատատեալ ը հստեալ ճղկամի Հայկեան
սևովդ,
Կոսսեմ ի մի՛ շրջամակի՝ լուսեմկար ջու՛մ
պատկերիդ:

Եւ թարմ ոստունքն փաթոյթեալ՝ քում Դպրոցաւոյ
ճեղքաւոյ,
Զխոյս յստոյն խոտոյս հարթեմ՝ սլահել անշարժ և
ամապար.
Զորում մանկունքս Հայկադունք ը հովանեաւ տանդ
ծնկեալ,

Ջրով արտասուող մաղթենք էին, զի քոյղ վաշխաց
նսնցե կրկին
Հայրենասէր մոգի քոյին:

(Վերոնիշյալը ձեռագիր գրության լուսապատճենն
է մանված սովորաբարի վրայ):

ՀԻՈԱՏԱԿԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պատկառի վերևում գրված է նորագրով)
Ի յիշատակ յիսուն տարուայ գոյութեան Ներսես-
եան Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցին Տիխիալոյ:
(Պատկառի ցերեկի մասում գրված է)
Ձախումъ Собоственностью Художника Нерсеса.
Աջումъ Компоновать посмерщается.
Ներքևումъ К. К. Придвор Литогра. Г. Раф-
феиантени въ Вѣнѣ.

(Իսկ հայրապետական էմբլեմայի շուրջ գրված է)
Վերևումъ НЕРСЕСЪ V
Патріархъ персѣхъ Армянъ.
Ներքևումъ NERSES V
Patriarche de tous les Arméniens.

№ 852

ՈՒՂԵՐՁ

(Խրիմյան Հայրիկ)

(Հունարեն)

Թերթերը՝ 1:— Մեծությունը՝ 55,4×38,5×0,1 սմ.:
— Նյութը՝ կեղտոտած մաստ սովորաբար:—
Կազմ՝ չումի:— Պահպանակ՝ չումի:— Վիճակը՝ աճ-
բավարար:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ
թղթերը՝ 1ք:— Տողերը՝ 25:— Գծումներ՝ չումի:—
Գիրը՝ ձեռագրով գրված տպագիր հումարեն:—
Ջարդագրություն՝ բնագրի վերևի մասում կամ ծաղ-
կազարդեր, որոնք այս լուսապատճենում հատակ
չեն երևում:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝
Մանչեստրի հույն համայնքի առաջնորդ Մորոս
արքեպիսկոպոս Իկոնոմոս:— Մաղկողը՝ անհայտ:—
Ժամանակը՝ 17/28 ուլյիի 1878 թ.:— Վայրը Ման-
չեստր (Անգլիա):— Մանրագրություն՝ ուղերձը
Վեհապետ Հայրապետին ճվիրել է Լոնդոնում Ման-
չեստրի բնակիչ Գաբրիել Սողոմոնյանը 1888 թ.
մայիսի 8-ին: Մայր Աթոռ վերադարձին Վեհապետ
Հայրապետն էլ այն հունձնել է Ձևագրատուն
1888 թ. մարտի 8-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ,
էջ 87):

№ 853

ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝
45,4×35 սմ.:— Նյութը՝ սպիտակ մաքուր մազա-
ղաթ:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:—

Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ
թղթերը՝ 2ք:— Տողերը՝ թ. 1ա՝ 24 և թ. 1ք՝ 0:—
Գծումներ՝ չումի:— Գիրը՝ մեծ նորագիր:— Ջարդա-
գրություն՝ չումի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրա-
տուն՝ Կոլլաբ գավառի (Նախիջևան) Ռաջ Ռասս-
րակություն:— Ժամանակը՝ 20 օգոստոսի 1898 թ.:—
Վայրը՝ Գողթան գավառ (Նախիջևան, այժմ Ադըր-
բեյջանում):— Մանրագրություն՝ ձեռագիրն ստաց-
ված է Վեհապետ Հայրապետին 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ,
էջ 82):

№ 854

ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝
45×30 սմ.:— Նյութը՝ սպիտակ մաքուր թուղթ:—
Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝
լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ
թղթերը՝ 1ք—2ք:— Տողերը՝ 16:— Գծումներ՝ չումի:— Գիրը՝
շեղագիր:— Ջարդագրություն՝ գործարանային տպա-
գիր թուղթն ունի գունավոր գույնցիկ նկարներ:
Վերևի մասում կա կանաչ տերեւնորով կազմված
մի մեծ պտուկ, որի ձախին նստած մի կին ձախ
ձեռքով թուղթ է բռնում, իսկ աջով՝ գրիչ: Պատկի
սեղին էլ նստած մի ուրիշ կին կա, որ աջ ձեռքին
մի գալազան ունի, որի վերևի մասում թուղթն
բացված կրկու թևեր կան, իսկ ներքևում էլ գա-
լազանին փաթաթված կրկու օձ: Կնոջ ձեռքերի վրա
կա կրկու վարդ: Ձեռագրի ներքևի երկու անկյու-
նում կա մեկական սիրուն մեծ վարդ: Ամբողջ ձե-
ռագիրն առնված է գեղեցիկ շրջանակում: Այս րո-
տը տպագիր է:— Գրիչը՝ Սիմեոն Ստ. Սիմոնյան:
— Պատվիրատուն՝ Ս. Ս. Սիմոնյանի ընտանիքը:—
Մաղկողը՝ անհայտ:— Ժամանակը՝ շատ հավանա-
բար 1898 թ.:— Վայրը՝ Ֆոքշան (Ռումինիա):—
Մանրագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհա-
պետ Հայրապետին 16 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանցի
«Ուղեկրություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի
Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», վա-
ղարշապատ, 1884 թ., էջ 211):

№ 855

ՈՒՂԵՐՁ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝
45×30 սմ.:— Նյութը՝ սպիտակ մաքուր թուղթ:—
Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝
լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ
թղթերը՝ 1ք և 2ք:— Տողերը՝ թ. 1ա՝ 18 և թ. 2ա՝ 36:—
Գծումներ՝ չումի:— Գիրը՝ շեղագիր:— Ջարդագրու-

բյուրն՝ գործարանային տպագիր թուղթն ունի գումար գեղեցիկ նկարներ։ Թղթի վերևի մասում կա լի աղջիկ, հրեշտակի թևերով, որ հագնված է կուպոյտ շոր և աչ ձեռքով բռնած կանաչ տերևներով հյուսված մի պսակ։ Նրա աչ ու ձախ կողմում, նստարանի վրա նստած են մեկական վոլքրիկ աղջնակներ, դեղին և կարմիր շոր հագած, հրեշտակի թևերով, որոնց ձեռքին գրքեր կունենան։ Թղթի երկու յուսանցքում կան գումար գեղեցիկ պարուկեր, մրգերով ճյուղեր, կանաչ տերևներ և ճաշիկներ, ինչպես նաև բազմաթիվ իրեր՝ այսպես օրինակի համար կողպեք, մորեմ, աքցան, կարկին, նոսնկյուն քսմոն, նկարակալ, վրձին և այլն։ Այս բոլորը տպագիր է։ **Գրիչը**՝ անհայտ։ **Պատվիրատուն**՝ Ռուսնաքի Թաղական խորհուրդ։ **Ծաղկողը**՝ անհայտ։ **Ժամանակը**՝ 7 օգոստոսի 1888 թ.։ **Վայրը**՝ Ռուսնուք (Բուլղարիա)։ **Ծանոթագրություն**՝ ձեռագիրն ստացված է Վեֆափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.։

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ, էջ 82—83)։

(Վերջում կա Թաղական խորհրդի կտր կնիքը, 4 սմ. տրամագծով, որի շուրջ թուղթը գրված է)

Русская Арменская Община

Թաղական խորհուրդ Հայոց

ի Ռուսնուք։

(Ձեռագիր ամբողջ տեքստը գրված է ոսկեգույն րոնգոլով)։

№ 858

ՈՒՂԵՐԶ

Թերթերը՝ 1։— **Մեծությունը**՝ 88×47 սմ.։— **Նյութը**՝ դեղնավուն հասարակ քարակ թուղթ։— **Կազմը**՝ չունի։— **Պահպանակներ**՝ չունի։— **Վիճակը**՝ ամբողջական, 3—4 տեղ պատված և վնասված է։— **Գրությունը**՝ միայն։— **Դատարկ թղթերը**՝ 1ք։— **Տողերը**՝ 41։— **Գծումները**՝ թուղթ ինքնին գծավոր է։— **Փիրը**՝ չեղագիր։— **Ջարդագրություն**՝ թղթի վերևում մի փոքրիկ խաչ կա, որի ներքևում երկու փոքրիկ հրեշտակներ մի պսակ են բռնած օդում։ Ամբողջ գրությունն առնված է զարդերով նկարված մի շրջանակի մեջ։ Այս բոլորը տպագրված է ոսկեգույնով, իսկ միջի ուղեղն-գրությունը գրված է վարդագույն թանաքով։— **Պատվիրատուն**՝ Սլիվկինի հայոց օժանդակ ընկերություն։— **Ժամանակը**՝ 27/8 հուլիսի 1888 թ.։— **Վայրը**՝ Սլիվկին (Բուլղարիա)։— **Ծանոթագրություն**՝ ձեռագիրն ստացված է Վեֆափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.։

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ, էջ 83—84)։

(Ձեռագրի ներքևի ձախակողմյան անկյունում կա ձվաձև մի կնիք, 4×2.8 սմ. չափերով, որի կենտրոնում երկու անոթեր իրար են բռնած, իսկ շուրջ թուղթը գրված է ոսկեգույնով)։

«Օժանդակ Ընկերություն»

Իսկանա

Տ. 1880:

№ 857

ՈՒՂԵՐԶ

Թերթերը՝ 2։— **Պրակները**՝ 1։— **Մեծությունը**՝ 85.5×22.9 սմ.։— **Նյութը**՝ սպիտակ մաքուր հաստ թուղթ։— **Կազմը**՝ չունի։— **Պահպանակներ**՝ չունի։— **Վիճակը**՝ լավ։— **Գրությունը**՝ միայն։— **Դատարկ թղթեր**՝ չունի։— **Տողերը**՝ 28։— **Գծումներ**՝ չունի։— **Ջարդագրություն**՝ չունի։— **Փիրը**՝ Արշակ Տեր-Միքայելյան։— **Պատվիրատուն**՝ Երջու հայ հայաբնակություն։— **Ժամանակը**՝ 27 օգոստոսի 1888 թ.։— **Վայրը**՝ Ծուշի (Լեռնային Ղարաբաղ)։— **Ծանոթագրություն**՝ ձեռագիրն ստացված է Վեֆափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.։

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի «Ուղեորություն Տ. Տ. Մկրտիչ Վեֆ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1884 թ., էջ 277)։

№ 858

ՈՒՂԵՐԶ

Թերթերը՝ 2։— **Պրակները**՝ 1։— **Մեծությունը**՝ 84×21 սմ.։— **Նյութը**՝ մաքուր սպիտակ հաստ թուղթ։— **Կազմը**՝ չունի։— **Պահպանակներ**՝ չունի։— **Վիճակը**՝ լավ։— **Գրությունը**՝ միայն։— **Դատարկ թղթերը**՝ 2ա—2բ։— **Տողերը**՝ 17։— **Գծումներ**՝ չունի։— **Փիրը**՝ չեղագիր։— **Ջարդագրություն**՝ չունի։— **Փիրը**՝ անհայտ։— **Պատվիրատուն**՝ Սուչավայի համայնք։— **Ժամանակը**՝ 15/27 օգոստոսի 1888 թ.։— **Վայրը**՝ Սուչավա (Ռումինիա)։— **Ծանոթագրություն**՝ ձեռագիրն ստացված է Վեֆափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.։

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի «Ուղեորություն Տ. Տ. Մկրտիչ Վեֆ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1884 թ., էջ 212)։

(Ձեռագրի ներքևում կա կտր մի փոքր կնիք, 2.7 սմ. տրամագծով, որի կենտրոնում նկարված է փոքրիկ մի խաչ, կշեռ և այլն, իսկ շուրջ թուղթը գրված է ոսկեգույնով)։

«Կնիք Սուչավայի հայ ազգապետադ»։

№ 659
ՈՒՂԵՐԸ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ 33×21 սմ.:— Նյութը՝ սպիտակ դիմաց-կում թուղթ:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ր և 2ր:— Տողերը՝ 24:— Գծումներ՝ չումի:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրու-թյուն՝ չումի:— Գրիչ՝ Լևոն Բաքալան:— Պատվի-րատուն՝ Լայպիցի Հայ ճեմարանական ընկերու-թյուն:— Ժամանակը՝ 28 հուլիսի 1883 թ.:— Վայրը՝ Լայպից (Գերմանիա):— Մանոթագրություն՝ ձե-ռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ, էջ 34):

№ 660
ՈՒՂԵՐԸ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $32,2 \times 21$ սմ.:— Նյութը՝ սպիտակ մաքուր դիմաց-կում թուղթ:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 1ր և 2ր:— Տողերը՝ 22:— Գծումներ՝ չումի:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրու-թյուն՝ չումի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Փարիզի Ռայ ուսանողություն:— Ժամանակը՝ շատ հավանաբար 1883 թ.:— Վայրը՝ Փարիզ (Ֆրանսիա):— Մանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապ-րիլ, էջ 34—35):

№ 661
ՈՒՂԵՐԸ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $34 \times 21,2$ սմ.:— Նյութը՝ սպիտակ մաքուր դիմաց-կում թուղթ:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 2ր:— Տողերը՝ 32:— Գծումներ՝ չումի:— Գիրը՝ շեղագիր:— Զարդագրություն՝ չումի:— Գրիչը՝ անհայտ:— Պատվիրատուն՝ Վառնայի Թաղական Խորհուրդ:— Ժամանակը՝ 5 օգոստոսի 1883 թ.:— Վայրը՝ Վառնա (Բուլղարիա):— Մա-նոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ, էջ 35):

(Վերջում կա Թաղական Խորհուրդի կողմից, 9.5 սմ. տրամագծով, որի շուրջ թուրք գրված է հետևյալը).

(Կնետրոնում) Гр. Варна

(Վերջում) Арменска Община

(շուրջը) Թաղական Խորհուրդ Հայաց ի Վառնա:

№ 662
ՈՒՂԵՐԸ

Թերթերը՝ 2:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $42 \times 20,2 \times 0,2$ սմ.:— Նյութը՝ սպիտակ հաստ ըստ-վարություն:— Կազմ՝ չումի:— Պահպանակներ՝ չումի:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Դատարկ թղթերը՝ 2ր:— Տողերը՝ 28:— Գծումները՝ մատիտով քաշված:— Գիրը՝ շեղագիր:— Զարդա-գրություն՝ ստացին էջում սև մատիտով մի մեծ նկար կա: Վերևի մասի կնետրոնում նկարված է Լայպիցապոսական մի խումբ, գավազամ ե խաչ: Աջ կողմը երևում է Արարատյան դաշտը, Մասիս սա-րը, 2—3 ամենից և 2—3 կով: Իսկ թերթի ձախ կիսում կա մեծ նկար, որտեղ վերևում երևում է մի շենք, որի վրա «Դպրոց» է գրված, իսկ ներ-քևում մի աշակերտ դեպի դպրոց է գնում: Թերթի ներքևի մասում երևում են ավերակներ, որոնց մոտ կանգնած է մի կին իր երեխայի հետ, իսկ հեծ-յալ մի մարդ ճիզակի ծայրը մտցնում է կնոջ զը-խի մեջ: Այս տեսարանից մի քիչ վերև մի մարդ, սուրը ձեռքին, աշխատում է պաշտպանել կնոջը և հարձակվել հեծյալ մարդու վրա:— Գրիչը՝ ան-հայտ:— Պատվիրատուն՝ հայ վարժուհիներ և վար-ժապետներ, շատ հավանաբար Թիֆլիսի:— Մաղ-կողը՝ անհայտ:— Ժամանակը՝ շատ հավանաբար 1883 թ.:— Վայրը՝ շատ հավանաբար Թիֆլիս (Վրաստան):— Մանոթագրություն՝ ձեռագիրն ըս-տացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել «Էջմիածին» ամսագիր, 1884 թ., ապրիլ, էջ 35—36):

№ 663
ՈՒՂԵՐԸ

Թերթերը՝ 4:— Պրակները՝ 1:— Մեծությունը՝ $35,9 \times 22$ սմ.:— Նյութը՝ մաքուր սպիտակ դիմաց-կում թուղթ:— Կազմը՝ ուն կաշեպատ տախտակ, որի չափերն են $49,9 \times 30 \times 1,2$ սմ.: Ներսի կողմը՝ նոսրագույն կտավ: Կազմի երեսին ճնշումով և ոսկե-գույն տառերով գրված է հետևյալը.

«Առաքելաշախիղ Հովուական
Աւագի Պառնապան Հրեշտակ
Խրիսեան Հայրիկին
Բագուայ Հայ Երիտասարդութիւնից
1898 թ. օգոստոսի 30»:

(«Խրիսեան Հայրիկին» երկու քառերը միայն պղնձյա տառերով են գրված, յորաքանցյալը 1.5 սմ. երկարությամբ երկաթագրի ունով, և ամրացված են կազմի երեսին): Կազմի վերևի մասում կա մի փոքրիկ թուշում, որպէս աղավանկեալ Ս. Հոգին, որ իջնում է երկնքից: Կերքնում կա եպիսկոպոսական մի խույր, խաչ, օծագլուխ զավազան և Ավետարանի քաջված երկու էջ, որի վրա գրված է հետևյալը. «Ես եմ մովի քաջ, որ դե գանգն իւր ի վերայ ոչխարաց»: Ապա կա մի փոքրիկ աստղ, վեց թևանի, իսկ ներքևում՝ գեղեցիկ մի ծաղկեպսակ, շուրջ 15 սմ. տրամագծով: Այս բոլորը (աղավնի, խույր, ծաղկեպսակ և այլն) արծաթյա է, որ ամրացված է կազմի երեսին: Այս կազմը հայկական արվեստի շատ գեղեցիկ մի նմուշ է: Օձագլուխ զավազանի ծայրամասում երկու տառ (ԵԱ) է փորագրված, որոնք շատ հավանաբար արծաթագործ վարպետի անվան երկու սկզբնատառերն են: Պառնապաններ՝ չունի: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Դատարկ թղթերը՝ 3բ—4բ: Տողերը՝ 30: Գիրը՝ շեղագիր: Զարդագրություն՝ չունի: Գրիչը՝ Կոստանդին Նատիկյան: Պատվիրատուն՝ Բաքվի հայ երիտասարդություն: Ժամանակը՝ 30 օգոստոսի 1898 թ.: Վայրը՝ Բաքու (Ադրբեջան): Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 288):

№ 884

ՈՒՎԵՐՁ

Թերթերը՝ 2: Պրակները՝ 1: Մեծությունը՝ 35.5×22 սմ.: Նյութը՝ դեղնավուն մաքուր դիմացկուն թուղթ: Կազմ՝ չունի: Պառնապաններ՝ չունի: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Դատարկ թղթերը՝ 2ա—2բ: Տողերը՝ 17: Գծումներ՝ չունի: Գիրը՝ շեղագիր: Զարդագրություն՝ չունի: Գրիչը՝ անհայտ: Պատվիրատուն՝ Բաքվի Մարդասիրական ընկերություն: Ժամանակը՝ շատ հավանաբար 1898 թ.: Վայրը՝ Բաքու (Ադրբեջան): Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 275):

№ 885

ՈՒՎԵՐՁ

Թերթերը՝ 2: Պրակները՝ 1: Մեծությունը՝ 35.5×22.4 սմ.: Նյութը՝ դեղնավուն մաքուր դիմացկուն թուղթ: Կազմ՝ չունի: Պառնապաններ՝ չունի: Վիճակը՝ լավ: Գրությունը՝ միասյուն: Դատարկ թղթերը՝ 2բ: Տողերը՝ 28: Գծումներ՝ չունի: Գիրը՝ քարակ բողբոջ: Զարդագրություն՝ չունի: Գրիչը՝ անհայտ: Պատվիրատուն՝ Բաքվի հայ մասարակություն: Ժամանակը՝ շատ հավանաբար 1898 թ.: Վայրը՝ Բաքու (Ադրբեջան): Ծանոթագրություն՝ ձեռագիրն ստացված է Վեհափառ Հայրապետից 18 մարտի 1881 թ.:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

(Տեսնել Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանցի «Ուղևորություն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Երուսաղեմից—Էջմիածին», Վաղարշապատ, 1894 թ., էջ 288):

(Ծարուհակիկի)



«ЭЧМИАДЗИН»

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (МАЙ—ИЮНЬ 1988 г.)

1. О событиях вокруг Нагорного Карабаха.
а) Телеграмма Его Святейшества Католикоса Васкена I генеральному секретарю ЦК КПСС Михаилу Сергеевичу Горбачёву (25 февраля 1988 г.).
б) Слово Его Святейшества по Армянскому телевидению.
в) Слова Его Святейшества в Кафедральном соборе св. Эчмиадзина по время молебна в память сумгаитских жертв (13 марта 1988 г.)— (стр. 3—9).
2. Собрание глав церквей и религиозных объединений Закавказья и Северного Кавказа в Ростове-на-Дону, 2-4 мая 1988 г. (стр. 10—15).
3. Телеграмма—соболезнование Его Святейшества Католикоса Васкена I Священному Синоду Эфиопской Церкви по поводу кончины Его Святейшества Патриарха Абуны Текле Айманота, 7 июня 1988 г. (стр. 16).
4. Сообщение канцелярии Перпопрестольного св. Эчмиадзина, 3 и 14 июня 1988 г. (стр. 17).
5. Церковная хроника, повести, Литургии, проповеди и описание других торжеств в Перпопрестолье за май-июнь месяцы 1988 г. (стр. 18—19).
6. Очередное собрание сторонников мира Советского Союза в Москве, 4-5 марта 1988 г. (стр. 20).
7. Архимандрит Виген Айказян—Очерщина: сессия комиссии «Миссия и евангельство в мире» Всемирного Совета Церквей, 4-5 марта 1988 г. (стр. 21—22).
8. Заседание Конференции Европейских Церквей в Барселоне, 19-24 апреля 1988 г. (стр. 23).
9. Епархиальная жизнь.
а) Годовое собрание клира епархии США и 86-ое годовое собрание представителей епархиальной общины, 9-14 мая 1988 г. (стр. 24—25).
- б) Рукоположение по дивакны в армянской церкви св. Георгия в Тбилиси, 31 января 1988 г. (стр. 26).
- в) Подготовка священнослужителей в армянской епархии Ирака (стр. 27).
- г) Избрание епархиального председателя в Ираке, 4 февраля 1988 г. (стр. 28).
- д) В армянской епархии Египта (стр. 29).
10. П. Акопян—Утерянный и вновь найденный шедевр (исследование)—(стр. 30—34).
11. Иеромонах Абраам Мкртчян—Престол Сюникской митрополии в период правления Орбелянов (исследование)—(стр. 35—43).
12. Л. Тер-Петросян—Сирийская редакция Агатыгехоса (исследование)—(стр. 44—54).
13. Армине Кешиксян—Новая редакция «Комментарий к псалмам» Григория Татеваци (исследование)—(стр. 55—64).
14. Гоар Мурадян—Восток Византизм: процесс становления культуры Ассирии и Армени, Вашингтон, 1988 г. (рецензия)—(стр. 65—71).
15. Нубар Микелян—Список вновь полученных рукописей Перпопрестольным Святым Эчмиадзином (№№ 651—665)—(стр. 72—76).



-ETCHMIADZIN-
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(MAY-JUNE 1988)

1. About the events of the Nagorny Karabakh.
a) the cable of His Holiness Vasken I to the General Secretary of CPSU Mikhail Gorbachev (25-1h February 1988).

b) the message of His Holiness from the Yerevan television (25-1h February 1988).

c) the sermon of His Holiness given in the Holy Cathedral of St. Etchmiadzin, during the solemn requiem service devoted to the memory of the victims of Soomgayit (13-1h March 1988) — (pp. 3-9).

2. The meeting in Rostov of the spiritual heads of Northern Caucasus and Transcaucasia, 2-4-1h May 1988 (pp. 10-15).

3. The cable of condolence of His Holiness to the Holy Synod of the Ethiopian Church, on the occasion of the death of His Holiness the Patriarch Abuna Tekle-Haymanot, 7-1h June 1988 (p. 16).

4. Declarations of the Mother See's Chancery, 3-rd and 14-1h June 1988 (p. 17).

5. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of Church festivities in the Holy See During the months of May and June 1988 (pp. 18-19).

6. Meeting in Moscow of the peace partisans of the Soviet Union, 4-5-1h March 1988 (p. 20).

7. Reverend Vigen Aykazian—The annual session of the commission on „World Mission and Evangelism“, 16-24-1h April 1988 (pp. 21-22).

8. The meeting of the European Churches Conference in Barcelona (Spain), 19-24-1h April 1988 (p. 23).

9. Diocesan news:

a) The annual general assembly of the clergymen of the U.S.A. Armenians oriental diocese and the 86-1h annual assembly of the diocesan delegates, 9-14-May 1988 (pp. 24-25).

b) Diaconal ordination in the Armenian St George Church at Tbilisi, 31-st January 1988 (p. 26).

c) Formation of clergymen in the Armenian dioceses of Iraq (p. 27).

d) Election of the prelate of the Armenians of Iraq, 4-1h February 1988 (p. 28).

e) In the Armenian diocese of Egypt (p. 29).

10. Bion Hakobian—A lost and discovered chief d'oeuvre (study)—(pp. 30-34).

11. Reverend Abraham Mekertchian—The See of the metropolitans of Syonik during the period of the Orbellians' reign (study)—(pp. 35-43).

12. L. H. Der-Bedrossian—The Syriac redaction of the work of Agathangelos (study)—(p. 44-54).

13. Armineh Kyoshgerian—The newly found variant of Grigor of Dakev's „Interpretation of psalms“ (study)—(pp. 55-64).

14. Gohar Mooradian—The eastern side of Byzantium. The period of the formation of Syrian and Armenian culture, Washington, 1988 (literary critic)—(pp. 65-71).

15. Nubar Mikaellian—Index of the manuscripts which the Holy See of Etchmiadzin has received recently (Nos. 651-665)—(pp. 72-76).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(MAI—JUN 1988)

1. A propos des événements de Nagorny Karabakh:

a) Télégramme de Sa Sainteté Vasken Ier adressé le 25 février 1988 à Mikhaïl Gorbatchev, Secrétaire Général du Comité Central du PCUS.

b) Message de Sa Sainteté prononcé le 25 février 1988 à la télévision d'Erévan.

c) Sermon de Sa Sainteté prononcé le 13 mars 1988 dans la cathédrale de Saint-Etchmiadzine lors de la cérémonie de Requiem consacrée aux victimes de Soumgait (pp. 3—9).

2. Réunion des chefs spirituels de différentes communautés religieuses du Caucase du nord et de la Transcaucasie tenue du 2 au 4 mai 1988 à Rostov (pp. 10—15).

3. Télégramme de condoléances de Sa Sainteté Vasken Ier adressé le 7 juin 1988 au Saint-Synode de l'Eglise orthodoxe d'Ethiopie à l'occasion du décès de Sa Sainteté le patriarche Abuna Teklē-Haïmanot (p. 16).

4. Déclarations de la Chancellerie du Saint-Siège d'Etchmiadzine (3 et 14 juin 1988) — (p. 17).

5. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois mai-juin 1988 (pp. 18—19).

6. Réunion des partisans de la paix en URSS tenue à Moscou du 4 au 5 mars 1988 (p. 20).

7. Père Vigen Aikazian — Session annuelle de la commission „Mission et Evangélisation dans le Monde“ du COE tenue à Genève du 24 avril 1988 (pp. 21—22).

8. Réunion de la Conférence des Eglises Européennes tenue à Barcelone du 19 au 24 avril 1988 (p. 23).

9. Vie diocésaine:

a) Conférence annuelle des ecclésiastiques du diocèse des Arméniens des Etats Unis (région orientale) et 85e assemblée des délégués diocésains (du 9 au 14 mai 1988) — (pp. 24—25).

b) Ordination de diacres dans l'église arménienne St. Georges à Tbilissi (31 janvier 1988) — (p. 26).

c) Formation des ecclésiastiques dans le diocèse des Arméniens d'Iraq (p. 27).

d) Election du prélat des Arméniens d'Iraq (4 février 1988) — (p. 28).

e) Nouvelles du diocèse des Arméniens d'Egypte (p. 29).

10. P. Hakobian — „Un chef-d'œuvre perdu et retrouvé“ (étude) — (pp. 30—34).

11. Père Abraham Mekertchian — „Le siège métropolitain de Siounik sous le règne des Oribétiens“ (étude) — (pp. 35—43).

12. L. H. Der-Pétrossian — „La rédaction syriaque de l'œuvre d'Agathange“ (suite) — (pp. 44—54).

13. Arminée Keuchkérlian — „Une nouvelle variante de l'interprétation des psaumes“ de Gregoire de Tatev“ (suite et fin) — (pp. 55—64).

14. Gohar Mouradian — „La partie orientale de l'Empire Byzantin. Période de formation de la culture syriaque et arménienne“. Washington, 1988 (compte rendu) — (pp. 65—71).

15. Noubar Mikaélilian — Index des manuscrits reçus au Saint-Siège d'Etchmiadzine et placés sous les numéros 651—665 (pp. 72—76).